

Համար. Թոփլ. Հայոց Գրքերի Հրատ. Ընկ.

54(075)
0-85

№ 48

ԲՐԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՍԵՐԻԱ


ՊՐՈՓԵՍՍՈՐ ՀՕՍԿՈ

4358

Ք Ի Մ Ի Ա

36 Ակադեմիական

Թարգմանաց Ա. ՄԵԼԻՔ-ԱԼԱԶԱԳԵՐՈՒԹՅԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ԱՐՕՐԱ Տ. ՆԱԶԱՐԵԴՅԱՆ

1892

ՀԱՅՐ - ՀԱՅԿԱԿԱՐԵՐ

Հրատ. Թիֆլ. Հայոց. Հրատ. Ըսկ.

530
135-10

№ 48

54(075)
P-85 սը

ՏԱՐՄԱԿԱՆ ԶԵՐՆԱՐԿՆԵՐԻ ՍԵՐԻԱ.

ՊՐՈՓԵՍՍՈՐ ՌՕՍԿՈ

Ք Ի Մ Ի Ա

100 |
233
232
100 |
233
232

36 նկարներով

2002

Թարգմանեց և ՄԵԼԻՔ-ԱԼԱԶԱՎԵՐԴԵԱՆ

— — — — —

Թ Ի Գ Լ Ի Ա

ՏՊԱՐԱՆ „ԱՐՈՐ“ Տ. ԽԱԶԱՐԵԱՆ

1892



2010

15333

ԱՆՀՐԱԺԵՇՏ է ՄԻՒՋԵՒ ԿԱՐԴԱԼԸ ՈԽՂՂԵԼ ՀԵ-
ՏԵՒԵՈԼ ԳԼԽԱԽՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ.

Երես	Մոռ	Մակուած է	Ափափ լինի
17	19	թէ ածխից	թէ ածխի, թէ
20	12	կ	
25	23	մարդիկ	մարդիկ
33	24	թթուածինից	թթուածինից
37	10	ընդուկութիւն	ընդունակութիւն
39		փակագծերի մէջ գրած տառերը աւելորդ են	
42	22	ծայրի վրայ)	ծայրի վրայ
43	4	սպասել	սպասել
53	15	գաջ	գաճ
55	11	(¹ մալսալ)	(³ մախալ)
62	22	գաղային	գահային
89	18	մենք	Մենք
93	10	մարդանի	մանդանի
101	3	այն	այդ
108	15	կւարցը	կվարցը
108	17	սիկիլիոն	սիլիկիոն
111	21	մնան	նման
122	3	գտնենք	գցենք
123	7	մէջ	հետ
123	12	բուռ	բուռն
128	8	և խառնուրդը	խառնուրդը և
144	12	կալիի բորակատ	կալիոնի բորակատ
"	"	և բորակ և վերցնում եմ բորակ	
"	14	կալինական	կալիոնական
151	17	Փարիդէյ	Փարէդէյ
153	15	կ և վերցնել	և վերցնել
157	20	Քարաքների	Քարաքոսների
159	29	թթուածին	թթուածնի
160	28	նու	նու
163	3	,	

Հօն. Պենզ. Տիֆլիս 3-րդ Ֆեվրալ 1892 թ.

Տիպոգրաֆія „АРОРЪ“ Տ. Յ. Նազարյանъ

ԿՐԱԿ. — ՕԴ. — ԶՈՒԲ. — ՔՈՂ.

1. Ահաւասիկ շրս մարմին, որոնք մեզ
ամենքիս էլ քաջ յայտնի են. աշխատենք
իմանալ՝ թէ ի՞նչ է սովոր եցնում՝ մեզ զի-
տութիւնը այդ մարմինների մասին:

Ս.լդ մարմինների ուսումնասիրելը ամբողջ
բնութեան ուսումնասիրութեան մի մասն է
կազմում, որովհետև նոքա գոյութիւն ունին
բնութեան մէջ։ Մենք կարող ենք նրանց
վերցնել և հետազօտել. մարմինների այդ տե-
սակ վերցնել ու հետազօտելը կոչւում է փորձ
(Եկսպերիմենտ):

Այն ամենը, ինչ որ մեզ յայտնի է շրջա-
պատող աշխարհի մասին, մենք իմացել ենք
դիտողութեան եւ փորձի միջոցով։ Թէ ի՞նչ
է կատարվում այն ժամանակ, երբ այրվում է
կրակը, կամ ի՞նչպէս է օղը պահպանում մար-
մինների այրուիլը կամ նպաստում բոլսերի
աճմանը, ի՞նչ նիւթերից են բաղկացած ջուրը
և ուրիշ բոլոր մարմինները, որոնք գտնւում
են հողի վրայ կամ նորա տակ,—այս բոլոր

Երեսոյթների հետազօտելը և բացատրելը վերաբերում է Քիմիա կոչուած գիտութեան:

Աշխատենք այժմ քիչ ու շատ ծանօթանալ այդ հետաքրքիր մարմիններին. բայց նախ և առաջ տեսնենք, թէ ինչ են նշանակում այս խօսքերը՝ պինդ մարմին, հեղուկ և գազ: Հողոր, որի վերայ մենք ապրում ենք, պինդ մարմին է. հողի կամ գետնի վերայ հոսող ջուրը հեղուկ է, իսկ երկրագունդը շրջապատող օղը գազ է: Սակայն դա բաւական չէ. մենք պիտի իմանանք նաև՝ թէ ինչ նիւթերից են բաղկացած այդ մարմինները և ինչ կերպով կարելի է ստանալ նրանց բաղադրիչ մասերը: Բայց օդի, ջրի և հողի մասին խօսելուց առաջ կանգ առնենք կրակի վերայ, որի մասին մենք դեռ շատ քիչ բան գիտենք:

§ I. Կ Ր Ա Կ

2. Ի՞նչ է կատարում, եթե ճրագը այրում է:

Ճրագի մոմը, ինչպէս և նորա պատրոյզը հետզետէ փոքրանում են և վերջապէս երկուսն էլ անհետանում են՝ մոմն էլ, պատրոյզն էլ: Ի՞նչ եղաւ մոմը: Նա կորաւ, նա էլ չէ երեսում: Բայց արդեօք ոչնչացաւ նա բոլորովին: Այս, մեր աչքի համար անշուշտ ոչնչա-

ցաւ. բայց միթէ մեր աչքի համար չէ ոչնչանում և նաւը, երբ նա ափերից դէպի ծովն է հեռանում: Սակայն մենք գիտենք, որ նաւը այնուամենայնիւ կալ, թէև այլ ևս չենք տեսնում. նոյնպէս և շաքարը, երբ գցում ենք տաք թէլով լիքը բաժակի մէջ, կարծես ոչնչանում է, բայց մենք հաստատ գիտենք, որ իսկապէս շաքարը չէ կորչում, որովհետև թէլը քաղցրանում է նրանից: Ուստի մենք ուրիշ կերպ պէտք է լմանանք՝ թէ ուր կորաւ այրուած ճրագի մոմը. մենք այս հարցը պիտի առաջարկենք բնութեան և նա պիտի պատասխանէ մեզ. և միշտ, երբ բնութեան մի որ և է հարց ենք առաջարկում, եթէ միայն այդ հարցը առաջարկուած լինի ինչպէս հարկն է, ստանում ենք պարզ և որոշ պատասխան: Մենք պիտի փորձ անենք և եթէ մեր փորձը պատշաճաւոր կերպով լինի, անպատճառ կը հասնենք մեր նպատակին և կըստանանք այն տեղեկութիւնները, որոնք մեզ հարկաւոր են:

1. Փորձ: Վառենք ճրագը և դնենք մի մաքուր և թափանցիկ՝ ապակեալ՝ նեղ բերանով՝ շիշի մէջ (նկար 1). մի քանի րոպէից յետով կը նկատենք, որ ճրագի լոյսը հետզհետէ նուազում է և վերջապէս հանգչում է:

Սա առաջին բանն է, որ մենք պիտի



1. Նկար

նկատենք. յետու պիտի աշխատենք բացատրել այդ երևոլիթը, այսինքն՝ թէ ինչո՞ւ է ճրագը հանգչում: Դորա համար տեսնենք, թէ արդեօք շիշի օդը միեւնոյնը մնաց, ինչ որ առաջ էր, երբ նրա մէջ ճրագը չէր վառում, թէ փոխուել է: Վերցնենք մի քիչ կրածին պարզ ջուր^{*)} և ածենք նախ մի այնպիսի շիշ, որի մէջ բոլորովին չըկար ճրագ կամ վառուած մոմ և ապա ածենք այն շիշի մէջ, ուր գրուած էր վառուած մոմ. մենք իսկոյն կը նկատենք զանազանութիւնը: Առաջին գեպքում կրային ջուրը մնում է պարզ և թափանցիկ, իսկ երկրորդ գեպքում՝ ընդհակառակը—նա յանկարծ պղտորւում է և գառնում է կաթնագոյն: Ուրեմն՝ մոմի ալրուելուց շիշի օդը փոխուել է. այդ կաթնային պղտորութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կաւիծ և այս կաւիծը առաջացաւ կրից և բնածիական

*) Այս ջուրը կարելի է պատրաստել հետեւալ կերպով. վերցրէք մի կտոր չըհանդցրած կիր և դրէք ջրի մէջ. մի քանի ժամից յետոյ այդ ջուրը խառնեցէք և թողէք որ հանդիսաւ մնայ մինչև պարզուելը:

Թթվառափակ: Բնածիական թթվառափակ (սոլոյա կислотա—acide carbonique) օդի նման մի անգոյն և անտեսանելի գազ է, որը—ինչպէս փորձը ցոյց է տալիս—պղտորացնում է պարզ կրային ջուրը և հանգնում է վառուող մոմը: Մոմի մի մասը ալրուելու ժամանակ վերածուել է այս բնածիական թթվառափազին, այսինքն՝ ալրուած մոմի ընածուիը կամ՝ ածիածինը գտնուում է այս անտեսանելի գազի մէջ: Միւնոյն ժամանակ դուք անկասկած նկատեցիք, որ բնածիսի մի մասը հեռանում է չալրուած ծիսի կամ մըի ձեռով. և արդարեւ, եթէ վերցնէք մի սպիտակ թղթի թերթ ու արագութեամբ դիպցնէք այդ թերթը ճրագի բոցին, այնպէս որ թուղթը չալրուի, դուք կը նկատէք, որ թղթի վրայ կազմուում է ածիսի կամ մըի մեւ օղակ:

3. Բացի բնածիական թթվուտից մոմի այրուելու ժամանակ գոյանում՝ է եւ մի ուրիշ նիւթ—ջուր:

Ձեզ կարելի է տարօրինակ թուի, որ վառ բոցի մէջ կարող է ջուր առաջանալ. սակայն հասարակ փորձը կը բացատրի ձեզ ասածս. բայց եթէ այդ ջուրը չէ երևում մեզ, դա նրանից է, որ բոցի տաքութիւնից նա գոլորշիացել է, գազային վիճակի մէջ է. իսկ գոլորշին օդի և բնած-

խական թթւուտի նման անտեսանելի գազ է։
Եռացող կաթսայից դուրս եկած գոլորշին, որը
մենք հասարակ լեզուով շոգի կամ գոլորշի ենք
անուանում, իսկապէս գոլորշի չէ, այլ ջրի փոք-
րիկ կաթիլներ են և եթէ մենք ունենայինք ա-
պլակենայ կաթսայ և կարողանալինք տեսնել նո-
րա ներսը, ոչինք չէինք նկատիլ այդպիսի կաթ-
սալի մէջ եռացող ջրի երեսին, որովհետև գոլոր-
շին հասարակ օդի և բնածխական թթւուտի
պէս անտեսանելի գազ է։ Ուրեմն՝ եթէ կաթ-
սալից գուրս եկող գոլորշին ցրտից դառնում է
ջրի փոքրիկ կաթիլներ, նոյնպէս և այն գո-
լորշին, որը առաջանում է մոմը ալրուելու ժա-
մանակ, տեսանելի կը լինի, եթէ սառեցնենք։

2-րդ փորձ։ Եթէ վառւած մոմի վրայ
պահենք մի սառը, չոր և թափանցիկ բաժակ
(2-րդ նկար), մենք կը տեսնենք որ այդ բա-
ժակը յանկարծ քրտնում է և
եթև, ուշադրութեամբ նայենք,
կը նկատենք, որ ջրի փոքրիկ
կաթիլներ են ծածկում բաժա-
կի ներսը։ Եթէ փորձը մի քիչ
ժամանակ շարունակենք և այն-
պէս անենք, որ բաժակը միշտ
սառը մնայ, կարող ենք այդ
կերպով հաւաքել մի ամբողջ



2. Նկար

բաժակ ջուր և այդ կերպով հաւաքուած ջու-
րը իւր յատկութիւններով բոլորովին նման կը
լինի ամէն մի մաքուր և լաւ ջրի, միայն կա-
րելի է մի քիչ ծխահամած լինի։
Այժմ տեսնենք՝ թէ վերոյիշեալ փորձերով
ինչ իմացանք ալրուող մոմի մասին, որովհե-
տեւ միշտ վերին աստիճանի կարևոր է ճիշտ և
որոշ գաղափար կազմել նախ ըանի մասին՝
թէ ինչ էինք կամենում ապացուցանել մեր
փորձերով և երկրորդ՝ թէ ինչ սովորեցանք այդ
փորձերից։

Մենք պիտի իմանալինք՝ թէ ինչ է կա-
տարւում այն ժամանակ, երբ մոմը ալրուում է
և մենք իմացանք՝

1) որ շիշի մէջ ալրուող մոմը շուտով
հանգչում է.

2) որ մոմը ալրուելու ժամանակ օդի մէջ
առաջանում է մի անդոյն, անտեսանելի գազ,
որը կոչւում է բնածխական թթւուտ։

3) որ բնածխական թթւուտ գազը գոլա-
նում է այն բնածխից, որը պարունակում է
մոմի մէջ։

4) որ մոմը ալրուելիս առաջանում է նոյն-
պէս եւ ջուր։


Այսպէս ուրեմն՝ մենք իմացանք, որ ճրա-
գի մոմը չէ ոչնչանում, չէ կորչում, այլ մի-

այն փոխում՝ է իւր ծերը և վերածում է բը-
նածխական թթւուտի ու ջրի։ Այսպիսի փո-
փոխութիւնները կոչում են քիմիական փոփո-
խութիւններ։ Ոչ ոք առաջուց չէր կարող ա-
սել որ մոմը կը վերածուէր երկու բոլորովին
տարբեր նիւթերի։ միայն այսպիսի ուշադիր
փորձեր անելով մարդիկ՝ իմանում են, թէ ինչ
է կատարում այսպիսի գէպքերում։ ուրեմն քի-
միան փորձական զիտութիւն է։

§ II. Կ Ր Ա Կ

4. Մոմը այրուելիս ոչինչ չէ կորչում։
Մոմի վրայ մեր արած փորձը ուղղակի
ցոյց է տալիս մեզ՝ թէ ի՞նչ է լինում ածուխը
վառարանի մէջ այրուելու ժամանակ։ նա նոյն-
պէս վերածում է բնածխական թթւուտ գա-
զի, որը դուրս է գալիս վառարանի ծխնելուզով։
և արդարեւամբողջ օրը եթէ վառարանի մէջ դը-
նենք փալտ կամ ածուխ, հետևեալ առաւօտը
միայն մի քանի բուռն մոխիր կը գտնենք նորա
մէջ։ ածուխն ու փալտը այրուեցան։ Բայց այս
պատասխանը բաւարար չէ։ Այս ըոպէիս մի
ուրիշ փորձ մեզ ցոյց կը տայ՝ թէ ինչ է լի-
նում մոմի, փալտի և քարածուխի մէջ եղած
ածուխը, երբ նա այրվում է և բնածխական
թթւուտ գազի ձևով հեռանում։

3. փորձ։ Վերցնենք մի ապակեալ խողո-
վակ Ա, նրա ստորին ծալը փակենք մի խցա-
նով և այդ խցանի մէջ թողնենք մի քանի
փոքրիկ ծակեր (Յ-ը նկար). այդ ծակերից մէ-
կի մէջ կարելի է անցկացնել մոմի մի կտոր։



Յկար

Ա. խողովակի վերին մասումը դնենք կծու-
նատը կոչուած սպիտակ նիւթի մի երկու կտոր։
Յետու կշռենք այդ խողովակը իւր մոմի ու նատ-

բանի հետ միասին և ապա կառւչուկի 1) խողովակով միացնենք նորա վերին ծալը թիթեղէ անօթի հետ (B). այդ անօթը (B) լիքն է ջրով, ունի իւր խցանի մէջ մի ծակ, որի մէջ մտնում է մի փոքրիկ ապակեալ խողովակի (C) և այդ խողովակի միւս ծալը միանում է կառւչուկի խողովակի հետ, (B) անօթը ունի մի ծորակ ջուրը թափելու համար: Երբ ծորակը բաց անենք ջուրը կը սկսի թափուիլ, օդը կը մտնի Ա խողովակի մէջ նրա խցանի մէջ եղած ծակերով, որպէսզի լցնի ջրի թափուելուց առաջացած ազատ տարածութիւնը—ինչպէս ցոյց է տալիս նկարի սլաքը, Յետոյ վառենք մոմը և իսկոյն դնենք խցանի հետ միասին Ա խողովակի մէջ: Մի քանի ըստէից լետոյ դադարեցնենք ջրի թափուելը (ծորակը փակելով) և դուք կը տեսնէք որ մոմը հանգչում է, և եթէ նորից կշռենք մեր Ա խողովակը, կը նկատենք որ նա (թէն այդ կարող է ձեզ տարօրինակ թուիլ) աւելի ծանր է քան առաջ, ըստ նայելով որ մոմի մի մասը ալրուել է: Այժմ՝ մենք պիտի աշխատենք հասկանալ՝ թէ ինչու մոմի ալրուելուց լետոյ՝ Ա խողովա-

1) Տես ծան. գրքի վերջին:

կը աւելի ծանրացաւ, քան առաջ, ելք նորա մէջ գեռ մոմը չէր վառուած: Նախ և առաջ՝ Ա խողովակի վերին ծալը ում դրած էի, ինչպէս լիշում էք, մի քանի կտոր կծու նատրոն կոչուած նիւթից, որ առաջանալիք գաղերը—այն է բնածխական թթւուտը և չը գոլրշին—չը հեռանան, այլ այսպէս ասած—բռնուին նրա մէջ, ինչպէս ձուկը կարելի է բռնել ուռկանի մէջ: Բռնելով այս երկու գաղերը և կշռելով՝ մենք կը տեսնենք որ նրանք աւելի ծանր են, քան մոմի այն մասը, որ ալրուեց: Ի՞նչպէս բացտրենք այս երկոյթը: Անշուշտ միայն այն ենթադրութեամբ որ մոմի ալրուելու ժամանակ նորա նիւթի հետ միացաւ մի ուրիշ՝ կշիռ ունեցող նիւթ և կազմեց երկու լիշեալ գաղերը: Այդ նիւթը մի անգուն գազ է, կոչում է թթուածին և օդի մի մասն է կազմում: Այժմ մենք աւելի լաւ կարող ենք հասկանալ՝ թէ ինչ է կատարւում մոմի ալրուելու ժամանակ. մոմի (կամ՝ ածուկի, փայտի) նիւթը ըիմիապէս միանում՝ է օդի թթուածնի հետ. առաջացած բնածխական թթւուտը և գոլրշին քիմիական միաւորութեան հետևանքներն են: Այս գաղերը աւելի ծանր են, քան մոմի ալրուած մասը. որովհետեւ ալարունակում են և

մի ուրիշ նիւթ, այսինքն օդի թթուածինը: Եթէ մենք կշռէինք այն օդը, որի մէջ մոմը ալրուամ էր, կը տեսնէինք, որ նա ճիշտ այնչափ է կորցրել իւր կշռից, որչափ ծանրացել է ալրուած մոմը (ածուխը կամ փայտը), այսինքն կորցրել է իւր թթուածնի կշռը այն թթուածնի, որը քիմիապէս միացաւ մոմի հետ:

5. Ի՞նչ իմացանք:

Այսպէս ուրեմն մենք երկու կարեոր բան իմացանք մոմի ալրուելու մասին. առաջին՝ որ այդ ժամանակ ոչինչ չի կորչում, կամ անհետանում և երկրորդ՝ որ մոմի մասնիկները քիմիապէս միանում են օդի թթուածնի հետ:

Այս երեք հասարակ փորձերից կրակի մասին աւելի շատ բան իմացանք, քան թէ մարդկի գիտէին ամենող հին դարերի ընթացքում. իսկ երբ Փիզիկայի սկզբնական ձեռնարկը կարդաք, այն ժանանակ աւելի ևս կիմանաք տարբութեան ընութեան մասին:


Բայց մի քայլ էլ առաջ գնանք: Այս բոլոր փորձերից, որ այս գրքում կան կամ մի ժամանակ գուշ ինքներդ էք անելու, մենք երկու գլխաւոր ճշմարտութիւն ենք հանում. առաջին՝ որ նիւթը երբէք չի կորչում. մենք անկարող ենք ոշնչացնել կամ ստեղծել մի որ եւ է նիւթ և երկրորդ՝ որ ամեն մի քի-

միական միաւորութեան ժամանակ առաջանում է տաքութիւն և եթէ այդ՝ միաւորութիւնը աւելի արագութեամբ է կատարուամ, մենք տեսնում ենք մինչև անդամ բոց կամ կը ակ:

6. Քիմիական միաւորութիւնների ժամանակ առաջանում է տաքութիւն:

Ապացուցանենք այդ՝ երկու հետևեալ փորձով:

4-րդ փորձ: Վերցնենք մի կտոր չը հանգցրած կիր, գնենք կայեկի թերթի վերայ և վրան ածենք մի քիչ սառը ջուր (4-րդ նկար), դուք իսկոյն կը նկատէք, որ ջուրը և կիրը




4 նկար

տաքանում են, ջուրը խշում է, վերջապէս եռում է այնպէս, որ գոլորշիների ամսեր են բարձրանում: Կարծը կիրը դառնում է սպիտակ, չոր և մանր փոշի, որը կոչւում է հան-

զած կամ՝ շիջած կիր: Մի խօսքով՝ մենք արինք այն, ինչ որ որմնագիրները անում են ամենայն անգամ՝ երբ կամենում են կիր պատրաստել—մենք հանգցրինք կիրը: Ինչի՞ց առաջացան արդեօք այդ տաքութիւնը և գոլորշին. նրանից, որ ջուրը և չը հանգցրած կիրը ըիմիապէս միացան իրար հետ տալով մի նոր նիւթ՝ հանգցրած կիր:

5-րդ փորձ: Մի ապակեալ փոքրիկ անօթի մէջ ածենք մի քիչ գեղին ծծմբի փոշի և վերևից դնենք աղնամի մի քանի փայլուն կոտորներ (Յ-րդ նկար): Յետոյ այդ անօթը դընենք երկաթեալ եռոտանու վերայ և պահենք սպիրտի կամ գազի բոցի վրայ: Մենք լապտե-



5 Նկար

ըը դնում ենք մի հասարակ ափսէի վերայ այն նպատակով, որ եթէ ապակեալ անօթը կոտրուի, ծծումբը չը թափուի սեղանի վրայ: Նախ

և առաջ՝ գեղին ծծումբը հալում է. յետոյ, քանի գնում է, աւելի ու աւելի մուժ գոյն է ստանում և վերջապէս սկսում է եռալ: Այդ ժամանակ պղնձի կտորները նոյնպէս տաքանում են, կարմրում, հալում և յետոյ կաթելաթի թափում անօթի յատակի վրայ: Երբ անօթը սառչելուց յետոյ կոտրենք, մենք նորա մէջ ոչ փայլուն պղնձ կը տեսնենք և ոչ էլ գեղին ծծումբ, այլ մի տեսակ ու նիւթ, որը առաջացաւ պղնձի քիմիապէս իրար հետ միանալուց. այդ քիմիական փոփոխութեան ժամանակ առաջացաւ և այն տաքութիւնը, որից պղնձը կարմրեց և ալրուեց:

7. Ի՞նչ իմացանք:

Այժմ հասկանալի է, որ եթէ դուք մի տեղ տեսնում էք մի որ և է կրակ, կամ բոց, տնպատճառ սլիտի ենթագրէք, որ այդտեղ կատարում է քիմիական միաւորութիւն—այդ բոցը ճրագի բոց լինի, թէ ածխից ալրուող խոտի խրձերի կամ հրդեհով պատած տան: Այս բոլոր դէպքերում միենոյն երևոլթն է կատարվում՝ ալրուող մարմնի մասնիկները քիմիոպէս միանում են օդի թթուածնի հետ:

Դիմենք այժմ օդին:



§ III. ՕԴԻ

8. Օդի մասին:

Դուք զիտէք որ այս սենեակում և դրսում օդ կայ: Խ՞նչն է ձեզ ստիպում ալդպէս կարծել: Ձեռքներդ արագութեամբ այս և այն կողմը շարժելիս դուք զգում էք ձեր մատների արանքների մէջ օդի շարժումը. Երբ դուք ինքներդ արագութեամբ շարժուէք, կը զգաք որ օդը շփում է ձեր երեսին: Տեսէք թէ ինչպէս դըրսումը քամին փչում է կամ ինչպէս շարժում է ծառերը ու մղում ամպերը. և այդ քամին ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ շարժուող օդ: Նա երբեմն այնպիսի ուժով է փչում, որ ծառերը արմատահան է անում կամ ահագին նաւերը խորտակում. սակայն նա միւնոցն շարժուող օդն է: Բայց եթէ օդը հանգիստ է և անշարժ, բնչպէս իմանանք նրա գոլութիւնը: Աչքով չենք կարող տեսնել, որովհետեւ օդը անտեսանելի է. միայն փորձով կարող ենք իմանալ:

9. Օդի բաղադրութիւնը:

Եղ փորձ: Ահաւասիկ մի ապակեալ աման (Յ նկ.) (տակը կոտրած շիշն էլ կարող է ծառակել այս նպատակին) որը ներքեւից բաց է, իսկ վերևից բերանը փակած է խցանով: Այս ամանը գնենք մի ջրով լիքը թասի մէջ. բայց

առաջուց վերցնենք մի փոքրիկ ճենապակեալ (չինի-ֆարՓօրօվայ) ափսէ (այնպէս որ նա կարողանալ լողալ ջրի երեսին), դնենք նորա (ափսէի) վերայ սիսեռի մեծութեամբ մի կտոր լուսածին (ՓօսՓօր) և այդ լուսածինը վառենք լուցկիով: Լուսածինը շատ վտանգաւոր նիւթ է



6 Կար

և նրա հետ շատ զգոյշ պիտի լինել, որովհետև նա կարող է ինքն իրան վառուել և այրել ձեր մատները: Դուք տեսնում էք սմանի մէջ ալրուող լուսածնի փայլուն բոցը: Մի քանի ժամանակից յետոյ նա հանգչում է, թէև լուսածինը ամբողջապէս դեռ չէ ալրուել: Երբ անօթը սառչի, դուք կը նկատէք որ այս սպիտակ ծուխը, որը երևում էր ձեզ լուսածնի ալրուելու ժամանակ, այժմ չկայ և օդի քանակութիւնն էլ առաջուայ օդի հետ համեմատած՝ պակասել է, որովհետև առաջ անօթի մէջ ջուր չըկար, իսկ այժմ մեծ քանակութեամբ

ջուր է մտել նորա մէջ: Նիմա հարց է առաջանում՝ թէ արդեօք լուսածնի ալրուելուց յետով անօթի մէջ մնացած օդը առաջուալ օդի նման է, թէ ոչ: Փորձենք: Անօթի վերևի բերանից հանենք խցանը և անցկացնենք այդ անօթի մէջ վառուած մոմը. տեսէք, մոմն իսկոյն հանգչում է: Նորից վառենք մոմը, նորից մըտցնենք անօթի մէջ, կը տեսնենք որ նա դարձեալ իսկոյն հանգչում է: Ուրեմն անկասկած լուսածնի ալրուելուց յետով անօթի մէջ մնաց մի այնպիսի նիւթ, որը զանազանուում է ամանի մէջ եղած առաջուալ և օդից, որի մէջ մոմը չէ ալրփում: Այդ նիւթը մի անտեսանելի գազ է և կոչում է բորակածին: Դա էր կազմում ամանի օդի մէկ մասը, իսկ միւս մասը մեզ արդէն յալտնի թթուածինն էր, որը միացաւ լուսածնի հետ և առաջացրեց այն սպիտակ ծուխը, որը նկատեցինք լուսածնի ալրուելու ժամանակ:

Ուրեմն՝ մենք իմացանք ոչ թէ միայն այն որ այս սենեակում և անօթում օդ կալ, այլ և այն՝ որ այդ օդը բաղկացած է երկու իրարից տարբեր և անտեսանելի դագերից՝ թթուածնից և բորակածնից: Մի հասարակ փորձով ինչքան բան կարողացանք իմանալ: Գիտութիւնը միշտ պարզ է և բացորշ, երբ զգութեամբ ա-

ռաջ գնանք և աշխատենք մէր ամեն մի արածքայլը հասկանալ:

IV. Օդ.

10. Ի՞նչ է կատարում շնչառութեան ժամանակ:


Մենք գիտենք արդէն, որ երբ օդի մէջ ալրփում է մոմը կամ մի ուրիշ մարմին, այն ժամանակ օդի թթուածնի և այդ ալրուող մարմինների մէջ կատարփում է քիմիական միացումն. ալրուող մոմից գոյանում են բնածխական թթուուտ և ջուր, որովհետեւ բնածուխը (ածխածին) և ջրածինը, որոնք գտնվում են մոմի մէջ, միանում են թթուածնի հետ. բայց դորա համար պիտի առաջ վառենք մոմը, որ նա սկսի ալրուիլ կամ միանալ թթուածնի հետ, կամ ինչպէս ասում են գիտութեան մէջ, թըթուանալ: Երբ փչում ենք մոմի բոցի վրայ, բոցը ցըտանում է և հանգչում, որովհետեւ մոմը էլ չէ միանում թթուածնի հետ:

Մարդու և կենդանիների կեանքի համար օդի թթուածինը նոյնչափ անհրաժեշտ է, որ չափ մոմի ալրուելու համար. դուք գիտէք, որ մեր շնչառութեան համար հարկաւոր է թարմ

օդ և եթէ բաւականաչափ թարմ օդ չը լինի,
մենք կարող ենք խեղուել և մեռնել։ Սար-
սափելի պատմութիւններ են յատնի մարդկանց
մահերի մասին, երբ նրանք փոթորկի ժամա-
նակ խեղուել են նաւերում փակուած լինելով
լիւկերի մէջ, կամ քարածխահանքերում՝ վա-
րակուած, փշացած օդից։ Ի՞նչու։ Մի հասա-
րակ փորձկը բացատրի տիս բոլորը։

7. Փորձ։ Մի բաժակի մէջ ածենք մի

քիչ կրային պարզ
ջուր և ապա ցորենի
ծղօտի կամ նեղ ու
երկայն ապակեալ խո-
ղովակի միջով սկը-
սենք մեր թոքերից
օդ փչել այդ ջըթ մէջ
(7-դ նկար). գուք իս-
կոյն կը նկատէք, որ



Նկար 7.

կրային ջուրը պղտորում է. միևնունը եթէ
մտարերում էք, պատահեց և այն դէպքում,
երբ մոմը ալրում էր շիշի մէջ (1 փորձ)։

Այդ կաթնային պղտորութիւնը ցոյց է
տալիս մեղ որ այստեղ առաջացաւ կաւիճ, իսկ
այս վերջինն ապացուցանում է որ մեր թոքե-
րից գուրս է գալիս բնածխական թթւուտ գազ։
Չը կարծէք, որ բնածխական թթւուտը մըտ-

նաւմ է մեր թոքերը օդի հետ, որովհետեւ եթէ
հասարակ օդի հետ կրային ջուր խառնենք,
կաթնային պղտորութիւն չենք նկատիլ։ Ու-
րեմն՝ մեր արտաշնչած օդը տարբերվում է
ներշնչած օդից նբանով, որ առաջնի մէջ բնա-
ծխական թթւուտ կայ։ Ո՞րտեղից արդեօք այդ
գազն առաջացաւ։ Մենք գիտենք որ նա միշտ
առաջանում է, երբ մոմը ալրում է, բայց մի-
թէ մեր մարմինն էլ ալրվում է մոմի պէս։
Ո՞ուք անշուշտ կասէք—ոչ, որովհետեւ չէք
զգում այնպիսի տաքութիւն, ինչպէս ճրագի
տաքութիւնն է։ Սակայն պիտի մտածենք մին-
չւ վերջնական պատասխան տալը, որովհետեւ
մենք (նոյն և նկատում ենք շան, կատուի
և ուրիշ բազմաթիւ կենդանիների վերաբեր-
մամբ) արդարեւ աւելի տաք ենք, քան սեղանը
կամ պատերը կամ մի այլ անշունչ առարկայ,
բայց երբ այդ կենդանիները մեռնում են կամ
նրանց շնչառութիւնը դադարում է, այն ժա-
մանակ նրանք ցրտանում են, ինչպէս սեղանը
կամ պատկերը։ Ուրեմն կենդանիների շնչառու-
թիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ թթւութեան կամ
թթուացման գործողութիւն։ Օդը քիթածա-
կերով կամ բերանով մտնում է շնչափողը, այն-
տեղից թողերը. այստեղ, թոքերի մէջ, օդի
թթուածինը միանալով արևան կարմիր դնդակ-

Ների հետ՝ տարածւում է ամբողջ մարմնի մէջ և ճանապարհին ալրում է նրա ածուխը: Հեշտութեամբ կարող էք համոզուիլ, որ կենդանիների մարմինը պարունակում է իւր մէջ բնածուխ (ածխածին), եթէ ուշադրութիւն դարձնէք այն երևոյթի վրայ, որ մսի կտորը երբ դրուած է լինում կրակի վրայ սևանում, ածուլս է դառնում: Ահա մեր մարմնի ալս բնածուխն է որ միանալով թթուածնի հետ՝ տալիս է բնածխական թթուուտ գազը, ինչպէս փայտը կամ հասարակ ածուխը: Երկու դէպքում էլ առաջացած տաքութեան աղբիւրը միևնունն է: Բացի դրանից, եթէ վերցնենք երկու հաւասար շիշ լիքը մաքուր բնածխական թթուուտով—մէկը՝ իայն բնածխական թթուուտով, որը առաջանում է մոմի ալրուելուց, իսկ միւսը՝ մեր թոքերի բնածխական թթուուտով, կը տեսնենք, որ այս երկու դէպքում էլ տաքութեան քանակութիւնը միևնուն է. և եթէ մեր մարմնի մէջ չենք նկատում բոց, դա նրանից է որ տաքութիւնը տարածւում է ամբողջ մարմնի մէջ: Իսկ եթէ մարմնի ալրուելը կատարուէր այնպիսի փոքր տարածութեան վրայ, ինչպէս ճըրագի պատրուգն է, այն ժամանակ կարելի էր սպասել որ և բոց էլ առաջանար: Բայց որովհետեւ, կրկնում եմ, ալրուելը կամ թթուանալը

կատարւում է արեան մէջ, որը հոսում է մարմնի ամենափոքր մասնիկներում, այդ պատճառով առաջացած տաքութիւնը միայն տաքացնում է մեզ, մեր մարմինը:

Ուրեմն մենք իմացանք՝ որ Ա. կենդանիները թթուածինը օդից ծծում են թոքերի մէջ. Բ. որ թոքերից թթուածինը մտնում է արիւնի մէջ և Գ. թթուածինը մտնելով արիւնի մէջ՝ ալրում է մարմնի բնածուխը (ածխածին) առաջացնելով բնածխական թթուուտ գազը և միւնոյն ժամանակ կինսդանային տաքութիւն:

§ V. OԴ.

11. Ի՞նչ ազդեցութիւնն ունին զոյսերն ողի վրայ:

Մենք կրկին պիտի գիմենք փորձի, միայն այս անգամ փորձը կըսպահանջի մի քանի օր ժամանակ:

Տ-ըդ վրուծ: Յանեցէք մանանեխի կամ կոտեմի մի քանի հատիկ մի կտոր թթած թաղիքի վրայ, որը գրուած է մի՝ ջըռվ լցուած՝ ափսէի մէջ և կը տեսնէք, որ սերմերը կըսկսեն շուտով բուսնել, այնպէս որ մի քանի օրից լետոյ ձեր մանանեխը կամ կոտեմը կըներկայացնէ մի գեղեցիկ մարդիկ: Արդեօք որտեղից նրանք

վերցրին իրանց ցօղունի կամ տերևների համար անհրաժեշտ անդարձը նիւթերը: Ի հարկէ, անկարելի է ենթադրել, որ նրանք այդ նիւթերը վերցնեն թաղիքից, որովհետև թաղիքը անփոփոխ մնաց, կամ միայն սերմերից, որովհետև մեր բոյսերն անհամեմատ աւելի ծանր են, քան սերմերը. կամ միայն վերջապէս ջրից, որովհետև մեր բոյսերի ցօղունը և տերևները պարունակում են իրանց մէջ ընածուխ, իսկ ջրի մէջ յայտնի է որ բոլորովին բնածուխ չը կայ: Ուրեմն որտեղից, կրկնում եմ, այդ բոլուրը վերցրին իրանց համար անհրաժեշտ ընածուխը: **Օդից**, անկասկած, որովհետև մենք գիտենք որ կենդանիները միշտ արտաշնչում են ընածխական թթուուս զազը. նշանակում է՝ այդ գազը կայ օդի մէջ, թէւ կարելի է շատ աննշան քանակութեամբ: Ի՞նչպէս իմանանք որ օդի մէջ կայ բնածխական թթուուս:

9-րդ փորձ: Մի քիչ պարզ կրային ջուր ածէք ափսէի մէջ և թողէք մի քանի ըոսի գուրսը՝ բաց օդի մէջ կամ սենեակում. ասլախառնեցէք այդ ջուրը և թափեցէք մի բաժակի մէջ. գուք կը տեսնէք որ ջրի երեսին գուրացաւ մի բարակ սպիտակ փառ. դա կաւիճ կամ ինչպէս ասում են քիմիալում կը ընածխաւ է, որն առաջացաւ կը՝ օդի՝ բնածխա-

կան թթուուտի հետ քիմիապէս միանալուց. նորա գոյանալու համար հարկաւոր է բաւական ժամանակ, որովհետև բնածխական թթուուտի քանակութիւնը շատ քիչ է օդի մէջ, բայց եւ այնպէս ընածխական թթուուտի այս աննշան քանակութիւնը կազմում է բոյսերի զվարացուր սնունդը:

12. Բոյսերի ածումի:

Եթէ բոյսերի համար անհրաժեշտ է բընածխական թթուուտը, որովհետև նրանց սընունդն է կազմում և բոյսը նրանից պատրաստում է փայտ, պտուղ և տերև, իսկ այս վերջինների համար անհրաժեշտ է ունենալ բնածուխ, ուրեմն՝ ուր է գնում այդ բնածխական թթուուտի թթուուածինը: (Բնածխական թթվուուր, ինչպէս արդէն գիտէք, բաղկացած է բնածխից և թթուուածնից):

Հետեւեալ փորձը կը պատասխանի այդ հարցին:

10-րդ փորձ: Վերցնենք կանաչ և թարմ տերևների մի փոքրիկ խրձիկ (ջրակոտեմը կարող է ծառայել այդ նպատակին) և դնենք մի մեծ ամանի մէջ (8-րդ նկար). յետու այդ ամանը լցնենք ջրհորի մաքուր ջրով, տինպէս որ նրա մէջ օդի նշոյլ անդամ չը մնալ և ապա շուռ տանք ամանը իւր միջի ջրի և տե-

ըւների հետ միասին մի նունպէս ջրով լեռը
մեծ թասի մէջ և այդ բոլորը արեւի տակ
դնենք մի քանի ժամով։ Եթէ այժմ ուշա-



8 Նկար

ռաջացան բնածխական թթւուտից. իսկ ինքը
բնածխական թթւուտը լուծուած գրութեամբ
գտնվում էր ջրհորի ջրի մէջ **): Ուրեմն բոյ-
սը ընդունակութիւն ունի արեւի ազդեցու-
թեան ներքոյ վերլուծել օդի բնածխական
թթւուտը այն երկու զազերին, որոնցից ըը-
նածխական թթվուտը բաղկացած է, այսին-

*) Այդ կարելի է ասլացուցանել նրանով, որ
եթէ գաղը հաւաքենք մի փոքրիկ գլանաձև տպա-
կեալ անօթի մէջ և մտցնենք առկայծող (առանց
բոցի կրակ) լուցկի, նա խկոյն կըբոցախռուի։

**) Եթէ ջրհորի ջրի հետ խառնենք մի քիչ
կրային ջուր, կը տեսնենք որ նա պղտորում է. ո-
րովհետեւ կաւիճ է առաջանում՝ տպացոյց որ ջրի
մէջ կար բնածխական թթւուտ։

քըն՝ բնածխի եւ թթւուտնի, բնածուխը մնա-
լով բոյսի մէջ եւ ննթարկուելով այնորեղ զա-
նազան փոփոխութիւնների՝ վերջ և վերջոյ
կազմում է բոյսի մարմինը. իսկ թթւուտի-
նը դուրս է զալիս։

11-րդ փորձ։ Դուք երևի զիտէք, որ կա-
նաչ բոյսերը չեն կարող բուսնել մութ տե-
ղում և կը հասկանաք դորա պատճառը, եթէ
կըկնէք վերջին փորձը. բայց միայն արևի
տակ գնելու փոխարէն, ամանը իւր ջրհորի
ջրի և տերեւների հետ միասին մութ սենեա-
կում դրէք։ Այս դէպքում դուք մի քանի ժա-
մից յետոյ էլ մինչեւ անգամ թթւուտնի մի
բաշիկ չէք նկատիլ։ Ուրեմն արևը՝ արևի լու-
սը անհրաժեշտ է որ բոյսերի կանաչ մասերը
կարողանան վերլուծել բնածխական թթւուտը,
հետեւքար՝ անհրաժեշտ է և բոյսի կեանքի
համար։

13. Կենդանիների եւ բոյսերի ազդե-
ցութիւնը օդի վրայ։

Այժմ մեր ուշադրութիւնը դարձնենք օդի
այն փոփոխութիւնների վրայ, որոնք կատար-
ւում են կենդանիների և բոյսերի շնորհիւ։
Մենք զիտենք արդէն, որ այդ երկու դասա-
կարգի էակները միշտ կարեւոր քիմիական փոփո-
խութիւններ են առաջացնում օդի մէջ. և քի-

միան պիտի պարապի ոչ թէ միայն այն փոփոխութիւններով, որոնք կատարւում են մեռած կամ անշունչ բնութեան մէջ, այլ և այն փոփոխութիւններով, որոնք յատուկ են իւրաքանչիւր կենդանու և բոյսի կեանքին:

Մենք գիտենք ալժմ, որ կենդանիները ներշնչում են թթուածին և արտաշնչում բընածխական թթուուտ, շարունակ այրուում են և առաջացնում տաքութիւն. իսկ բոյսերը ընդհակառակ, ներշնչում են բնածխական թթուուտ և արտաշնչում թթուածին. նոքա կլանում են այսպէս ասած արեգակի լոյսը և տաքութիւնը, առանց որոնց չեն կարող աճել. միենոյն ժամանակ նրանք շարունակ պատրաստում են այրելու համար հարկաւոր նիւթ: Ուրեմն գուք տեսնում էք, որ կենդանիների գերը բոլորովին հակառակ է բոյսերի գերին՝ կենդանիները արտաշնչելով բնածխական թթուուտը միշտ ապականում են օդը, իսկ բոյսերը մաքրում են ներշնչելով բնածխական թթուուտը և արտաշնչելով թթուածինը տերեւների միջոցով: Կենդանային և բուսական կեանքի ալս հաւասարակշութիւնը գեղեցիկ և ակներեւ կերպով արտայատվում է ալժմ այնչափ տարածուած ակվարիումների միջոցով. այսպիսի ամանների մէջ ապրում են մէկ տեղ

փոքրիկ ջրային կենդանիներ և բոյսեր, թէւ արտաքին օդի հետ հաղորդակցութիւն չունին: Կենդանիների արտաշնչած բնածխական թթուուտը ընդունում են բոյսերը, որովհետեւ դանրանց անհրաժեշտ մնունդն է, իսկ կենդանիների շնչառութիւնը, ընդհակառակ, պահպանվում է բոյսերի արտաշնչած թթուածնով:

§ VI. ԶՈՒՐ


14. Ի՞նչից է բաղկացած ջուրը:

Յայտնի է որ եթէ մի կտոր սառուց դընենք բաժակի մէջ և տաքացնենք, այդ պինդ սառուցը կը դառնալ հեղուկ ջուր և եթէ շարունակենք աւելի ևս տաքացնել, ջուրը քիչ ժամանակից յետոյ կսկսի եռալ և կը դառնայ զազ, գոլորշի: Այս գոլորշին անտեսանելի գազ է և իւր յատկութիւններով զանազանում է հեղուկ ջրից:

Այժմ տեսնենք թէ կարող ենք արդեօք ջրից մի ուրիշ բան ստանալ բացի գոլորշուց և ինչ միջոցներով:

12-րդ փորձ: Վերցնենք մի ապակեալ ձագարաձեւ անօթ (Թ-դ նկար), որի յատակը փակած է խցանով և այդ անօթը լցնենք թթուացրած ջրով (մի քանի կաթիլ թթուուտ են ա-

ւելացնում որ ելեկտրականութիւնը հեշտութեամբ անցնի միջով). Խցանի միջով անցկացնենք երկու թել (մաֆտիլ—ապիտակ ոսկուց, պլատինից): Երբ այս երկու թելերը միացը-



Նկար 9.

նենք ելեքտրական մարտկոցի (ճառարեյ) հետ, ելեքտրական հոսանքը կանցնի նրանց միջով և կը մտնի ջրի մէջ և մենք կը նկատենք, որ թելերի մօտ ջուրը կարծես թէ եռում է, բազմաթիւ փոքրիկ բշտիկներ են դուրս գալիս մէկը միւսի լետելից: Այդ բշտիկները գոլորշու բըշտիկներ չեն, որովհետեւ գոլորշին խսկոյն ջուր կը դառնար ցըտից (ջուրը սառն է), իսկ դրանք (բշտիկները) սառը ջրի միջով բարձրանում են վերև: Հաւաքենք այդ բշտիկները և տեսնենք թէ ինչ տեսակ գազեր են դրանք: Դրա համար վերցնենք երկու փոքրիկ և հաւասարա-

ծաւալ գլանաձև տպակեալ անօթներ, լցնենք ջրով, մատներով փակենք նրանց բերանները շուռ տանք և գնենք թելերի վերալ ալնպէս՝ որ բշտիկները հաւաքուին դրանց մէջ (9 նկար): Քիչ ժամանակից լետոյ կը նկատենք որ մէկ անօթի մեջ հաւաքուեցաւ ուղիղ երկու անգամ աւելի շատ գազ, քան միւսում, այնպէս որ եթէ մէկը բոլորովին լցուած է գազով, միւսը լիքն է մինչեւ կէսը միայն: Տեսնենք թէ ինչ տեսակ գազեր ստացանք. Ես վերցնում եմ ալն անօթը, որը միայն մինչեւ կէսն է լիքը և բերանը մատով փակելով հանում եմ ջրից ու շուռ եմ տալիս. ապա մտցնում եմ նրա մէջ առկալծող լուցկին, լուցկին խսկոյն վառւում է, ուրեմն՝ դա թթուամֆին է, որովհետեւ մենք գիտենք արդէն որ միայն թթուամֆինը այդ լատկութիւնն ունի: Միւենոյն փորձը անենք և միւս անօթի վրայ, միայն նրա բերանը պիտի գէպի ներքեւ պահենք (սրա պատճառը խսկոյն հասկանալի կը լինի): Առկալծող լուցկին չէ վառւում, բայց եթէ անօթի բերանին մօտեցնենք ճրագի բոցը, զագը ինքը կը վառուի և կսկսի այլուել գժգոլն-կամլուտ բոցով, ուրեմն այդ զագը բոլորովին զանազանում է թթուամֆինից. աս կոչւում է ջրամին:

Եթէ այս փորձը կրկնենք մի քանի անգամ, միշտ

միւնոյն հետեւանքին կըհասնենք և բացի թը-
թուածնից ու ջրածնից՝ ջրից ուրիշ բան չենք
ստանալ, ինչ միջոցի էլ որ դիմենք։ Ուրեմն
ա. ելեքտրականութեան միջոցով կարող
ենք ջուրը վերլուծել կամ տարրաբաշխել
միայն երկու՝ իրարից սոլորովին տարրեր նիւ-
թերի՝ թթուածնի եւ ջրածնի և բ. ստացած
ջրածնի ծաւալը երկու անգամ՝ մեծ է թթուա-
ծնի ծաւալից։

15. Ջրից կարող ենք ջրածնը ստանալ
եւ ուրիշ միջոցներով։

13-րդ փորձ. Եթէ կալիոն ^{*)} կոչուած
մետաղի մի փոքրիկ կտոր գտենք մի թասի մէջ
ածած ջրի վրայ, կլտեմնենք որ մետաղը այն-
քան թեթև է, որ լողում է ջրի երեսին և այն



Նկար 10

Այդ բոցը առաջանում
է ջրի ջրածնից. որը
դուրս գալու ժամանակ վառում է եւ այր-


^{*)} Այս մետաղը պէտք է պահել նաւթի մէջ
օդից և խոնաւութիւնից հետու։ Նա այնքան կա-
կուղ է, որ կարելէ է դանակով կտրել.

ւում։ Այստեղ կատարւում է հետեւեալը. մե-
տաղը քիմիապէս ներգործում է ջրի վրայ.
ջուրը նրա ազդեցութիւնից վերլուծում է
ջրածնի և թթուածնի. ջրածնը դուրս գալուն
պէս քիմիապէս միանում է օդի թթուածնի
հետ, վառում է և այրում, իսկ թթուածնի
նը միանում է մնանալի հետ եւ կազմում է
կծու կալիոն (Ֆեռո կամ Ըկալիոնի կալա-
քար) կոչուած նիւթը։

Այս վերջին մարմնի գոյանալը կիմացուի
նորանով, որ եթէ մի քիչ լուծուած կարմիր
լուաղեղ (растворъ лакмуса) աւելացնենք
(ածենք այն ջրի վրայ) որտեղ գցուած էր կա-
լիոնը, կը տեսնենք որ կարմիր լուաղեղի գոյ-
նը իսկոյն փոխում է կապոյտի։ Կալիոնի փո-
խարէն կարող ենք գործ ածել և մի ուրիշ մե-
տաղ, որը շատ նման է կալիոնին և կոչւում է
նատրիոն։ Նա միւնոյն ազդեցութիւնը կունե-
նայ ջրի վրայ, այսինքն դուրս կը հանի ջրից նրա
ջրածնը և ինքը քիմիապէս կը միանայ թը-
ուածնի հետ կազմելով կծու նատրոն (նատ-
րիոնի կալաքար)։ Միայն այս դէպքում առա-
ջացած տաքութիւնն այնքան մեծ չէ լինում,
որ ջրածնը կարողանայ քիմիապէս միանալ օ-
դի թթուածնի հետ և վառուել։

16. Ի՞նչպէս հաւաքել ջրածնը։

Եթէ վերջին փորձը մի քիչ ձեւափոխենք,
կարող ենք ջրի երեսին ալրուող ջրածինը հա-
ւաքել: Սրա համար սանդի մէջ ածենք մի
յայտնի, փալուն և հեղուկ մետաղ, որի անունն
է սնողիկ և յետոյ վերցնենք նատրիոնի մի
քանի փոքրիկ կտոր ու սանդի կոթով սնդիկի
տակ մտցնելով՝ տրոբենք ու խառնենք նատ-
րիոնը սնդկի հետ: Այս երկու մետաղների խառ-
նուրդը կոչում է ամալզամ, սնդկազօղ կամ՝
յարազօղ (ամալգամա): Եթէ այժմ՝ այս հե-
ղուկ ամալզամը ածենք մի թասի մէջ ածուած
ջրի վրայ, կը տէսնենք որ ջուրը սկսում է վեր-
լուծուիլ նատրիոնի աղդեցութիւնից. ջրի թըթ-
ուածինը քիմիապէս միանում է նատրիոնի
հետ և առաջացնում է կծու նատրոնական
կալաքար կոչուած նիւթը (պատրոնայ պելօչ),
իսկ ջրածինը դուրս է գալիս ազատ կերպով:



11 Նկար

Եթէ վերցնենք ջրով լիքը գլանաձև մի ասլա-
կեալ անօթ և մատներով փակելով բերանը

շուռ տանք թասի կենտրոնի վերայ (նկար 11),
ջրածինը կը հաւաքուի այդ գլանաձև անօթի
մէջ: Եթէ կամենանք համոզուել որ մեր հա-
ւաքած գազը ջրածին է և ոչ այլ ինչ, կարող
ենք մօտեցնել անօթի բերանին վառած լուց-
կին և կը տեսնենք, որ ջրածինը իսկոյն վառ-
ուում է և սկսում է ալրուիլ դժգոյն, աննկա-
տելի բոցով:

§. VII. Զ Ո Ւ Ր


Ջրածին ստանալու ուրիշ միջոցներ:

Մի քանի ուրիշ մետաղներ նոյնպէս ընդու-
կութիւն ունին ջուրը վերլուծելու. Նրանք
միանում են ջրի թթուածնի հետ և կազմում
են թթուածնի *), իսկ ջրածինը ազատում է և
մենք կարող ենք այդ ջրածինը հաւաքել: Մե-
տաղներից մի քանիսը, օրինակ նատրիոն կամ
կալիոն կարող են վերլուծել ջուրը մինչև ան-
գամ երբ սառն են, ինչպէս տեսանք այդ. ու-
րիշները, օրինակ երկաթը, պիտի տաքութիւ-

*) Ընդհանրապէս թթուուկ կոչում ենք այն
բոլոր միաւորութիւնները, որոնք բաղկացած են մի
որ և է մարմնից և թթուածնից, այսինքն, երբ մարմի-
նը քիմիապէս միանում է թթուածնի հետ, նա կազ-
մում է թթուուկ:

նից կարմրած լինին (հրաշեկ լինին), որ կարողանան վերլուծել ջուրը իւր բաղադրիչ մասերին. օրինակ երկաթն միանալով ջրի թթուածնի հետ՝ կը կազմի երկաթական թթւուսի (օկուս յուլէզա), իսկ ջրածինը կազմառուի: Միւս մետաղները—օրինակ՝ ցինկը—թէւ չեն կարող վերլուծել ջուրը երբ սառն են, սակայն այդ բանը կարող են անել երբ ջրի մէջ թթւուտ (կислотա) լինի:

15-ր փորձ: Եթէ ցինկի մի քանի փոքրիկ կտոր գնենք մի սպակեալ անօթի մէջ (Ա), որի մէջ կայ ջուր և զգուշութեամբ վրան ածենք մի քիչ ծծմբական թթւուտ, իսկոյն կը նկատենք մի



Նկար 12.

խշոց, որ առաջանում է գուրս եկող գազից (նկար 12): Մետաղը (ցինկը) ներգործում է թթուացրած ջրի վերալ՝ վերլուծելով նրան երկու գազի թթուածնի և ջրածնի. ինքը միա-

նում է թթուածնի հետ, իսկ ջրածինը ազատվում է առաջացնելով այն խշոցը, որը ինչպէս ասացի, հեշտութեամբ նկատում է: Ջրածինը հաւաքելու համար անօթի բերանը ամուր փակենք խցանով, որի մէջ անց է կացրած մի կոր ապակեալ խողովակ (Բ) (նկար 12) և այս խողովակի միւս ծայրը պահենք ջրով լիքը, բայց շուռ տուած ապակեալ բաժակի (Ը) բերանին մօտ (այս բաժակը դրուած է մի ուրիշ ջրով լիքը թասի մէջ (Ը)): Իսկոյն գազի բշտիկները կանցնեն այս կոր ապակեալ խողովակով (Ե) և կը բարձրանան շուռ տուած բաժակի վերեկ մասը և կը ճնշեն ջրի վերալ, որը փոքր առ փոքր կը ցածրանայ: Մինչև գազը հաւաքելը պէտք է մի քիչ սպասել, որ անօթի միջի օդը միշոց ունենայ գուրս գալու և ջրածինը խառնուած ըլլինի այդ օդի հետ: Այդ կարելի է իմանալ հետևեալ կերպով. վերցնենք մի փոքրիկ գլանաձև ապակեալ անօթ և հաւաքենք նրա մէջ մի քիչ ջրածին. իւտոյ այդ անօթի բերանին (պահելով նրան շուռ տուսիծ) մօտեցնենք վառած մոմ. Եթէ ջրածինը խառնուած չէ օդի հետ, նա պիտի ալրուի գանդաղ ու հանգիստ կերպով: Եթէ գազը գանդաղ է գուրս գալիս, կարելի է սաստկացնել վերեկց ձագարի միջոցով մի քիչ թթւուտ ածելով:

Այս կերպով մենք կարող ենք հաւաքել ջրածին մի քանի բաժակների մէջ. ի հարկէ այդ բաժակները՝ ջրով լիքը թասերի մէջ դրած և շուռ տուած պահելով, Ս.մժմ տեսնենք թէ ինչ յատկութիւններ ունի ջրածինը:

48. Ջրածինը այրուող է եւ օղից թեթեւ:

16-րդ Փորձ: Եթէ վերցնենք ջրածնով լիքը բաժակներից մէկը և շուռ տուած պահելով, վառած մոմ մօտեցնենք բերանին, կը տեսնենք, որ ջրածինը կը վառուի և կը սկսի այրուել բաժակի բերանում (Նկար 13), իսկ եթէ մոմը տանենք դէպի ներս բաժակի մէջ, նա կը հանգչի: Երբ սկսենք հանգած մոմը բաժակի միջից հանել, այրուող ջրածինը նորից նրան կը վառի և նորից մոմը կը հանգչի, եթէ կը կին բաժակի մէջ տանենք:




13 Նկար

Ի՞նչ կարող ենք եզրակացնել այս փորձից: Ա. Որ ջրածինը այրուող նիւթ է և այրում է դժգոյն-կապտագոյն բոցով. Բ. Որ ջրածինը թթուածնի պէս ընդունակութիւն չունի պահպանելու ուրիշ նիւթերի այրուելը:

17-րդ Փորձ: Շուռ տուէք ջրածնով լիքը բաժակի բերանը վերև և յետոյ վառած մոմը արագութեամբ մօտեցրէք նրան. Ջրածինը կը

վառուի աւելի երկար բոցով, քան այն ժամանակ, երբ բաժակի բերանը դէպի ներքեւ էր, որովհետեւ ջրածինը աւելի թեթեւ է օղից, ինչպէս կը տեսնէք խկոյն: Այս յատկութեան շնորհիւ կարելի է ջրածինը՝ այսպէս ասած՝ դէպի վերեւ ածեւ: Վերցրէք երկու շիշ մէկը օդով լցուած, իսկ միւսը ջրածնով և այդ երկու շիշը միացրէք երար հետ այնպէս, ինչ-



14 Նկար

պէս ցոյց է տալիս 14-րդ նկարը, միայն ջրածինը ներքեւի շիշի մէջ լինի: Ջրածինը խկոյն այդ շիշից կը բարձրանալ դէպի վերև, ինչպէս ցոյց կը տալ հետևեալ փորձը:

Վերևի շիշը առանց շուռ տալու, մօտեցնենք կրակին, խկոյն այդ շիշի բերանի մօտ վառուում է և այրուում է (երբեմն թեթև ճայթումով օդի հետ խառն լինելու պատճառով) մի գագ, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ներքեւի շիշի ջրածինը. իսկ եթէ ներքեւի շիշը կարծամանակով գնենք սեղանի վերայ բերանը դէպի վերև և յետոյ բերանը մօտեցնենք կրակին,

կըտեսնենք որ շիշի մէջ եղած բոլոր ջրածինը վաղուց է որ հեռացել է և նորա տեղը բունել է օդը: Այս փորձը ապացուցանում է, որ ջրածինը շատ թեթև է օդից և արդարեւ՝ նա բոլոր մեզ յայտնի մարմիններից ամենաթեթևն է և այդ պատճառով է որ նա գործ է ածւում օդապարեկներ լցնելու համար:

19. Ջրածնի այրուելու ժամանակ ջուր է գոյանում:

Այժմ փորձենք իմանալ թէ ինչ է գոյանում այն ժամանակ, երբ ջրածինը ալրում է օդի մէջ:

18-րդ փորձ: Վերցնենք նորից այն անօթը, որի մէջ ստանում էինք ջրածինը և այդ անօթի բերանի միջով կոր խողովակի փոխարէն անց-

կացնենք մի ուրիշ՝ ուղիղ խողովակ՝ բարակ ծալրով, ալնպէս որ գազը դուրս գայ բարակ հոսանքով (նկ. 15): Եթէ բոլոր օդը արդէն դուրս է եկել անօթից (այդ բանը իմանալու համար պէտք է մի փոքրիկ զլանաձև տպակեալ բաժակ դնել խողովակի սուր ծալրի վրա), և հա-

15 Սկար ւաքել և յետոյ մօտեցնելով նրան վառած մոմը տեսնել թէ ինչպէս է այդ ջրածինը ալրում—հանգիստ կերպով, թէ ճարթումներով. Եթէ հասնգիստ կերպով չէ ալ-



ւում, այսինքն եթէ փոքրիկ ճակատումներ են լսում՝ նշանակում է որ նա դեռ մաքուր չէ, դեռ սորա հետ օդ կայ խառն. ուստի մի քիչ պիտի սպասել: Վառած մոմը մօտեցը էք գազի հոսանքին, ջրածինը կըսկսի ալրուել շարունակ ու մեզմ բոցով. յետոյ պահէք այդ բոցի վրայ (ինչպէս 2-րդ փորձում) մի չոր ապակեալ բաժակ. դուք կըտեսնէք որ նորա ներքին մակերեսովի վրայ նստում է ցող կամ ջրի փոքրիկ կալթիլներ: Դա ապացուցանում է, որ երբ ջրածինն այրում է, նա միանում է օդի թթուածնի հետ եւ տալիս է ջուր. ուրեմն ջուրը ջրածնի թթուուկն է:

19-րդ փորձ: Այժմ տեսնենք թէ արդեօք ջրածնի ալրուելու ժամանակ բացի ջրից էլ ուրիշ բան գոյանում է, թէ ոչ: Դորա համար զետեղենք ալրուող ջրածնի բոցը մի մեծ շիշ մէջ և յետոյ ածենք այդ շիշ մէջ մի քիչ պարզ կրային ջուր (ինչպէս 1-ին փորձում). դուք տեսնում էք, որ ջուրը չէ պղտորւում և կաթնագոյն գառնում. ուրեմն ջրածնի ալրուելու ժամանակ բնածխական թթւուտ չէ առաջանում: Այսպիսի փորձեր անելուց յետոյ քիմիկոսները համոզուել են որ ջրածինը օդի մէջ ալրուելիս բացի ջրից՝ ուրիշ բան չէ գոյանում: Եւ եթէ 18-րդ փորձում սառը բաժակը երկար

ժամանակ պլահենք բոցի վերալ, կարող ենք այդ բաժակը լցնել ջրով և այդ ջուրը բոլորովին մաքուր կը լինի՝ առանց որ և է ծխահամի, ինչպէս նկատում էր 2-րդ փորձում:


Այժմ հասկացանք թէ ինչու մոմի ալբուելու ժամանակ ջուր է գոյանում—որովհետև մոմի մէջ ջրածին կալ և այդ ջրածինը միանալով օդի թթուածնի հետ՝ առաջացնում է ջուր: Այսպէս ուրեմն տեսնում էք որ ջրի կազմութեան ծանօթանալով՝ մենք մի բան էլ իմացանք և՝ ողի մասսին, որովհետև տեսանք որ նա բաղկացած է երկու զանազան տեսակ օգից կամ գազից: Այդպէս սերտ կապուած են իրար հետ բնութեան վերաբերող գիտութեան զանազան մասերը:

§ VIII ջ Ռ Ի Ռ

20. Ջրի բաղադրութիւնը:

Աշխատենք այժմ աւելի ճիշտ գաղափար կազմել ջրի բաղադրութեան մասին: Մենք իմացանք (3-րդ փորձ) որ օդի մէջ թթուածինը խառն է բորակածնի հետ (6-րդ փորձ). օդի թթուածինը ազատ վիճակի մէջ է. իսկ ջրի մէջ նա քիմիապէս միացած է ջրածնի հետ և այս երկու գազերը քիմիապէս միա-

նում են և տալիս են հեղուկ ջուր: Մենք գիտենք նոյնպէս (12-րդ փորձ) որ երբ ջուրը վերըուծում է, ստանում ենք երկու ծաւալ ջրածին և մէկ ծաւալ թթուածին: Այժմ կարեւոր կը լինէր իմանալ թէ արդեօք ջուր կազմելու համար որչափ թթուածին և ջրածին պիտի միանան, ալսինքն՝ որքան ֆունտ ջրածին և որքան ֆունտ թթուածին կազմում են մի յատնի քանակութեամբ ջուր: Դուք չի պիտի խառնէք ծաւալը կշռի հետ: Զրի բազագրութիւնը ճշտութեամբ իմանալ հեշտ չէ. և այս հարցը այնչափ կարևոր է, որ մի քանի քիմիկոսներ ամիսներ և տարիներ անդամ նույիրել են, որ գտնեն ջրի մէջ ջրածնի և թթուա-



Եկար 16

ծնի քանակութիւնը: Այժմ անենք մի փորձ, որը թէւ ներկալացնում է մի կոպիտ նմանութիւն քիմիկոսների արած փորձին, սակայն

շատ հետաքրքիր է. չը նայելով որ այս փորձը
աւելի դժուար է, քան մեր բոլոր նախընթաց
փորձերը՝ այնուամենալիւ հասկանալի կը լինի
ամէնքին, եթէ ուշադրութեամբ կարդանք:

20-րդ փորձ: Վերցնենք դժուարահալ ա-
պակուց մի խողովակ (Ա) (Նկար 16), որի մէջ
տեղը գտնվում է մի գնդակն լայնութիւն. այս
գնդակի մէջ դնենք մօտ կէս ունց (կամ 4 մըս-
խալ մօտաւոր.) սեւ պղնձական թթվուուկ. (Ա)
խողովակի ծալը գրուած է մի ուրիշ Ս-աձև
խողովակի մէջ (Բ). այս խողովակը լցուած է
մի սիստակ նիւթով, որն ընդունակութիւն ու-
նի ագահութեամբ ջուրը կլանել, ծծել իւր
մէջ և որի անունն է կրածնի ըլորուկ (Խլօր-
իստայ կալվայ): Ը մի ուրիշ ապակեալ անօթ
է որի մէջ ցինկի՝ թթվուացրած ջրի վերայ գոր-
ծած ազդեցութիւնից՝ ստացվում է ջրածնը.
դուրս եկող ջրածնը չորացնելու (ալսինքն ջը-
րի գոլորշիներից բաժանելու) համար անց են
կացնում մի ուրիշ անօթի միջով (Օ), որի մէջ
ածած է մի քիչ ծձմբական թթվուուտ: և վեր-
ջապէս Ե մի երրորդ խողովակ է լցուած կրածնի
քրորուկով, որը ի հարկէ երկրորդ անգամ ար-
դէն բոլորովին կը չորացնի ջրածնը մինչեւ
նրա Ա խողովակը հասնելը: Այս փորձը անե-
լիս մենք առաջուց պիտի իմանանք Ա խողո-

վակի և պղնձական թթվուուկի կշիռը. դրա հա-
մար պիտի բաժանենք Ա խողովակը Ե և Յ
խողովակներից, հանենք խցանները և ապա դը-
նենք կշռքի մէկ թաթի վրայ, իսկ միւս թա-
թի վրայ դնենք այնքան քարեր՝ որ ստանանք
կատարեալ հաւասարակշռութիւն: Ստացած
թիւը պիտի գրուի. յետոյ նոյն խնամքով պի-
տի կշռուի Յ խողովակը և գրուի նրա կշիռը:
Յետոյ այս երկու խողովակը նորից կը դնենք
իրանց առաջուալ տեղերը, այնպէս որ նրանց
մէջ եղած նիւթերից ոչինչ չը կորչի:

Ա. Ամօթի մէջ ձագարաձև խողովա-
կի միջոցով մի քիչ ծձմբական թթվուուտ ածենք
ցինկի վրայ. ցինկի ազդեցութիւնից ջուրը կը
վերլուծուի և նրա ջրածնը՝ դուրս գալով՝ կան-
ցնի բոլոր խողովակներով և սեւ պղնձական
թթվուուկի վրայով: Որովհետեւ միշտ և վաղօրօք
պիտի համոզուել թէ արդեօք ջրածնը անց-
նելու ժամանակ հեռացրել է բոլոր օդը գոր-
ծիքից և ուրեմն մաքուր է թէ ոչ, ուստի
վերցնենք մի փոքրիկ զլանաձև ապակեալ չոր
բաժակ, դնենք Յ խողովակի ծալըն և հաւա-
քենք մի քիչ ջրածնն և ժամանակ առ ժա-
մանակ փորձենք՝ մօտեցնելով դէպի ներքեւ պա-
հած բաժակի բերանը վառած մոմին. մի քա-
նի անգամ փորձելուց յետոյ կը տեսնենք որ

ջրածինը վառւում է և այրւում հանդիստ կերպով. ուրեմն նա մաքուր է: Այն ժամանակ և խողովակի գնդակն լայնութեան տակը դնենք մի փոքրիկ լապտեր. քանի որ գնդակը չէր տաքացրած, ոչինչ փոփոխութիւն չէինք նկատում ու պղնձական թթւուկի մէջ, թէև ջրածինը անցնում էր նրա վրայով. բայց երբ պղնձական թթւուկը սկսում է տաքանալ, իսկոյն նա մի առանձին փոփոխութեան է ենթարկւում. նրա ու գոյնը փոխւում է փայլուն կարմիր մետաղային գոյնի և նկատելի է լինում թէ ինչպէս ջրի կաթիներ հաւաքւում են խողովակի սառը մասերում: Երբ գնդակը ամբողջապէս տաքանալ, ջուրը կը հաւաքուի Յ խողովակում և այստեղ կը բռնուի կրածնի քլորուկի մէջ. և այսպէս պիտի շարունակենք փորձը, մինչեւ որ պղնձական թթւուկի ու գոյնը կը կորչի և յետոյ լապտերը կը հեռացնենք: Մինչեւ գնդակի հովանալը տեսնենք թէ ինչ կատարուեցաւ:

Ջրածինը քիմիապէս միացաւ պղնձական թթւուկի թթուածնի հետ և կազմեց ջուր, որ կամ ինչպէս հեղուկ ջուր կամ զոլորշու ձեռվ անցաւ Յ խողովակը և այնտեղ բռնուեց. այնպէս որ դուրս՝ դէպի արտաքին օդը՝ ոչինչ

չըգնաց. այս կարմիր փոշին, որ մնաց Ա գընդակում մաքուր մետաղ պղնին է:

Այժմ ուրից կշռենք երկու խողովակներ (Ա և Յ), նախ՝ Ա խողովակը կը տեսնենք, որ աւելի թեթեւ է քան առաջ, որովհետեւ կորցրել է թթուածնը, երկրորդ՝ որ Յ խողովակը աւելի ծանր է քան առաջ, որովհետեւ առաջացած ջուրը՝ ինչպէս տեսնենք՝ մնաց նրա մէջ: Ուրեմն մենք ունենք հետեւեալլ՝

1. Ա խողովակի կշռութ փորձից առաջ 1056 գրան (15 $\frac{2}{3}$ մսխալի մօա):

2. Նոյն խողովակի կշռութ փորձից յետոյ 1016 գրան (14 $\frac{1}{3}$ մսխալ):

Այս երկու թուերի տարբերութիւնը ցոյց է տալիս թթուածնի կորուստը 40 գրան:

3. Յ խողովակի կշռութ փորձից առաջ 803 գրան (11 $\frac{1}{3}$ մսխալ):

4. Նոյն խողովակի կշռութ փորձից յետոյ 848 գրան (12 մսխալ):

Այս երկու թուերի տարբերութիւնը ցոյց է տալիս առաջացած ջրի կշռութ 45 գրան (2 $\frac{1}{3}$ մսխալ):

Ուրեմն՝ Բնչ պիտի եզրակացնենք այս կարմոր փորձից: Այս, որ առաջացած 45 գրան ջրի՝ 40 գրանը թթուածնին է և որովհետեւ ջրի մէջ թթուածնից և ջրածնից զատ ուրիշ

բան չըկայ, նշանակում է, որ մնացած 5 գըրանք ջրածնի բաժինն է. կամ կրծատելով այս թուերը (40 և 5) կարելի է ասել, որ ջուրը պարունակում է 1 մաս ջրածն (իւր կշռով) և 8 մաս թթուածին (իւր կշռով) կամ 2 մաս ջրածն և 16 մաս թթուածին. այսինքն 9 ֆունտ ջրի 8 ֆունտը կըլինի թթուածին, իսկ 1 ֆ. ջրածնի:

Այս լուրաբերութիւնները միշտ միեւնոյնն են մնում, եթէ միայն փորձը խնամքով կատարուած լինի: Սա ըիմիական քաղաքութիւնների վերաբերմամբ առաջին մեծ օրէնքն է, այսինքն, իւրաքանչիւր մարմնի քաղադիչ մասերը միշտ միեւնոյն քանակութեամբ են միացած իրար հետ: Զուրը միշտ և ամենայն տեղ բաղկացած է 16 մաս թթուածնից (իւր կշռով) և 2 մաս ջրածնից:


§ IX. ՀՈՒՐ

21. Ի՞նչ զանազանութիւնն կայ ծովի և աղբիւրի ջրի մէջ:

Մենք գիտենք, որ ծովի ջուրը աղի է կամ ուրիշ խօսքով նրա մէջ կայ լուծուած աղ ջուրը շատ հեշտ կարելի է աղիացնել,

եթէ նրա մէջ գցենք հասարակ աղ. աղը կը լուծուի և ջուրը աղի կը դառնայ:

21-րդ փորձ: Եթէ ծովի ջուրը եռացնենք և գոլորշին հաւաքենք մի անօթի մէջ ու պաղեցնենք, այն ժամանակ այդ գոլորշուց կը ստանանք մի այնպիսի ջուր, որն արդէն աղի չի լինի: Այդ անում են առանձին ձեւ ունեցող ապակեայ ամանների մէջ (եղջիւրաձեւ), որոնք կոչում են ըէտորտ (նկար 17). ջուրը



Նկար 17.

ածած է ըէտորտի մէջ: Այդ ըէտորտի տակին դնում են լապտեր և տաքացնում են ջուրը մինչև նրա եռալը. գոլորշին հաւաքում է մի ուրիշ ամանի մէջ, որի վրայ վերևից սառը ջուր է թափւում գոլորշին հեղուկ ջուր դարձնելու համար: Այդպիսի ջուրը կոչում է վերաթորուած ջուր (перегнанная вода): Վերաթորուած ջուրն արդէն աղի համ չունի, որովհետեւ բոլոր աղը մնում է ըէտորտի մէջ:

Այս միջոցը գործ են ածում լաճախակի ճանապարհին նաև բում ծովի աղի ջրից խմելու ջուր պատրաստելու համար: Երբեմն և աղբիւրի կամ գետի ջուրը նոյնպէս պարունակում է իւր մէջ լուծուած աղ, բայց նրա քանակութիւնը այնչափ քիչ է լինում, որ այդախտի ջուրը աղի համ չէ ունենում. սակայն քիմիկոսը գեղեցիկ միջոց ունի, որի շնորհիւ նա կարող է իմանալ թէ մի որ և է ջրի մէջ աղ կայ, թէ ոչ՝ մինչև անգամ եթէ աղն ամենաքիչ քանակութեամբ լինի: Այդ իմանալու համար նա գործ է ածում անհամեմատ աւելի նուրբ և սուր միջոց քան մեր լեզուն է. ցոյց տանք փորձով:

22. Ի՞նչ փորձով են իմանում թէ ջրի մէջ աղ կայ:

22-րդ փորձ: Վերցնենք վերաթորուած ջրով լիքը երկու մեծ և թափանցիկ բաժակ. մէկի մէջ դցենք մի փոքրիկ կտոր աղ և յետոյ այդ ջուրը խառնենք, որ աղը բոլորովին լուծուի ջրի մէջ. եթէ հիմա ջրի համը տեսնէք, նա բոլորովին աղի չի լինի, որովհետև աղի կտորը շատ փոքրիկ էր: Այժմ ես ունեմ ձեռքիս մի նիւթի լուծուածք, որը կոչում է արծաթի բորակատ (азотнокислое серебро կոմ ляписъ). այդ նիւթից երկու կամ երեք

կաթիլ զգուշութեամբ ածում եմ երկու բաժակն էի: Դուք իսկոյն կը զանազանութիւնը. այն բաժակում, որի մէջ աղի փոքրիկ կտոր կար, նշմարում է թեթև, սպիտակ պղտորութիւն, իսկ միւս բաժակը առաջուայ ալէս մընում է պարզ և թափանցիկ:

Ուրեմն՝ քիմիկոսը իւր փորձերով կարող է գտնել այնպիսի նիւթերի ներկայութիւնը, որոնց հասարակ դիտողը չէ նկատում և չէ կարող տեսնել:

23. Լուծումն եւ սիրեղացումն:


Ուրիշ շատ նիւթեր նոյնպէս մեծ հեշտութեամբ լուծւում են ջրի մէջ. օրինակ՝ շաքարը, շիպը, նատրիւնը (сода): Կան և այնպիսիները, որոնք կամ քիչ են լուծւում (գաջ),



Նկար 18.


կամ բոլորովին չեն լուծւում հասարակ ջրի մէջ (աւազ, կաւիճ, կայծքար):

23-րդ փորձ: Եթէ վերցնենք երկու ունց (14 մսխալ) նատրոնական բնածխատ կամ նատրոն կոչուած աղից և ածենք նորա վրայ մէկ ունց (7 մսխալ) տաք ջուր ու խառնենք, կը տեսնենք որ աղը ջրի մէջ բոլորովին լուծւում է: Եթէ թողնենք, որ այդ լուծուածքը հովանալ, այն ժամանակ բաժակի պատերի վրայ ներսից կը նկատենք աղի փոքրիկ փայլուն




Նկար 19.

կտորներ, որոնք կոչւում են սիլիկելիներ և որոնք ունին միատեսակ ձև (նկար 19). միայն



Նկար 20.

է հարկէ մէկը կարող է աւելի մեծ լինել քան միւսը: Միենոյն փորձը անենք շիպի վրայ՝



վերցնելով մէկ ունց շիպ և լուծելով մէկ ունց ջրի մէջ. հետզհետէ կերկան շիպի բիւրեղներ, որոնք արդէն ուրիշ ձև կունենան (20-դ նըկար): Միենոյնք կարող ենք անել և կապոյտ քարի կամ պղնձական ծծմբատի (արջասպ—մնձնայ կյորօսե) հետ. որուա բիւրեղները կունենան արդէն բոլորովին մի ալ ձև (20-դ նկար):

Յետոյ արէք հետևեալ փորձը. խառնեցէք կէս ունց ($3^{1/2}$ մսխալ) մանրացրած շիպ, կէս ունց ($1/2$ մսխալ) մանրացրած պղնձական ծծլմբատ (արջասպ) և այդ երկուսը սանդի մէջ լաւ խառնելուց յետոյ, լուծէք մէկ ունց (7 մսխալ) տաք ջրի մէջ ու թողէք, որ այդ լուծուածքը սառչի: Այժմ լաւ նկատեցէք թէ ինչ կը լինի: Դուք կըտեսնէք, որ առաջանում են շիպի անգոյն բիւրեղներ: Ուրեմն՝ բիւրեղները կարելի է բաժանել իրարից երկու զանազան աղեր, թէև նրանք մեծ խնամքով խառնուած լինին. դա ցոյց է տալիս մեզ՝ թէ ինչ միջոցների է դիմում ինքը բնութիւնը տարբեր նիւթերը երարից բաժանելու համար: Ուստի կարելի է ենթադրել որ շատ հանքեր և քարեր առաջացնել են այդ կերպով. օրինակ՝ կրաքարը (известнякъ), ծորնաքարը (плакитковый шпатъ), դաշտալին սպաթ (полевой

տպաէ), կվարց (քարցի), ևալն. սովա բոլորն
էլ բիւրեղաձև հանքեր են, թէև ամեն անդամ
մենք չենք կարող ճշտիւ ցոյց տալ թէ ինչ
միջոցներով է կատարուել բնութեան մէջ այդ
բիւրեղացումը:

§ X. ԶՈՒՐ

24. Անձրեւը վերաթողուած ջուր է:
Եթէ մտածէք թէ ինչից է առաջանում
անձրեւ, կը հասկանաք որ անձրեւի ջուրը ա-
մենամաքուր ջուրն է երկրիս վրայէ Անձրեւը
գալիս է ամպերից, երբ օդի մէջ եղած գոլոր-
շին խտանում—դառնում է հեղուկ ջուր:
Երբ տաք քամին փչում է ովկիանոսի վը-
րայով նա ովկիանոսից տունում է շատ քանա-
կութեամբ դիլորի և այդ կատարուած է ճիշտ
այնպէս՝ ինչպէս որ գոլորշին դուրս է գալիս
ըէտորտից. բայց երբ այդ տաք և խոնաւ օդը
տէղափոխում է ուրիշ աւելի սառ տեղեր, նա
ցըտանում է և այլ ևս չէ կտրողտնում պա-
հել իւր մէջ այնչափ գոլորշի որչափ առաջ,
երբ տաք էր, այնպէս որ այդ խոնաւութիւնը
ինչպէս անձրեւ կաթիլների ձեւով նստում
է երկրի երեսին: Ուրեմն անձրեւ վերաթա-
րուած ջուր է և դուք տեսնում էք, որ մի

հսկայական վերաթորումն է կատարուած ամ
բողջ երկրագնդի վրայ և երկրի վերայ հոսող
ջրի իւրաքանչիւր կաթիլը մի ժամանակ վե-
րաթորուած է եղել ովկիանոսից անձրեւի ձե-
ւով և կրկին վերադառնում է գէպի նոյն տեղը:
25. Կախուած (ՎՅԵՇՊԵՆԻԱՅ) եւ լու-
ծուած մասնիկներ:

Այդ ջուրը որ հոսում է մեր առուակնե-
րով, գետերով և աղբիւրներով գէպի ովկիա-
նոսը՝ արդեօք տանում է իւր հետ մի որ և է
բան:

Անկասկած, որովհետեւ ջուրը իւր ճա-
նապարհին ողողում է և տանում գէպի ծովը
հող, աւազ, կեղաստութիւններ: Եթէ վերցնենք
մի բաժակ գետի ջուր (մինչև անդամ ամե-
նաքուր) և քիչ ժամանակով թողնենք հան-
գիստ դրութեան մէջ՝ կը տեսնէք, որ բաժակի
լատակին նստում է տականք հողից և աւա-
զից բաղկացած: Այդ աւազը և կեղտը, որը
գետը տանում է գէ-
պի ծովը, ջրից կարելի
է հեռացնել քամելով
այդ ջուրը կամ թըղ-
թի միջով, այսինքն՝
ածելով կեղտոտ ջու-
րը ձագարում դը-
ր Նկար 21.



ըուած ծծող թղթի վրայ, ինչպէս ցոյց է տալիս
21 նկարը, կամ աւազի, ապընդի և ածխի մի-
ջոցով, ինչպէս անումայեն տներում ջուր
մաքրող մեքենաներում:

25-ր փորձ: Սակայն դուք հասկանում
էք որ քամելով կարելի է ջրից հեռացնել մի-
այն այն նիւթերը, այն պինդ մասնիկները, ո-
րոնք ցրուած են նրա մէջ և լողում են, իսկ
լուժուած նիւթերը անկարելի է հեռացնել
ջրից քամելով: Փորձեցէք քամել թղթով այն
ջուրը, որի մէջ լուծուած է կապոյտ լեղակի
լուծուածքի մի քանի կաթիլ. ջրի գոյնը ան-
կարելի կը լինի փոխել: Դրա համար ջուրը
պէտք է վերաթորել առանձին թէտօրտներում
(եղիւրաձև ապակեալ անօթ), այսինքն՝ պէտք է
այդպիսի ջուրը եռացնել և լետոյ գոլորշին նո-
րից ցրտացնելով հեղուկ ջուր դարձնել:

26. Խիստ կամ կոշտ եւ կակուկ կամ
քաղցր ջուր:

26-ր փորձ: Դէպի ովկիանոսը հոսող ջու-
րը տանում է իւր հետ և մի բանի իւր մէջ
լուժուած նիւթեր: Եթէ վերցնենք մի շիշ
պարզ աղբւրի կամ քամուած գետի ջուր և
մաքուր ճենապակեալ ամանի մէջ գոլորշիաց-
նենք՝ կը տեսնենք, որ ամանի յատակին նըս-
տում է պինդ, մնացորդ. իսկ եթէ գոլորշիաց-

ներու լինենք մի շիշ վերաթորուած ջուր, ոչ
մի պինդ մնացորդ կամ տականք չենք նկա-
տիլ. որովհետև անձրւի ջուրը թափանցերով
հողի մէջ ճանապարհին լուծում է այլ և այլ
նիւթեր և տանում իւր հետ, ուստի ծովը շա-
րունակ, փոքր առ փոքր անմաքուր է դառ-
նում ընդունելով իւր մէջ գետերի ջրի մէջ
լուծուած և ցրուած պէս պէս նիւթերը:

Թէ ինչ տեսակ լուծուած նիւթեր են պա-
րունակուում գետերի, առօւակների և այլն ջրե-
րի մէջ, այդ կախուած է անցուշտ այն հողի
յատկութիւններից, որի վրայով հոսում է ջու-
րը. նոյնպէս և այն կեղտոտութիւններից որ
թափում են ջրի մէջ շրջակալքների բնակիչ-
ները: Մի քանի աղբւրներ աւելի աղի են,
քան մինչև անգամ ծովը, որովհետև հոսում
են աղահանքների խաւերի միջով:

Շատ գետերի կամ աղբւրների ջրի մա-
սին ասում են որ նրանց ջուրը կոշտ է, մինչ-
դեռ անձրւի ջուրը միշտ կակուկ է:

Խիստ կամ կոշտ ջուր անուանում են այն
ջուրը, որի մէջ օճառը (սապօն) չէ փրփռում,
այլ ընդհակառակը լերգանում, պնդանում է:
Տեսնենք ինչ է սրա պատճառը և դիմենք փորձի:

27. Ի՞նչն է ջրի խստութեան կամ կոշ-
տութեան պատճառը:

27-ի փորձ: Վերցրէք մի քիչ գաճ (ծեծ-
ռած ու մանրացրած) և ածէք վերաթորուած
կամ անձրեսի (կակուղ) ջրով լիքը մի մեծ շիշ
մէջ: Լաւ խառնելուց յետով քամեցէք այդ ջուրը
ծծող թղթով, ստացած ջուրը թէւ թափան-
ցիկ և պարզ կը լինի, բայց միւնոյն ժամանակ
նա կոշտ կը լինի: Այդ կարելի է նկատել երբ
դուք կը լուանաք այդ ջրով ձեր ձեռքերը,
կամ աւելի ևս լաւ, երբ վաղօրօք մի քիչ օճառ-
լուծէք տաք ջրի մէջ և այդ ջրեցը մի քանի կաթիլ
ածէք մեր ստացած կոշտ ջրի վերայ. այն ժա-
մանակ դուք կը տեսնէք, որ օճառը չէ լուծ-
ւում ջրի մէջ և չէ փրփրում, այլ ընդհակառակը
լերդանում, պնդանում է և միայն այն ժա-
մանակն է փրփուր առաջանում, երբ օճառ
շատ աւելացնէք: Ուրեմն աղբիւրների և գե-
տերի ջուրը կոշտ է լինում, երբ պարունակում
է իւր մէջ լուծուած դրութեամբ գաճ կամ
կրի ծծմբատ: Եթէ եռացնենք այդպիսի ջուրը,
նա ոչինչ փոփխութեան չի ենթարկուիլ. եռա-
ցրած ջուրը ցըտանալուց յետով դարձեալ կոշտ
կըմնալ:

§ XI. ԶՈՒՐ

28. Կոշտ կարմային ջուրը եռացնելուց
կակղանում է:

Կոշտ ջրի մի ուրիշ տեսակն էլ կայ, որը
տարբերում է վերև յիշածից: Մենք գիտենք
արդէն (փորձ 7), որ մեր թոքերից արտաշըն-
չած օդը պարունակում է իւր մէջ բնածխա-
կան թթւուտ գաղ, որ եթէ բերանով փշելու
լինենք բաժակի մէջ ածած պարզ կրային ջրի
վերայ, նրա մէջ կը գոյանալ մի սպիտակ և
անլուծելի փոշի, որ կոչւում է կաւիճ կամ
կոշտ բնածխատ:

28-րդ փորձ: Կրկնեցէք 7-րդ փորձը, միայն
այն զանազանութեամբ, որ փեցէք աւելի եր-
կար ժամանակ, օրինակ 5 րոպէ, դուք կը տես-
նէք, որ կրային ջրի պղտորութիւնը սկսում է
անհետանալ և ջուրը դառնում է աւելի պարզ,
թէւ բոլորովին պարզ դարձնել անկարելի է:
Այժմ եթէ այդպիսի ջուրը քամէք ծծող թղթով
և փորձէք օճառով, կը տեսնէք որ նա կոշտ է:
Ի՞նչն է դրա պատճառը: Պատճառն այն է, որ
մեր թոքերի բնածխական թթւուտը ընդունա-
կութիւն ունի լուծել այն կաւիճը, որը, ինչ-
պէս գիտէք, չէ լուծուում մաքուր ջրի մէջ:
Այնուամենայնիւ այդ ջուրը, կրկնում եմ կոշտ
է, որովհետեւ պարունակում է իւր մէջ լուծուած
դրութեամբ կաւիճ:

Բայց բնածխական թթւուտը գաղ է: Ու-
րեմն՝ եթէ ջուրը եռացնելով հեռացնենք

ալդ գազը, այն ժամանակ, կաւիճը որը բը-
նածխական թթւուտի ազդեցութիւնից լուծ-
ուած դրութեոն մէջ էր, կը նստի բաժակի
տակ սպիտակ փոշու ձեռվի: Ալդ լաւ նկատելի
կը լինի, եթէ ապակեալ ամանի մէջ եռացնէք
կոշտ ջուրը: Այժմ եթէ այս եռացրած ջուրը
քամէք և փորձէք օճառով, կը տեսնէք որ նա
կոշտ չէ, այլ ընդհակառակ եռացնելուց կակ-
ղացել է: Մի ուրիշ միջոց էլ կայ կակղացնելու
կոշտ բնածխակտն թթւուտի մէջ լուծուած՝
կաւիճ պարունակող ջուրը. ալէտք է ալդպիսի
ջրի վրայ կրային ջուր աւելացնել: Այն ժամա-
նակ, կիրը քիմիապէս կը միանալ բնածխա-
կան թթւուտի հետ և կը տայ կաւիճ, որը
առաջուայ կաւճի հետ միասին՝ ինչպէս անլու-
ծելի մի փոշի կը նստի ամանի լատակին: Այս
վերջին միջոցով կարելի է կոշտ կաւճային կրից
մեծ քանակութեամբ կակուդ ջուր պատրաստել:

29. Զանազան գետերի ջուրը զանազան
կոշտութիւն ունի:

Կոշտ կաւճային ջուրը տարբերւում է
կոշտ զազային ջրից, որովհետեւ առաջնը
ինչպէս տեսաք, կարելի է կակղացնել եռացնե-
լով կամ վրան կրային ջուր աւելացնելով, իսկ
երկրորդը անկարելի է կակղացնել ալդ միջոց-
ներով:

Եթէ անձրեսի ջուրը թափանցում է դաճ-
պարունակող հողի մէջ, այն ժամանակ ալդ
տեղի գետերը և աղբեւըները կոշտ կը լինեն
գաճից: Բայց մինչեւ անգամ անձրեսի ջուրն
էլ, թէւ նա աւելի մաքուր է, քան մի որ և
է ուրիշ ջուր, բոլորովին մաքուր չէ կարելի
համարել, որովհետեւ օդի միջով անցնելիս նո-
րա մէջ լուծուած է բնածխական թթւուտ
գազը (9-ր. փորձ):

Ալդ է պատճառը որ անձրեսի ջուրը երբ
անցնում է մի այնպիսի հողով, որը բաղկացած
է կրաքարից կամ կաւճից, լուծուած է իւր մէջ
մի քիչ կաւճ և այն ժամանակ նա դառնուած
է կոշտ: Այն կեղեղ, որը յաճախակի գտնուած
ենք կաթսաների և ինքնաեռների մէջ, սո-
վորաբար ոչ այլ ինչ է, եթէ ոչ կաւճ, որը
առաջացնել է ջրից նորա եռալու ժամանակ և
կալել է կաթսայի պատերին:

Եթէ անձրեսի ջուրը հոսուած է հատա-
քարով (զրանիտ) կարուստ տեղերով, ուր չը
կայ կաւճ կամ գաճ, այն ժամանակ ջուրը կա-
կուղ է մնուած, որովհետեւ գրանիտը շատ կարծր
է և ջուրը չէ կարող նրան իւր մէջ լուծել:

30. Գետնի երեսով հոսող ջուրը:

Երբ ջուրը հոսուած է քաղաքի միջով կամ
կոյուղիների մօտով (այն խողովակների որոնց

մէջ թափուամ են կեղտոտութիւնները), նա
կեղտոտուամ է և գառնուամ է խմելու համար
անպէտք, մինչեւ անդամ թունաւոր և զանա-
զան տարափոխիկ հիւանդութիւնների պատ-
ճառ: Երբեմն ամենասլարգ ջուրը պարունա-
կուամ է իւր մէջ կեղտոտութիւններ, երբ հո-
սուամ է քաղաքների կամ կոյուղիների մօտով:
Այդ պատճառով քաղաքներին մասակարարուամ
են հեռուից բերած ջուր, որը պահուամ են
առանձին ջրամբարների մէջ քաղաքից հեռու
և այդ ջուրը մաքրութեան համար բերուամ են
երկաթի կամ արծճի խողովակներով, որ չապտ-
կանուի գետնի երեսով հոսող կեղտոտ ջրի
հետ խառնուելով:

31. Ջրի մէջ լուծուամ են եւ զազեր:
Գաղերը նոյնպէս լուծվուամ են ջրի մէջ.
մի քանիսը շատ, միւսները քիչ: Մենք տե-
սանք արդէն, որ անձըսի ջրի մէջ լուծուած
է լինուամ բնածիսական թթուուտ, իսկ նատրո-
նական և սելտերեան ջրի մէջ այդ գաղն այն-
չափ շատ է լինուամ լուծուած, որ շեշի բերա-
նը բաց անելիս՝ գազը ուժով է դուրս խփուամ:
Մինչեւ անդամ մթնոլորտի օդը լուծուամ է
ջրի մէջ. և լուծուած թթուածինն է, որ աղ-
բէրի ջրին տալիս է ախորժելի-թարմ համ:
Եթէ մենք եռացնենք աղբիւրի ջուրը, լու-

ծուած օդը նրանից կը հեռանայ և հովանա-
լուց յետոյ այդպիսի ջուրը թարմութիւնը կը
կորցնի ու անախորժ համ կունենայ: Մանա-
ւանդ մեծ նշանակութիւն ունի այն թթուա-
ծինը, որ լուծուած է ծովի ջրի մէջ, որովհե-
տեւ նա անհրաժեշտ է ձկների կեանքի համար,
ինչպէս և այն կենդանիների համար, որոնք
ապլուամ են օդի մէջ: Երբ ջուրն անցնուամ է
ձկների քիմուխաներով, նորա թթուածինը
ծծուամ է արիւնի մէջ, այնպէս որ եթէ կեն-
դանի ձուկը գնենք մի այնպիսի սառը ջրի մէջ,
որտեղից թթուածինը հեռացըել ենք եռացնելով
և որը հաղորդակցութիւն չունի արտաքին օդի
հետ, նա իսկոյն կը մեռնի, որովհետև զրկուած
կը լինի շնչառութեան համար անհրաժեշտ
թթուածնից:

§ XII ՀՈՂ

32. Հողի մնասին:

Տեսնենք՝ թէ ի՞նչ է սովորեցնուամ մեզ գի-
տութիւնը հողի մասին, այն պինդ նիւթի, ո-
րից բաղկացած է մեր երկրագունդը:

Կրակը, օդը և ջուրը՝ հողի հետ համե-
մատած՝ աւելի պարզ մարմիններ են:

Կրակն այն տաքութիւնն է, որը գոյա-

նում է մարմինների ալբուելու կամ քիմիապէս իրար հետ միանալու ժամանակ:

Զուրը երկրագունդը շրջապատող հեղուկ է և բաղկացած է երկու իրար հետ քիմիապէս միացած գազերից՝ ջրածնից և թթուածից:

Օղը—երկու գազերի՝ բորակածնի և թթուածնի՝ խառնուրդ է. շրջապատում է մեզ և անհրաժեշտ է շնչառութեան համար:

Իսկ չողը աւելի դժուար և աւելի բարդ մարմին է և այս գլքից մենք շատ քիչ բան միայն կարող ենք իմանալ նորա մասին:


Նախ և առաջ հողը պինդ է. բայց այդ պնդութիւնը կարելի է ոչնչացնել, եթէ սաստիկ տաքութեան ենթարկենք: Բոլոր պինդ մարմինները կարելի է հալել և հեղուկ դարձնել, եթէ բաւականաչափ տաքացնենք. պինդ երկա՛ծը հալում է վառարանում, այնպէս որ կարելի է այդպիսի երկաթը թափիել ջրի նման. նոյնպէս և ապակին կարելի է հալել ու ջրի նման թափիլ: Նմանապէս և բոլոր պինդ մարմինները կարող են հալուել և հեղուկ դառնալ, մինչև անգամ ջրի նման եռալ և գոլուշիանալ, եթէ միայն կարողանանք շատ տաքացնել: Եւ արդարև երկրագնդի միջուկը այնչափ մեծ տաքութիւն ունի, որ անտեղ բոլոր մարմինները հալուած դրութեան մէջ են և մենք

շատ անգամ տեսնում ենք որ հրաբուղիներից դուրս են թափում բորբոքած, հալուած և հեղուկ գարձած քարալին զանգուածներ, որոնք կոչում են խանճ կամ լավա և որոնք երբեմն հեղեղի պէս հոսելով քաղաքների վրայ ալրում ու ոչնչացնում են ամէն բան, ինչ որ պատահում է նրանց ճանապարհին, ինչպէս այդ եղաւ 79 թւականին Ք. Տ. լետով, երբ վեսուք լերան (Դտալիխում) վիժումներից երկու մեծ քաղաք՝ Հերկուլանում և Պոմպէյա քանդուեցան և մոխրի տակ թաղուեցան:

Վերցնենք մի քանի զանազան տեսակ հողափին մարմիններ և տեսնենք թէ ի՞նչից են նրանք բաղկացած և ինչ ենք կարող նրանցից ստանալ:

33. Կաւճից բնածիսական թթուուտ ստանալը:

29-րդ փորձ: Վերցրէք մի քանի կտոր կափճ, կրաքար կամ մարմարիոն — սրանք բոլորն էլ քիմիապէս միւսնոյն նիւթն են ներկայացնում — և դրէք մի ապակեալ ա-



Նկար 22.

մանի մէջ, որի բերանը փակած է խցանով (22-րդ

նկար). խցանի միջով անցնում են երկու փոքրիկ խողովակ. մէկը կոր՝ գազը տանելու համար, միւսը ուղիղ. այդ վերջինը ծայրին վերջանում է ձագարով։ Ամանի մէջ ածէք մի քիչ ջուր և յետոյ ձագարով մի քանի կաթիլ բրոջրանական (соляная или хлористо—водородная кислота) կոչուած թթւուտից։ Դուք իսկոյն կը նկատէք, որ կաւճից սկսում են դուրս գալ փոքրիկ գազային բշտիկներ և եթէ կոր խողովակի ծայրը ընկղմէք մի ջրով լիքը բաժակի մէջ, այդ բշտիկներն աւելի լաւ նկատելի կը լինին։ Բաժակի փոխարէն կարող ենք վերցնել մի մեծ շիշ և գազը տանել նրա մէջ։ և եթէ մի քանի ըստէից յետոյ վառած մոմը մտցնենք այդ շիշի մէջ, նա (մոմը) կը հանգչի. եթէ շիշի մէջ ածենք պարզ կրային ջուր, ջուրը իսկոյն կը պղտորուի. կամ եթէ վերցնէք մի ուրիշ շիշ մաքուր օդով լիք և դնէք նրա մէջ վառած մոմ ու յետոյ առաջուայ շիշից ածէք այդ շիշի մէջ գազ այնպէս, ինչպէս ածում էք ջուրը, դուք իսկոյն կը նկատէք, որ մոմը հանգչում է։ Այս փորձերից ուրեմն պարզ է, որ այդ գազը բնածխական թթւուտն է, որովհետեւ նա հանգցնում է մոմը, պղտորում է կրային ջուրը և աւելի ծանը է օդից, այնպէս որ կարելի է ջրի պէս մէկ ամանից միւսի մէջ

ածել։ Այս բնածխական թթւուտը գտնուում է կաւճի մէջ քիմիալիչս միացած և դուրս է գալիս կաւճից, երբ նորա վերայ ածենք մի ուրիշ աւելի զօրեղ թթւուտ, ինչպէս քլորջրածնական թթւուտն է։ Եւ արդարեւ՝ եթէ կաւճի, կրաքարի կամ մարմարիոնի մի կտոր դնենք կրակի մէջ և սաստիկ տաքացնենք, կը տեսնենք որ նրանք փոխուում են ուրիշ նիւթի և երբայդակի կաւճի վերայ ածենք մի որ և է թթւուտ, կաւճից էլ չեն դուրս գալ գազային բշտիկներ, որովհետեւ կաւճը տաքութիւնից կորցնում է իւր բնածխական թթւուտը և փոխուում է ուրիշ նիւթի։ Եթէ թթւուտի փոխարէն այդ ստացած նիւթի վերայ ջուր ածենք, նա իսկոյն փոշի կը գառնայ և այն աստիճան կը տաքանայ։ որ ջուրը կ'եռայ և կը գոլորշիանայ։ Այսպէս ուրեմն ջերմութեան ազդեցութիւնից կրաքարը, մարմարիոնը կամ կաւճը կորցնում են իրանց բնածխական թթւուտը և տալիս են միայն պինդ մի նիւթ, որն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր հասարակ չը հանդցրած կիրք, որը և այդպէս էլ պատրաստում են մեծ քանակութեամբ կիրք ալբելու վառարաններում։ Երբ այդպիսի կիրք պատրաստում է մեծ քանակութեամբ կիրք հանգցրած կրի վերայ ջուր ենք ածում, կիրք հանգչում է, այսինքն՝ քիմապէս միանում


Է ջրի հետ և դառնում է հանգած կամ շիջած կիր:

Նշանակում է, մենք ալժմ իմացանք որ կաւիծը կամ մարմարիոնը առաջացել են կրի եւ քնածիսական թթուութի քիմիապէս իրար հետ միանալուց և ուրեմն հողային նիւթից մենք կարող ենք ստանալ գազ:

§ XIII. ՀՈՂ.

34. Թթուածին ստանալը:

30-րդ փորձ: Վերցնենք մի ուրիշ հողային նիւթ, որը թէև այնքան սովորական չէ, ինչ պէս կաւիճը, սակայն մի քանի նշանաւոր տեղեկութիւններ կարող է մեզ հաղորդել: Այդ



Նկար 23.

Հողային նիւթը մի կարմիր փոշի է և կոչւում է սնդկական թթուուկ (օքիս րդուա). ածենք դրանից մի քիչ մի գժուարահալ ապակեալ ամանի մէջ (նկ. 23). փակենք ամանի բերանը

խցանով, որի միջով անցնում է կոր ապակեալ խողովակ և յետոյ ամանը պատուանդանի կամ ստատիվի վերայ ամրացնելուց յետոյ, սկսենք տաքացնել: Փոշին խկոյն կը սեանայ և յետոյ ամանի սառը պատերի վերայ կը նստի մի փալուն նիւթ. միւնոյն ժամանակ խողովակի ծալրից դուրս կը գան գազի բշտիկներ: Այդ գազը կարելի է հաւաքել այնպէս, ինչպէս արդէն գիտենք նախընթաց փորձերից: Եթէ մօտեցնենք այդ գազին առկայծող լուցկին, կը տեսնենք որ լուցկին խկոյն վառւում է. ուրեմն այդ գազը թթուածին է, իսկ այն փալուն նիւթը, որ հաւաքւում, նստում էր ամանի պատերի վերայ, սնդիկ է:

Այսպէս ուրեմն՝ իմացանք, որ այդ կարմիր փոշին կարելի է տաքացնելով վերլուծել երկու իրարից բոլորովին տարբեր նիւթերի՝ ա. թթուածնի (գազ) և բ. սնդկի (մետաղ): Այդ փոշին—որտեղից որ նա վերցրած լինի—տաքացնելիս ոչ միայն թթուածին և սնդկի է միշտ տալիս, այլ և այդ կարմիր փոշու որոշ քանակութիւնը միշտ տալիս է որոշ քանակութեամբ թթուածին և որոշ քանակութեամբ սնդկի:


Այժմ դուք տեսնում էք, թէ ինչու մեր կարմիր փոշին կոչւում է սնդկական թթուուկ,

որովհետև նա ներկայացնում է սնդկի և թթուածնի քիմիական միաւորութիւնը: Ոչ ոք առաջուց չէր կարող ասել, թէ այդ կարմիր փոշին բաղկացած է երկու այդպէս զանազան նիւթերից, միայն փորձով ենք կարողանում հասնել այդպիսի անսպասելի հետևսնքների: Քիմիկուները կշռելով կարմիր փոշին և նրանից ստացած թթուածնի և սնդիկի քանակութիւնները՝ իմացել են, որ 216 Փունտ կարմիր սնդկական թթուուկ տալիս է միշտ 200 Փունտ սնդիկ և 16 Փունտ. թթուածին: Սրանով կրկին անգամ ապացուցանում է այն հիմնական օրէնքը, որ իւրաքանչիւր քիմիական միաւորութիւն ունի միշտ որոշ եւ անփոփոխ բաղադրութիւն:

35. Թթուանապուց մետաղները ծանրանում են:

Գրեթէ բոլոր մեզ շըջապատող մարմինները պարունակում են թթուածին գազը միացած ուրիշ նիւթերի հետ: Բոլոր մետաղները՝ երկաթ, պղինձ, արծաթ, ցինկ, արճիճ, և այլն սնդկի նման կարող են միանալ թթուածնի հետ և տալ թթուուկ, և թթուուկը միշտ աւելի ծանր է լինում քան այն մետաղը, որը պարունակում է այդ թթուուկի մէջ, որովհետև թթուուկի մէջ կալ և թթուածին. իսկ թթուածինը, ինչպէս արդէն զիտենք, որոշ կշռուում է

34-ր վիորժ: Ապացուցանելու համար վերցնենք մի փոքրիկ պայտաձև մագնիս (նկ. 24) և նորա ծայրերը ընկղմենք երկաթի խարտուածքի (փոշի) մէջ. փոշին կը կպչի մագնիսի



Նկար 24.

ծայրերին և կը կազմի երկու փոքրիկ փունջ: Յետոյ այդ մագնիսը իւր խարտուածքի հետ միասին կախ տանք կշռուի մի ուսի վերայ, իսկ միւս թաթի վերայ դնենք. հաւասարակշռութեան համար հարկաւոր քարեր: Այժմ եթէ մագնիսին կպած խարտուածքի տակին դնենք մի վառած լապտեր, խարտուածքն իսկոյն կը կսի այլութիւ, այսինքն միանալ օդի թթուածնի հետ և կը տալ երկաթական թթուուկ կամ հասարակ լեզուով երկաթի ժանգ: Միենոյն ժամանակ կը տեսնենք, որ կշռուքը չէ մնում հաւասարակշռութեան մէջ, այլ մագնի-

սի կողմը իջնում է, որովհետև ժանդը երկաթի խարուածքից աւելի ծանր է:

36. Հողային նիւթերի մէջ պարունակում են մետաղներ:

Երկու վերջին փորձերից իմացանք, որ հողային նիւթերը պարունակում են երեսն փայլուն մետաղ: Մի երկու փորձ էլ անենք նոյնը ապացուցանելու համար:

32-րդ փորձ: Վերցնենք կապուտ քարի կամ պղնձական ծծմբատի մի փոքրիկ բիւրեղ. լուծենք այդ բիւրեղը մի բաժակ ջրի մէջ և ընկած այդ կապուտ հեղուկի մէջ երկաթի դանակի մաքուր ծալը կամ առ հասարակ փայլուն երկաթի մի կտոր: Երբ դանակը հանենք



Նկար 25.

հեղուկից, կը տեսնենք որ նա ստացել է փայլուն եւ մաքուր պղնձի կարմիր գոյն (նկ. 25): Եթէ նորից մի ուրիշ կտոր երկաթ ընկղմենք կապուտ հեղուկի մէջ և թողնենք այնտեղ մի քանի ժամանակ, կը տեսնենք որ կապուտ գոյնը կորչում է և երկաթի վերայ նստում է աւելի շատ պղնձ: մուլթ փոշու ձեռք. մի երլորդ երկաթի կտորն արդէն բաւական է որ բոլոր

պղնձը հեռանալ լուծուածքից (նկ. 25):

33-րդ փորձ: Վերցնենք կէս ունց մի տեսակ սպիտակ պղնձի նիւթից, որը կոչւում է արճընական քացախատ կամ արճընի շաքար և լուծենք մի բաժակ ջրի մէջ: Յետոյ վերցնենք ցինկի մի փոքրիկ կտոր, թելով կապենք փայտեալ ձողի վերայ և այդ փայտեալ ձողը դնենք բաժակի վերայ այնպէս, որ ցինկը ընկղմուի հեղուկի մէջ



(նկ. 26): Մի քանի ժամից յետոյ ցինկի վերայ կը նստեն մաքուր արճընի բիւրեղներ, որոնք ծառի ճիւղերի ձև կունենան: Այդ ցոյց է տալիս մեզ որ մեր վերցրած սպիտակ հողային նիւթը մետաղային արճին էլ է պարունակում:

§ XIV. ՀՈՂ

37. Քարածուխ (каменный уголь):

Հասարակ ածուխը, ինչպէս մենք գիտենք, պարունակում է ընածուխ կամ՝ ածխածին (углеродъ), որովհետեւ այրուելիս, այսինքն

օդի թթուածնի հետ միանալիս տալիս է բը-
նածխական թթուուտ: Երեք դուք արդէն գե-
տէք, որ քարածուլիսը գտնուում է հանքի ձեռվ
գետնի տակ, երբեմն շատ խոր, երբեմն գետնի
երեսին շատ մօտ, կամ գետնի երեսին:


1. Խնչալէս է առաջացել քարածուլիսը:
Թէև ձեզ օտարուտի կը թուի, սակայն պիտ
ասեմ որ քարածուխը ոչ ալ ինչ է, եթէ ոչ
այն քոյսերի մնացորդը, որոնք մի ժամանակ
երկրի մակերևութիւ վերալ են եղել և ինտոյ
թաղուել են գետնի տակ՝ նրա խորքերում: Երբ
իջնէք քարածխահանքը, դուք կը տեսնէք նրա
կամարների, կամ նրա ստորերկրեալ անցքերի
յատակների վերալ տերեւների և բոյսերի ուրիշ
մասերի հետքեր. դա անշուշտ պարզ կերպով
ցոյց է տալիս մեզ որ այստեղ թաղուած են
բոյսեր և եթէ քարակացնենք, ողորկենք և կո-
կենք քարածխի մի կտոր ու խոշորացուցով
նայենք, քարածխի մէջ կը տեսնենք բոյսի բազ-
մաթիւ նշաններ:

2. Ածուխը, ասացինք, պարունակում է բը-
նածուխ (ածխածին). Եթէ նա ալրւում է փայ-
լուն բոցով, առաջանում է բնածխական թըթ-
լուտ կոչուած գաղը. Եթէ նա ալրւում է մրա-
խառն բոցով, ստանում ենք սեւ մուր: Բացի
բնածխից քարածուխը պարունակում է և ու-

ըեւ նիւթեր. օրինակ՝ նրա մէջ կալ մինչեւ ան-
գամ և ջրածին:

38. Քարածխային (լուսաւորութեան) զա-
զի պատրաստելը:

34-դ փորձ: Վերցնենք մի քիչ քարա-
ծուխ, մանրացնենք և գնենք սովորական կո-
ւի չիբուխի մէջ. Ետոյ ծածկենք չիբուխի բե-
րանը թաց կաւից շինած փոքրիկ խփով և թող-
նենք որ կաւը չորանալ: Երբ նա բողորովին



Նկար 27.

կը չորանալ, չիբուխը լապտերով տաքացնենք (նկ. 27): Իսկոյն չիբուխից կսկի դուրս գալ դեղնագոյն ծուխ և եթէ այդ ծուխը վառենք, նա կայրուի վառ բոցով: Այդ ծուխը քարած-
խային գագ է, բայց միայն մաքուր չէ, ինչալէս
փողոցներում, տներում կամ խանութներում
վառած գազը: Այդ գազը կարող ենք հաւաքել
սովորական կերպով. այսինքն վերցնենք ջրով
լիք մի փոքրիկ ապակեալ անօթ, շուռ տանք և

դնենք մի ուրիշնոյնպէս ջրով լիք ամանի մէջ և խողովակի այն ծալը, որտեղից դուրս է գալիս գազը, մօտեցնենք շուռ տուած ամանի բերանին (նկ. 27). Եթէ վառենք այդ գազը նա կարուի վառ բոցով։ Այդ քարածիսալին գազը պարունակում է ընածուխ, որովհետեւ այրուելու ժամանակ կարող ենք նրանից ստանալ ա. սեւ մուր և բ. ընածիսական թթւուտ (կրակին ջրի միջոցով այդ կարելի է հեշտութեամբ տպացուցանել)։ Բայց նրա (գազի) մէջ կայ և ջրածին, որովհետեւ այրուելու ժամանակ, եթէ նրա բոցի վերայ պահենք չոր և թափանցիկ բաժակ, ջրի կաթիլներ կը նստեն բաժակի պատերի վերայ. պարզ ապացուց որ քարածիսալին գազի ջրածինը միացաւ օդի թթւուածնի հետ և տուաւ ջուր։

Յայտնի է որ քարածիսալին գազը անդոյն է և անտեսանելի, որ նա թեթև է օդից և ալրուող է. ուրեմն՝ մտածեցէք և տեսէք թէ ինչ փորձեր կարող էք անել նորա հետ։

Քաղաքները լուսաւորելու համար գործած գազը ստանում են հետևեալ կերպով. չիբուխների փոխարէն աղիւսից (քարփիչ) կամ երբեմն երկաթից շինում են մեծ վառարաններ, որոնք կոչւում են լէտորտներ. մի կտոր քարածիսի փոխարէն դնում են մի քանի հա-

զար փութ. փոքրիկ ապակեայ բաժակների փոխարէն գազը ժողովելու համար գործ են ածում ահագին երկաթի գազաշափեր (բազոմերք), այսինքն, այնպիսի ամաններ, որոնց մէջ հաւաքում են գազ։

Այժմ երբ մեր կաւի չիբուխը կը հովանոյ և կը սառչի, գուք կը գտնէք նրա մէջ մի քիչ մի գորշագոյն նիւթ, որը կոչւում է կոք կամ կոքս. դա մարզուր ընածուխ է ածխից մնացած։ Բնածխի մի մասը և բոլոր ջրածինը հեռանում են զազի, ջրի եւ կուպրի ծեռով, որովհետեւ քարածուխը տաքացնելիս (այնպէս ինչպէս նախընթաց փորձում) առաջանում են այդ բոլոր նիւթերը։

Քարածիսի պէս պէս տեսակները կան. մեքանիսը այնքան պիտանի չեն գազ պատրաստելու համար, որովհետեւ պարունակում են աւելի շատ բնածուխ և աւելի քիչ ջրածին, քան ուրիշները, այնպէս որ տալիս են աւելի քիչ քանակութեամբ գազ և աւելի շատ կոքս։

Բացի քարածիսալին գազից մենք քարածիսից կարող ենք ստանալ և ուրիշ շատ նիւթեր օրինակ՝ նրանից ստանում են կուպր, որը քըսում են չուաններին, ուռկաններին կամ առագաստներին, որ չը փթէն ծովի աղի ջրի մէջ. սեւ ծիւթ (սմոլա), որը գործ է ածւաւմ սա-

լայատակներ շինելու համար (ասքալտօվայ՝ տրուցարք) և վերջապէս ամենից զարմանալին այն է որ քարածխից ստանում ենք զանազան ներկեր, որոնց փալուն մանիշագոյն և կարմիր գոյները դուք տեսնում էք խանութների պատուհաններում դրուած չիթերի և ուրիշ կտորների վերաբէք Ինչպէս են քարածխից ստացւում այդ ներկերը, դուք այժմ դժուար կարող էք հասկանալ, ուստի թողնում եմ դրա մասին խօսել:

39. Քարածխի գլուխածնը:

Ածուխի կարեւորութեան մասին մի քանի խօսքով դժուար է լաւ գաղափար կազմել: Ի՞նչ կը լինէր ամբողջ Անգլիան առանց քարածխի: Նրա գրեթէ բոլոր մանուֆաքտուրը կախուած է քարածխի էժանութիւնից: Անգլիական կեանքի յարմարութիւնները, մինչև անգամ նոյն իսկ ձմեռն Անգլիայում ապրելու հնարաւորութիւնը կախուած է այդ կարեւոր նիւթից:

Ի՞նչ կը լինէր, եթէ երկաթուղինները և շոգենաւերը չը լինէին. նրանց գոյութիւնը նոյնպէս կախուած է քարածխից: Անգլիայում ամենայն տեղ քարածխութիւնը գտնուում, բայց ուր նա գտնուում է, այնտեղ զարգացած է մեծ արդիւնաբերութիւն (ճարտարութիւն, industry), իսկ ուր քարածխութիւնը չը կայ, այնտեղ

մարդիկ պարապում են երկրագործութեամբ: Օրինակ, Լանկաշիրում կայ քարածուխ, կայ և ըստմբակեղինի արդիւնաբերութիւն, հարաւալին Ուէլսում կայ քարածուխ, նոյնպէս և կայ երկաթեղինի արդիւնաբերութիւն. Իօրկշիրում կայ քարածուխ, կայ և ըրդեղինի արդիւնաբերութիւն: Իսկ որովհետեւ Կենտում, Եսսէկսում և Սուսսէկսում քարածուխ չը կայ, ուստի չը կան և մեծ մանուֆակտուրի կենդրոններ. այդ երկիրներում մարդիկ պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ:

§ XV. ՀՈՂ

40. Քարածխային զազ եւ բոց:

Մի քանի փորձեր անենք քարածխային դազի հետ և տեսնենք թէ ի՞նչ է բոցը:

35-դ փորձ: Ի՞նչու ջրածնի

բոցը շատ թոյլ լոյս է տալիս (18-դ փորձ), մինչդեռ քարածխային գուղը այնքան շատ լոյս է տալիս: Այդ կարող է մեզ բացատրել հետևեալ փորձը: Վերցնենք Բունդէնի լալտերը և մատներով ծածկենք նրա ներքեմի ծակերը (d) (28-դ նկար). մենք իսկոյն



28 Նկար

կը նկատենք որ գազը կսկսի ալրուել վայլուն
բոցով, իսկ եթէ հեռացնենք մեր մատները,
բոցը կը կորցնի իւր լուսը և կը գառնայ ան-
փայլ և կապտագոյն։ Պատճառն այն է, որ
փայտն բոցի մէջ ընածուիս կամ մուր կայ
շատ մանր փոշու ձեռով, իսկ կապտագոյն բոցի մէջ
բնածուիս չը կայ։ Եթէ մի քանի վայրկեան
սպիտակ թղթի մի կտոր պահեք լուսաւոր բո-
ցի վերայ, թուղթը կը սեանայ, բայց եթէ այդ
թուղթը պահելու լինէք կապտագոյն բոցի վե-
րայ, նա չի սեանալ։ Լուսաւոր բոցի մէջ այ-
րումը անկատար է լինում և բնածխի հրաշեկ
ու պինդ մասնիկները ցրուած լինելով նրա
մէջ՝ դարձնում են այդ բոցը փայլուն, իսկ կապ-
տագոյն բոցի մէջ բնածուխը ամբողջապէս ալր-
ուում է, որովհետեւ օդը մտնելով լամպի ներ-
քեւի ծակերից և խառնուելով քարածխալին
գազի հետ՝ բերում է իւր հետ և բաւական
քանակութեամբ թթուածին։

36-ր փորձ։ Վերցնենք մի վառած մոմ և
տեսնենք թէ ինչ մասերից է բաղկացած նրա
բոցը, որովհետեւ այդ բոցը շատ արժանի է
ուշագրութեան և ուսումնասիրութեան։

Նա բաղկացած է հետեւեալ երեք մասերից՝
1. Կապուտ, հազիւ նկատելի արտաքին՝
մասը, որի մէջ ալրումը կատարեալ է.

2. Ներքին լուսաւոր մասը, ուր լուսը շատ
է և ալրումը անկատար։


3. Բոցի միջին մուլֆ կօնը, որը բաղկացած
է պատրուգից դուրս եկած չալրուած գազից։

Ուրեմն մոմը իսկապէս ներկայացնում է
մի գործարան. ինքը մոմը
կամ ճարպը այն նիւթն
է, որը վերաթորւում է,
իսկ պատրուգը նրա բէտօր-
տըն է, որտեղ և կատար-
ւում է վերաթորումը. պա-
տրուգից շուրջն էլ ալրում
է գազը։


Թէ բոցի երլորդ մասը,
Նկար 29. ալսինքն նրա մուլֆ կօնը

արդարեւ ներկայացնում է մի տարածութիւն,
որտեղ գազը չէ ալրում, այդ կարելի է ապա-
ցուցանել հետեւեալ փորձով։ Վերցրէք մի կոր
ապակեալ խողովակ և նրա մի ծալը դրէք
բոցի մուլֆ կօնի մէջ. չալրուած գազը խողո-
վակով կանցնի դէպի նրա միւս ծալը և դուք
կարող էք գազը վառել այդտեղ (Նկար 29)։

41. Քարածխահանքերի մէջ յամախակի
պատահում՝ են սարսափելի մայթումներ։
Ի՞նչն է որանց պատճառը, եւ ի՞նչպէս կա-
րելի է որանց առաջն առնել։



Այդ ճայթումների պատճառը մի տեսակ քարածխալին գազ է, որը առաջանում է քարածխից և խառնուելով օդի հետ, յանկարծակի վառւում է և ի հարկէ, սպանում է բանւորներին։ Որովհետեւ քարածխահանքերի մէջ մութքն է լինում, բանւորները պիտի վերցնեն իրանց հետ մոմ կամ լապտեր, որ բանելու ժամանակ լոյս լինի և երբ քարածխալին գազը դիպչում է լապտերի բոցին, իսկոյն վառւում է, առաջանում է ճայթում, որ և պատճառում է մեծ դժբաղդութիւններ։ Այս ճայթումներից կարելի է նախազգուշանալ և ազատուել Դեւիի ապահովութեան լապտերի միջոցով,



30-ր Նկար ա և բ

և պահեցէք գազի լապտերի վերայ. ապա թողէք որ գազը դուրս գայ և վառէք ցանցից վերև.

Յետոյ բարձրացըէք ցանցը մի քանի մատնաշափ (Ճօյմ) վերև և դուք կը տեսնէք, որ բոցը չէ անցնում ցանցի միջով (30 նկ. ա)։ Ի՞նչու։ Որովհետեւ մետաղեայ ցանցը այնչափ արագութեամբ խլուլ, յափշտակում՝ է (մետաղները այդպիսի յատկութիւն ունին) զազի տարութիւնը, որ զազը ցրտանում՝ է եւ չէ կարողանում այրուել։

Ենթադրենք այժմ, որ մենք շրջապատել ենք ամբողջ բոցը այդպիսի մի երկաթեայ ցանցով (30 նկ. բ). բոցը կը շարունակուի ցանցի մէջ ալրուել և լոյս տալ, և ալրուելու համար հարկաւոր օդը կը մտնի ցանցի ծակերով, իսկ ցանցից գէպի դուբս այդ բոցը, ինչպէս ասացի, չի անցնիլ։ Ուրեմն եթէ այդպիսի մի լապտեր վերցրած մտնենք քարածխահանքի մէջ, ուր որ հաւաքուած էլ վտանգաւոր քարածխալին գազը, այդ գազը չի կպչիլ ու բռնկիլ, որովհետեւ լապտերի բոցը չէ անցնում՝ երկաթեայ ցանցից դուրս։ Այս հիման վերալ է, որ Դեւիի լապտերը հազարաւոր մարդկանց կեանքն է ազատել և ազատում է։

30-ր նկարը (բ) ներկալացնում է այդ լապտերն. նրա բոցը ալրուած է մետաղեայ ցանցից կազմուած խոզովակի մէջ, որը ներքեւում ամուր կերպով հաստատուած է պղնձէ ամանի

կամ ըէզէրվուարի վերալ. այդ ըէզէրվուարի մէջ ածում են իւղ: Դուք տեսնում էք ուրեմն, որ ինչպէս մի շատ պարզ գիտնական մկրունք կարող է միջոց տալ հազարաւոր մարդկանց կեանքը ազատելու համար և թոյլ տալ նրանց քարածխահանքների մէջ բանել ու հանել այն քարածուխը, որ մեզ այնչափ հարկաւոր է:

§ XVI

ՊԱՐՁ (ՑԱՐՌԵԲ) ԵՒ ԲԱՐԴ ՄԱՐՄԻՆՆԵՐ

42. Նախընթաց փորձերի շնորհիւ մենք շատ բան իմացանք այն հողալին մարմինների մասին, որոնք սովորաբար մեզ հանդիպում են: Բայց այդ փորձերը իսկապէս կազմում են քիմիկոսների ստեղծած և հնարած բազմաթիւ փորձերի մի ամենաչնչին մասը: Միայն փորձի և դիտողութեան միջոցով մենք կարող ենք մի բան իմանալ քիմիալից. և այդ պատճառով քիմիկոսի գործը նրանում է կալանում, որ վորո՞ցէ ամենայն տեսակ մարմինների յատկութիւնները, տեսնէ թէ ինչ տեսակ նիւթերից են բաղկացած նրանք և ինչ են բովանդակում, եւ անա, այդ կերպով այսինքն, փորձելով և հետազոտելով բոլոր մարմինները, թէ օդի, ջրի

կամ երկրի խորքերի մէջ եղած, թէ հանքալին կամ բուսական և թէ կենդանալին ծագումն ունեցող նիւթեր, քիմիկոսները վերջապէս համոզուել են, որ բոլոր մարմիններին կարելի է բաժանել երկու մեծ դասակարգի:

1. Փարզ մարմիններ կամ՝ մարդեր, այսինքն այնպիսի մարմիններ, որոնցից չէ կարելի ստանալ ուրիշ նրանցից տարբեր թեր.

2. Բարդ մարմիններ, այնպիսի մարմիններ, որոնցից կարելի է ստանալ երկու կամ մի քանի բոլորովին տարբեր նիւթեր:

43. Վերցնենք մի քանի օրինակ—նախ և առաջ գազերից: Թթուածինը պարզ մարմին է, որովհետեւ նրանից ուրիշ բան չենք կարող ստանալ: Քրածինը նոյնպէս տարը է. բայց ըարածիսային զազը արգէն տարը չէ, այլ բարդ մարմին է, որովհետեւ մենք կարող ենք նրան իւր երկու բաղադրիչ մասերին վերլուծել, կարող ենք ստանալ նրանից երկու զանգան նիւթեր՝ բնածուխ կամ մուր և ջրածին: Բնածխական թթուածինը նոյնպէս բարդ մարմին է, որովհետեւ բազկացած է բնածխից և թթուածնից: Հեղուկների մէջ նոյնպէս կան պարզ մարմիններ. օրինակ՝ սնողիկը տարը է, որովհետեւ նրանից ուրիշ նիւթ (բացի հեղուկ և

փալուն մետաղից) չենք կարող ստանալ. իսկ ջուրը բարդ մարմին է, որովհետև մենք գիտենք որ նա բաղկացած է թթուածնից և ջըրածնից: Պինդ մարմիններից մի քանիսը նոյնպէս տարրեր են, իսկ միւսները բարդ մարմիններ. օրինակ՝ կարմիր սնդկալան թթուուկը բարդ մարմին է, որովհետև մենք կարող ենք ստանալ նրանից սնդիկ և թթուածին. կաւիճը կամ կրաքարը նոյնպէս բարդ մարմիններ են, որովհետև նրանցից կարելի է ստանալ բնածխական թթուուտ և կեր. հասարակ աղը նոյնպէս բարդ մարմին է, որովհետև բաղկացած է մի գեղնագոյն գաղից՝ ջլորից և մետաղից. պղղնձական ծծմբատը կամ արջասպը բարդ մարմին է, որովհետև վերլուծելով մենք ստանում ենք նրանից փալուն և կարմիր պղինձ և ծծմբական թթուուտ: Իսկ ծծումը, բնածուկը լուսածինը, պղինձը, երկալը, ոսկին, արծաթը և շատ ուրիշ պինդ մարմիններ՝ պարզ մարմիններ են, որովհետև քիմիկոսներն անկարող եղան մինչև այժմ ստանալ նրանցից ուրիշ նիւթեր. կամ մէկ պարզ մարմին վերածել, փոխադրել միւսի:

44. Մինչև ալժմ արած բազմաթիւ փորձերից մարդիկ իմացել են, որ բոլոր մեզ շրջապատող մարմինները՝ թէ գետնի վերալ և թէ

նրա տակ, բաղկացած են մի քանի տարրերից՝ որոնց թիւը հասնում է մինչև այժմ 79-ի: Այս տարրերից մի քանիսը գագեր են, օրինակ՝ թթուածինը, միւսները հեղուկ են, օրինակ՝ սնդիկը. ուրիշները պինդ մարմիններ են, օրինակ՝ ծծումբը, երկաթը և աղն: Տարրերից շատերը սովորական մարմիններ են և բնութեան մէջ գտնուում են ահագին քանակութեամբ կամ՝ ազատ վիճակի մէջ կամ ուրիշ մարմինների հետ միացած. օրինակ՝ թթուածինը. նա մը թնողորդի մէջ ազատ գրութեամբ է, ջրի մէջ միացած է ջրածնի հետ, իսկ թթուուկների մէջ միացած է ուրիշ տարրերի հետ: Պարզ մարմիններից մի քանիսը հազուագիւտ են և չեն գործածուում արհեստների կամ մանուֆակտուրի գործարաններուում. բայց այնուամենայնիւ մենք իրաւունք չունինք այդ տարրերն անօգուտ կամ անկարեւոր համարել. մենք այստեղ միայն կը խօսենք այն պարզ մարմինների մասին, որոնք տարածուած են մեծ քանակութեամբ:

Հեշտութեան և յարմարութեան համար մենք բաժանում ենք բոլոր պարզ մարմինները երկու գասակարգի՝ մետաղներ (երկաթ, պղինձ, ոսկի, և այլն) և ոշ-մետաղներ (թթուածին, ծծումբ, բնածուխ, և այլն): Այդ երկու տեսակ մարմինների զանազանութիւնը իսկոյն աշ-

քի է ընկնում, եթէ նայէք նրանց նմուշներին։
Հետևեալ աղիւսակում բերուած են ամենակարևոր պարզ մարմինները (ռուսական և լատինական անուններով հանդերձ)։

Ոչ—մետաղներ՝

Թթուածին (Кислородъ. Oxygenium)

Ջրածին *) (Водородъ. Hydrogenium)

Բորակածին (Азотъ. Nitrogenium)

Բնածուխ կամ ածխածին (Углеродъ. Carbonum)

Քլոր (Хлоръ. Chlorum)

Ծծումբ (Сѣра. Sulfur)

Լուսածին (Фосфоръ. Phosphorum)

Գայլազագածին, սիլիկոն (Кремний. Silicium)

Մետաղներ՝

Երկաթ (Желѣзо. Ferrum)

Ալյումինիոն կամ բնալեղ (Алюминий. Aluminum)

Կալցին (Кальций. Calcium)

Մագնիոն (Магній. Magnium)

Պղնձ (Мѣдь. Cuprum)

Նատրիոն (Натрій. Natrium)

Կալիոն (Калій. Kalium)

Ցինկ (Цинкъ. Zineum)

Կապեկ (Олово. Stannum)

Արծիճ (Свинецъ. Plumbeum)

Սնդիկ (Ртуть. Hydrargirum)

Արծաթ (Серебро. Argentum)

Ուկի (Золото. Aurum)

Այս 79 պարզ մարմինները զանազան լատ.

*) Տես Յ ծանօթ.

կուժիւններ ունին, որոնց շնորհիւ ճանաչւում են և կարելի է լինում մէկը միւսից զանազանել, որոշել։ Բայց դրանցից մի քանիսն աւելի են նման իրար, քան ուրիշները, օրինակ՝ կըլայեկը և արճիճը աւելի են նման իրար իրանց յատկութիւններով, քան թթուածինը և ջրածինը։ Սակայն հետագօտելով այն եղանակները, որոնք տեղի ունին այս պարզ մարմինների քիմիալէս իրար հետ միանալու ժամանակ, նկատում ենք մի ընդհանուր երևոլիթ, որ իրար հետ միանում են այն պարզ մարմինները, որոնք նման չեն իրար։ Այսպէս օրինակ՝ կըլայեկը և արճիճը բաւականին նման են իրար և միևնոյն ժամանակ իրար հետ միանալով չեն կազմում մի այնպիսի բարդ մարմին, որը իրանց զվարար յատկութիւններով զանազանուէին միմեանցից. բայց ջրածինը և թթուածինը, ընդհակառակ, ամեննեին նման չը լինելով միանում են և կազմում ջուրը, որ իւր բոլոր յատկութիւններով զանազանուում է իւր բազադիչ մասերից։ Ուրեմն՝ հետևեալ օրէնքը կարելի է եզրակացնել յիշած երևոլիթներից, որ քիմիական միաւորութիւնը աւելի հեշտ է կատարում այնպիսի մարմինների միջեւ, որոնք շատ քիչ են նման իրար։

§. XVII. ՈՉ-ՄԵՑԱՂՆԵՐ

45. Այժմ մենք պիտի ուսումնասիրենք իւրաքանչիւր տարրի յատկութիւնները այն կարգով, ինչպէս որ նրանք բերուած են նախընթաց աղիւսակում:

Թթուածինը անդոյն, անտեսանելի և անհամ գազ է: Նա ազատ վիճակով գտնուում է օդի մէջ բորակածնի հետ խառն. այս վերջինը գրեթէ 4 անգամ շատ է թթուածնից իւր ծաւալով: Թթուածինը միանում է բոլոր տարրերի հետ (բացի մէկից) և կազմում է թթուածինը: Երբ թթուածինը միանում է ուրիշ տարրերի հետ՝ առաջանում է տաքութիւն, շատ անգամ և լոյս, և այդ տարրերի մասին ասում են, որ նրանք սյուրում են: Թթուածինը կայ բոլոր քարերի, աւազի, հոգի և հանքերի մէջ. ամբողջ երկրագնդի կշռի կիսից աւելին թթուածինն է կազմում. նա անհրաժեշտ է կենդանիների համար, սրովհետև կենդանիները ներշնչում են թթուածին. այդ թթուածինը մաքրում է արիւնը և պահպանում մարմնի տաքութիւնը:

Մաքուր թթուածին ստանալու համար մենք կարող ենք շատ միջոցների դիմել. օրինակ՝ տաքացնել այն միաւորութիւնները, որոնց

մէջ նա գտնուում է. եթէ տաքացնենք, օրինակ, կարմիր սնդկական թթուուկը կամ բէրտութափի աղը, մենք կ'ստանանք նրանցից թթուածին:

Աւելի մեծ քանակութեամբ թթուածին ստանալու համար վերցնում են կէս ունց բէրտօլէտի (կալիոնական քլորատ) աղ. (այդ այն աղն է, որ գործ են ածում բկացաւի ժամանակ բերանը ողողելու համար) և խառնում են միենալն չափով մարզանի սեւ վերաթթուուկի հետ (պերեկու մարգահով), այնպէս որ խառնուրդը սև լինի:

Յետոյ այդ խառնուրդը ածում են մի ապակեայ ըէտօրտի մէջ, որի խցանով անցնում է մի կոր խողովակ և սկսում են տաքացնել այդ խառնուրդը ու դուրս եկող գազը հաւաքում են սովորական կերպով բաժակների մէջ, ինչպէս այդ ցոյց է տալիս 23-դ նկարը:

Դուք կարող եք ցոյց տալ՝

1. Որ մաֆտիլի վերայ ամրացրած առկայծող մօմի պատրույգը խկոյն բոցավառում է, երբ ընկղմում ենք թթուածնով լիք շիշի մէջ. յետոյ դուք կարող եք ապացուցանել, որ այստեղ մօմի ալուելուց բնածխական թթուուտ է առաջանում, եթէ կրային ջրի լուծուածք ածէք այդ շիշի մէջ:

2. Որ հրաշեկ ածուխը թթուածնի մէջ ալրւում է շատ վառ բոցով, նոյնպէս առաջացնելով բնածխական թթուած գազը:

3. Որ գդալի մէջ գրուած և վառուած ծծմբի մի փոքրիկ կտոր թթուածնի մէջ ալրւում է փալուն և կասլուտ բոցով:

4. Որ գդալի մէջ գրուած և վառած լուսածնի մի փոքրիկ կտոր թթուածնի մէջ նոյնպէս ալրւում է շլացուցիչ փալով.

5. Որ ծծումբը ալրուելիս գոյանում է մի անգոյն գազ, իսկ լուսածինը ալրուելիս—սպիտակ ծուխ, որ երկու գոյացած մարմինները թթուու նիւթեր են, որովհետեւ եթէ երկու շիշ մէջն էլ ածենք մի քիչ կասլուտ լուսարեղի լուծուածք (растворъ лакмуса), նա իսկոյն կը կարմրի:

46. Ջրածինը նմանապէս անտեսանելի, անգոյն և անհամ մի գազ է: Նա ազատ վիճակով չը կալ օդի մէջ, իսկ թթուածնի հետ միանալով կազմում է ջուր: Մենք ջրածինը կարող ենք ստանալ ջրեց (12 և 14 փորձեր) և ցոյց տալ, որ օդի մէջ ալրուելիս նա տալիս է ջուր: Ջրածինը միանում է ուրիշ շատ տարրերի հետ. բնածխի հետ նա տալիս է ճահճակն գազը (болотный газъ), այն գազը, որը պարունակում է քարածխալին գազի մէջ և որը


քարածխալիանքերում ճայթումների պատճառ է միշտ լինում: Ջրածինը կալ և բոլոր բորակական, ծծմբական, քլորջրածնական, և ալին, թթուուտների մէջ: Ջրածինը ամենաթեթև գազըն է. նա 14 $\frac{1}{2}$ անգամ թեթև է օդից և ալդ հիման վերալ գործ է ածւում օդապարիկներ լցնելու համար:

47. Բորակածինը նոյնպէս անգոյն, անտեսանելի և անհամ գազ է: Նա ազատ գրութեամբ գտնուում է օդի մէջ. մենք կարող ենք բորակածինը բաժանել թթուածնից՝ օդի մէջ լուսածին վառելով (Յ-գ փորձ): Բորակածինը գտնուում է շատ միաւորութիւնների մէջ՝ բորակական թթուուտի (азотная кислота), բորակի (селинтра), աւշակի (амміакъ), աննշաղբական գազի (нашатырный спиртъ) և կենդանիների մսի մէջ զանազան նիւթերի հետ միացած: Բորակածինը գժուարութեամբ է միանում ուրիշ մարմինների հետ և շատ անշարժ (ինէրտ) նիւթէ. ինքը չէ ալրւում, ուրիշ մարմինների այրումը չէ պտղանում, բայց թունաւոր չէ և եթէ նրա մէջ զետեղուած կենդանիները մեռնում են, դորա պատճառը իսկապէս թթուածնի բացակայութիւնը կամ պակասութիւնն է: Բորակածինը միանում է ջրածնի հետ և տալիս է աւշակի, իսկ միանալով թթուածնի

և ջրածնի հետ միասին, նա տալիս է ըորակական թթւուտ:

38-դ փորձ: Բորակական թթւուտը կարելի է ստանալ հետեւեալ կերպով:

Վերցրէք կէս ունց ծեծած բորակ, դրէք ըշտօրտի մէջ և վրէն ածէք կէս ունց ծծմբա-



Նկար 31.

կան թթւուտ. յետոյ ըշտօրտը դրէք լամպի վերայ և ծալը մտցրէք մի ապակեալ ամանի մէջ, որը դրուած է սառը ջրով լի թասի մէջ (31 նկ.). ըշտօրտից գուրս եկող թթւուտը ցրտից կը նստի ապակեալ ամանի տակին: Այդ թթւուտը բորակական թթւուտն է. նա շատ թթու և կծու հեղուկ է. երբ դիպչում է մարմնին, դեղին բծեր և վերքեր է պատճառում: Նա լուագեղի (լակմուց) հապոյտ գոյնը հարմիի է փոխում, որովհետև թթւուտ *) է և եթէ այդ թթւուտը խառնենք կալէքարի հետ (պե-

*) Տես ծանօթ. 2.

լովի), օրինակ՝ կճու. կալիի հետ (ֆեկու կալի) (որը ընդունակ է, ընդհակառակ, կարմիր լուագեղը կապոյտ դարձնել), նա (բորակ. թթւուտը) կը կորցնի իւր թթու լատկութիւնները: Վերցրէք մի քիչ կծու կալիի լուծուածք, աւելացրէք կապոյտ լուագեղը և յետոյ գդուշութեամբ վերանա ածէք մի քիչ բորակական թթւուտ. կապոյտ լուագեղը իսկոյն կարմիր կը դառնայ, որովհետև թթւուտը չէզորացնում է կալէքարը:

Եւ եթէ յետոյ այդ հեղուկը ցնդացնենք (գոլորշիացնենք) մի փոքրիկ մենապակեալ անօթի մէջ, տակը կը մնալ մի սպիտակ աղ, որը ոչ ալ ինչ է, եթէ ոչ ըորակ և առաջացաւ բորակական թթւուտի կալիի հետ քիմիապէս միանալուց. այդ այն նիւթն է, որը մենք առաջ վերցրէնք բորակական թթւուտ պատրաստելու համար: Եւ եթէ լաւ տաքացնելուց յետոյ այդ աղը լուծենք ջրի մէջ, այն ժամանակ այդ լուծուածքը ոչ կարմիր լուագեղը կը դարձնի կապոյտ և ոչ էլ կապոյտը կը փոխի կարմրի. ուրեմն այդ աղը չէզոր աղ է: Թթւուտներ, կալէքարեր (պելօչի) եւ աշեր:

Այս փորձից մենք իմացանք որ
1. Մի որևէ նիւթ կոչւում է թթւուտ,

երբ նա թթու է և կծու և երբ նա կապոյտ
լոռագեղը փոխում է կարմրի ^{*)}:

2. Մի նիւթ կոչում է աղկազմ (օշօ-
վանից) կամ կալեքար (պելոչ) երբ նա կարմիր
լոռագեղը դարձնում է կապոյտ և կարող է
չէզոքացնել թթւուտները: ^{**)}

Աղ կոչում է այն չէզոք նիւթը, որը
առաջանում է երբ թթւուտը քիմիապէս միա-
նում է աղկազմի կամ կալեքարի հետ ^{***)}:

Ալստեղ մենք կրկին անգամ նկատում ենք,
որ այն նիւթերն են հեշտութեամբ քիմիապէս
միանում իրար հետ, որոնք շատ տարբեր են.
Դժուար է ճարել երկու այնպիսի տարբեր մար-
միներ, ինչպէս բորակական թթւուտը և կծու
կտլին. և այդ պատճառով նրանք քիմիապէս
միանալով տալիս են սովորական բորակ, մի
այնպիսի նիւթ է, որ իւր յատկութիւններով
բոլորովին զանազանում է իւր բազագրիչ մա-
սերից:

48. Բնածուխ կամ՝ ածխածին: Բնած-
ծուխը պինդ տարր է. նա ազատ վիճակով
գտնուում է բնութեան մէջ, ինչպէս փայտեալ
ածուխը, կոքսը, բարածուխը, թանկագին, ան-
գոյն և կարծը աղամանդը (ալմազ) և զրա-
բարը կամ՝ զրաֆիտը (այն կակուղ նիւթը,

^{*)} Տես ծառ. 4. ^{**) Ծառ. 5. ^{***) Ծառ. 6.}}

որից շինում են մատիտներ): Ի՞նչպէս իմանանք,
որ այդ երեք տարբեր մարմինները (ածուխ,
գրաֆիտ և աղամանդ) ըսմիապէս միւնոյն
տարրերն են: Եթէ վերցնենք փայտի ածուխը
եւ այրենք թթուածնի մէջ, կըստանանք բնած-
խական թթւուտ. Եթէ այրենք զրաֆիտը,
նոյնպէս կըստանանք բնածխական թթւուտ և
վերջապէս եթէ ալրենք աղամանդի մի փոք-
րիկ կտոր, նոյնպէս կըստանանք բնածխական
թթւուտ: Սրանից եզրակացնում ենք, որ այս
երեք նիւթերն էլ՝ փայտի ածուխը, գրաֆիտը և
աղամանդը պարունակում են բնածուխ: Բայց
կարելի է, բացի բնածխից նրանք մի որևէ ու-
րիշ բան էլ են պարունակում: Ոչ. որովհետեւ
եթէ սմէն մէկից վերցնենք մի կտոր հաւասար
կշռով՝ օրինակ, 12 գրան (17 դոլեա) փայտի
ածուխ, 12 գրան գրաֆիտ և 12 գրան աղա-
մանդ և առանձին առանձին ալրենք, այն ժա-
մանակ երեք դէպքումն էլ կստանանք բոլո-
րովին միւնոյն քանակութեամբ բնածխական
թթւուտ (44 գրան 61 $\frac{1}{2}$ դոլեա): Այնպէս որ
թէւ թանկագին տղամանդը և հասարակ ա-
ծուխը իրանց արուաքին տեսքով բոլորովին
տարբեր նիւթեր են երևում, այնուամենայնիւ-
նրանք քիմիապէս միւնոյն տարրն են, միւնոյն
բնածուխը:

Բնածուխը կտղմում է բոլոր բոլսերի և
կենդանիների անհրաժեշտ մասը, փայտեայ
ածխի մէջ գեռ կարելի է նկատել ծառի ձեւը
և կազմակերպութիւնը. Եթէ մի կտոր միս պա-
հէք կրակի վերայ, կը դառնալ սև ածուխ. իսկ
եթէ փայտը կամ միսը բոլորովին այրելու լի-
նէք, այն ժամանակ բոլոր բնածուխը կը հե-
ռանալ բնածխական թթւուտի ձեւով և կը
մնալ միայն քիչ քանակութեամբ սպիտակ մոխիք:

39-ր փորձ: Սպացուցանելու համար որ
բուսական նիւթերը պարունակում են բնա-
ծուխ, վերցրէք մի քանի կտոր շաքար (շաքա-
րը բոլոր են ստանում), գցէք տաք ջրի մէջ,
այնպէս որ ստանաք թանձը օշարակ (շարաբ,
սարուն): Յետոյ այդ օշարակի վերայ ածէք մի
քիչ ծծմբական թթւուտ. դուք կը նկատէք
իսկոյն, որ օշարակը սկանում է, փրփրում է
և բոլոր սպիտակ շաքարը դառնում է սև ա-
ծուխ: Ուրեմն՝ շաքարը պարունակում է իւր
մէջ բնածուխ:

Ի՞նչ կը լինէր եթէ աշխարհում չը գըտ-
նուէր այդ տարրը. բոլսերը կամ կենդանիները
անկարող կը լինէին այն ժամանակ գոյութիւն
ունենալ: Բացի դրանից, բնածուխը կալ և ու-
րիշ մարմինների մէջ՝ քիմիապէս միացած ալլ
և ալլ տարրերի հետ. օրինակ, օդի մէջ նա


կազմում է բնածխական թթւուտ, որը ինչպէս
արդէն գիտէք, ծառայում է բոլոր բոլսերի սը-
ննդեան համար. այն բնածխական թթւուտի
ձեւով նա գտնուում է կաւճի, կրաքարերի և
մարմարինի և շատ ուրիշ լեռնային տեսակ-
ների մէջ:

§ XVIII. ՈՉ-ՄԵԾԱՂՆԵՐ

49. Քլորը բոլորովին տարբերուում է իւր
յատկութիւններով վերոյիշեալ պարզ մարմին-
ներից, նա դեղնագոյն և սաստկահոտ մի գազ
է և շնչառութեան համար թունաւոր: Նա
աղատ վիճակով չէ գտնուում բնութան մէջ,
բայց կարող ենք ստանալ մի շատ տարածուած
և օգտաւէտ նիւթից՝ հասարակ աղից: Այս
վերջինը բաղկացած է բլորից եւ նապրինն կոչ-
ուած մետաղից և այդ պատճառով կոչւում է
նապրի բլորուկ (хլորիստի նարեւ):

40-ր փորձ: Մենք կարող ենք քլորը ստա-
նալ աղից հետևեալ կերպով. վերցնենք մի քիչ
աղ և խառնենք մագնանի սև վերաթթւուկի
հետ (черная перекись марганца). այդ խառ-
նուրդը գնենք մի ալվակեայ ամանի մէջ և
վերան ածենք մի քիչ ծծմբական թթւուտ,
միայն թթւուտը խառն լինի իրան հաւասար

քանակութեամբ ջրի հետ (նկար 32): Եթէ ա-
մանը սկսենք տաքացնել լամպի վրայ, այն ժա-



32-րդ Նկար.

մանակ կը տեսնենք, որ դուրս է գալիս մի ծանը, սաստկահոս և գեղնագոյն գագ, որը կարելի է հաւաքել մի ուրիշ չոր շիշ մէջ. դա քլորն է: Ալդ գազը շատ վտանգաւոր է, որովհետեւ պատճառում է հազ և շնչափողի բորբոքում: Նա միանում է մետաղների հետ և կազմում է աղեր, որոնք ընդհանրապէս կոչ- ւում են քլորուկներ: Եթէ քլոր պարունակող մի շիշ մէջ ածենք մի քիչ ծեծուած ծարրա- բար կամ՝ յօնքար (սորմա, անտիմոհի) կոչ- ուած մետաղից, իսկոյն կը նկատենք կրակի կալծեր և սպիտակ ծուխ. դա նշանակում է որ քլորը միացաւ ծարրաքարի հետ և առաջա- ցաւ ծարրաքարի քլորուկ կոչուած աղը: Ու բեմն՝ քլորի մէջ էլ մարմինները կարող են ալ-

ըուել և ինչպէս տեսնում էք—երբ քիմիական միացումն է կատարում, այնտեղ տաքութիւն է գոյանում:

Քլորն ունի և զօրել անգունացնող կամ սպիտակացնող յատկութիւն և գործ է ած- ւում այլ և այլ գործուածքներ (թուղթ, քա- թան, և այլն) սպիտակացնելու համար: Հեշ- տութեամբ կարող էք այդ փորձել, եթէ վերց- նէք թրջուած գունաւոր չիթի մի կտոր և և գցէք քլորով լիքը շիշ մէջ. մի քանի բո- պէից յետոյ այդ կտորը իւր գոյնը կը կորցնի:

Խանութներում ծախում են մի տեսակ փո- շի, որը սպիտակացնող փոշի է կոչւում. (Ծե- մալիսհայ որօշօք) և որը գործ է ածւում հիւսոււածներ սպիտակացնելու համար: Այդ փո- շին պարունակում է քլոր գազը, որովհետև երբ վերան ածենք մի քիչ ծծմբական թթւուտ, իսկոյն կը նկատենք որ փոշուց դուրս է գա- լիս գեղնագոյն քլորը:

41-րդ փորձ: Եթէ սպիտակացնող փոշին խառնենք մաքուր ջրի հետ և մէջը դնենք ներկած չիթի մի կտոր, զոյնը չի փոխուիլ: Բայց եթէ չիթը յետոյ գցէք ջրախառն ծծլմ- բական թթւուտի մէջ, նա կ'սկսի սպիտականալ և մի քանի անգամ կրկնելուց յետոյ մենք կը ստանանք բոլորովին սպիտակսցած չիթ: Ծծլմ-

բական թթւուտի ազդեցութիւնից քլորը դուրս
է գալիս սպիտակացնող փոշուց և ներգործում
է չիթի վերայ ոչնչացնելով նրա գոյնը:

50. ծծումնը պինդ տարը է. նա լինում
է կամ մանր գեղին փոշու ձեռվ կամ փոքրիկ
ձողերով: Եթէ գդալի մէջ դրուած ծծմբի մի
կտոր տաքացնենք, նա առաջ կը հալուի, յե-
տոյ կ'եռայ և վերջապէս կը վառուի ու կայ-
րուի կապտագոյն բոցով, տարածելով իւր շուր-
ջը այն հոտը, որն ամենքին լայտնի է:

ծծումբն այրուելիս միանում է թթուա-
ծնի հետ և կազմում է անգոյն գագ. ծծումբը
գործ են ածում լուցկի և վառօդ պատրաստե-
լու համար. վառօդը ծծմբի, ածխի և բորակի
խառնուրդ է ներկայացնում:

ծծումբն ազատ վիճակով գտնուում է հը-
րաբխալին երկրներում. մենք ստանում ենք
այդ նիւթը գլխաւորապէս Սիկիլիա կղզուց: Նա
գտնուում է և հանքերի մէջ, միայն միացած
ուրիշ տարրերի հետ (մետաղների). այդ միա-
ւորութիւնները ընդհանրապէս կազմուած են
ծծմբից և մի որևէ մետաղից և կոչւում են
ծծմբուկ (շերիատա մետալլա). օրինակ, ար-
ժանի ծծմբուկ կոչուած հանքը ներկայացնում
է ծծումբ՝ միացած արճճի հետ: ծծումբը
միանալով թթուածնի եւ ջրածնի հետ՝ կազ-

մում է շատ կարեսը քիմիական նիւթ՝ ծծմբա-
կան թթուուտ (շերիատա միալուրաքանարական թթուուտ) (c'երայ կալոտա):

ծծմբական թթուուտը մի ծանր, իւղա-
նման հեղուկ է և պատրաստում է ահագին
քանակութեամբ շատ բաների համար. կալէ-
քարեր (պելոչք) և օճառ (սապոն) ստանուլու
համար, չիթ տպելու և սպիտակեցնելու հա-
մար, ներկեր և համարեա թէ ամենայն մի
ուրիշ թթուուտ պատրաստելու համար: Ծծմ-
բական թթուուտը միանում է մետաղների հետ
և կազմում է բազմաթիւ աղեր, որոնք կոչւում
են ծծմբատներ. օրինակ, նատրոնական ծը-
ծմբատ կամ Գլասւբերեան աղ, երկաթական ծծմբատ
կամ կանաչքար, պղնձական ծծմբատ

կամ արջասպ, և այլն:

51. Լուսածինը նոյնպէս պինդ տարբե-
րիցն է. ազատ վիճակով նա չէ գտնուում բը-
նութեան մէջ: Կենդանիների ոսկը պարու-
նակում է իւր մէջ լուսածին, օրն այստեղ միա-
ցած է թթուածնի և կրածնի (կալիցի) հետ
և կազմում է կրալին կամ կրի լուսածնատ
(ֆօսֆօրհօկալայ աչքաւութեա): Եթէ ոսկը այ-
րենք, նրանից կը մնայ մի սպիտակ, ծակծկոտ
զանգուած, որը կոչւում է ոսկրալին մոխիր և
որից կարելի է ստանալ լուսածին:

Լուսածինը՝ բնածխի նման՝ երկու տեսակ

է լինում. այդ երկու տեսակը երարից շատ զանագանուում են. մէկը՝ հասարակ, դեղին լուսածինն է, միւսը՝ կարմիր լուսածինն:

42-ր փորձ: Ա. երցբէք մի երկաթէ ափսէ՝ եռոտանու վերայ դրուած՝ և դեղին լուսածնի մի շատ փոքրիկ կտոր: Դեղին լուսածինը պահում են ջրի տակ, որովհետեւ շատ հեշտ այրուող և վտանգաւոր նիւթ է. նա ինքն իրան օդի մէջ այրուում է և եթէ դիպչի մատներին՝



Նկար 33.

ծանր վերքեր կը պատճառի: Ուրեմն՝ զգուշութեամբ կտըէք (ջրի տակին) մի շատ փոքրիկ կտոր և շուրջ չորսվէք շորով կամ ծծող թղթով ու ունելիքով կամ դանակի ծայրով դրէք երկաթէ ափսէի վերայ: Յետոյ վերցբէք կարմիր լուսածնի մի փոքրիկ կտոր ու նոյնպէս դրէք երկաթէ. ափսէի վերայ (նկ. 33 ա բ): Կարմիր լուսածինը չեն պահում ջրի տակ, որովհետեւ նա դեղին լուսածնի պէս չէ վառուում ինքն իրան օդի մէջ: Ալժմ լամպով տաքացնենք ափսէն. մի վալրկենում դեղին լուսածինը կը վառուի ու կայրուի (նկ. 33, բ) վառ բոցով ու թանձըր, սպիտակ ծխով: Իսկ կարմիր լուսածինը (նկ. 33 ա) չի վառուի և եթէ շարունակենք

մի քանի ժամանակ էլ տաքացնել, միայն այն ժամանակ կը վառուի և կ'այրուի դեղին լուսածնի նման: Ուրեմն դեղին լուսածինը շատ շուրջ այրուող է և այդ պատճառով նրան պահում են ջրի տակ, որովհետեւ օդի հալումից նա վառուում է. իսկ կարմիր լուսածինը շուրջ այրուող չէ և ուրեմն նրան կարելի է պահել օդի մէջ:

43-ր փորձ: Դեղին լուսածինը վառուում է իսկոյն եթէ շփէք մի բանի: Եթէ վերցնէք դեղին լուսածնի մի կտոր, վաթաթէք ծծող թղթի մէջ և լետոյ ոտով շփէք նրան յատակին, կամ մուրճով խփէք, այն ժամանակ լուսածինը շփումից իսկոյն կը վառուի. այդ պատճառով լուսածնից շինուած են լուցկի: Լուցկու կարմիր գլուխը պարունակում է իւր մէջ լուսածին. երբ լուցկու գլուխը քսում են խորտուբորդ բանի երեսին, այն ժամանակ լուսածնային զանգուած պարունակող շերտը քերւում է և լուսածինը կպչում է ու վառում լուցկին:

Ալժմ գործ են ածում ուրիշ տեսակ, անվտանգ լուցկի, որը վառուում է միայն իւր ամանին քսելիս (շփեղական լուցկիներ): Այդ երեսոյթը բացատրում է հետևեալ կերպով. այդ տեսակ լուցկիների գլուխը չունի լուսածին և ուրեմն չէ կարող վառուել մի խորդուբորդ բանի երե-

սին քսելիս, բայց նբանց գլխիմէջ կալ մի այնտպիսի նիւթ, որ ինքը հեշտութեամբ կարող է վառել լուսածինը և որովհետեւ լուցկիների ամանի թուղթը ծածկուած է լինում կարմիր լուսածնի խառով, այդ պատճառով երբ լուցկին շփում էք կարմիր թղթի երեսին, այն ժամանակ լուցկու գլխին թղթից կպչում է մի փոքր կարմիր լուսածին և վառում է այն խառնութիւն հետ միասին, որը գտնուում է լուցկու գըշիկ վերալ:

52. Դայլխանգածինը, սիլիկոնը (կրեմնայ) լուսածնի նման ազատ վիճակով չը կայ բնութեան մէջ, թէեւ թթուածնի հետ միացած կազմում է մեր բոլոր լեռնալին տեսակների գլխաւոր մասը: Կւարցը (մաքուր աւազ) և լեռնային բիւրեղը (గորհայ քրուտալ) ոչ ալ ինչ են, եթէ ոչ գալիխազածինը (սիկիլիոն), թթուածնի հետ քիմիապէս միացած. գրանք գալիխազածնի (սիլիկիոնի) թթուուկներ են: Աւազը, աւազաքարը (պէչանիկ) և կամքարը (կրեմեն) նմանապէս սիլիկիոնի թթուուկներ են: Այդ թթուուկները միանալով մետաղների հետ՝ տալիս են շատ բարդ քիմիական միաւորութիւններ, որոնք կուտում են ընդհանուր խօսքով սիլիկատներ: Կաւը—սիլիկատ է, նըմանապէս և աղիւար, ֆայանսը, ծննապա-

կին և սապակին: Սլակին պատրաստում է վառարաններում աւազից, կրից և՛ նատրոնական բնածխութից (սոดา), կամ աւազից, արծրճի թթուուկից (օքուս և սինցա) և կալիոնական բնածխատից (պօտասուց, պուաշ): Առաջին խառնութը տալէս է հասարակ պատուհանի ապակի, իսկ երկրորդ խառնութը—Փղլինտզլաս^{*}) կոչուած ապակին: Սիլիկիոնը ինքը սև բիւրեղաձև նիւթ է և կարելի է ստանալ սիլիկիոնական թթուուկներից հեռացնելով նըրանցից թթուածինը:

Բոլոր այն լեռնալին տեսակները և քարերը, որոնցից բաղկացած է երկրագնդի պինդ մասը պարունակում են կամ սիլիկիոն կամ մի որեւէ մետաղ, կամ երկուսն էլ միասին թթուածնի հետ միացած: Այնպէս որ, ինչպէս տեսնում էք, մեր երկրագնդը բաղկացած է այրուած կամ թթուացած նիւթերից: Տեսնենք թէ ինչ գլխաւոր մետաղներ կան երկրագնդում:

§ XIX. ՄԵԾԱՂՆԵՐ

53. Երկաթը բոլոր մետաղներից ամենաօգտակարն է: Առանց երկաթի մենք գրեթէ կը նմանէինք վայրենի մարդկանց. մենք չէինք

*) Տես ծան. 7

ունենայ երկաթուղիներ, մեքենաներ, ջրանցքի
կամ գազալին խողովակներ, գործիքներ, և ալն:
Կար ժամանակ որ մարդիկ երկաթ չու-
նէին, որովհեաւ այդ օգտաւէտ մետաղը ինք-
նածին, մաքուր ձեռով չը կայ բնութեան մէջ,
ալ միայն ինչպէս հողախառն հանք, որից մա-
քուր երկաթ արդէն դժուարութեամբ է պատ-
րաստւում: Հին դարերում մարդիկ իրանց գոր-
ծիքները շինում էին պղնձնից կամ պրոնզից,
իսկ աւելի ևս վաղ նրանք իրանց կացինները
և դանակները միայն քարից էին շինում:
Երկաթի ամենաօգտակար հանքերից մէկը
կարմիր երկաթական թթւուկն է (երանայ
օկուս յելնեա), որը կոչում է հէմատիտ կամ
արիւնաքար: Եթէ այդ հանքը ածխի հետ
խառնենք ու ենթարկենք բարձր աստիճանի
տաքութեան—կարմրացնենք, այն ժամանակ
թթուածինը կը բաժանուի մետաղից և դուրս
կը գայ և կը մնալ մաքուր երկաթը, որից ար-
դէն կարելի է կոնցլով (ԿՈՎԿԱ) պատրաստել
զանազան գործիքներ՝ պայտեր ու բաշեր, նա-
ւերի և շոգեմեքենաների համար թիթեղներ,
և ալն. մի խօսքով, նրաշեկ վիճակի մէջ մենք
կարող ենք երկաթից շինել ամեն բան—դար-
բինները շինում են մեխեր, հէծեր անխւների
ըլջանակների համար, և ալն: Հրաշէկ դրու-


թեան մէջ երկաթը ընդունակութիւն ունե-
նմանապէս և կցուելու, այսինքն նրա երկու
կտորը կարելի է ծեծելով այնպէս ամուր միա-
ցնել, որ նրանք յետոյ էլ չեն բաժանուիլ:
Երկաթի մի ուրիշ տեսակն էլ կայ. նա
կոչւում է թուջ (ՊՐԵՄԻ): Թուջը կարելի է
հալել և հալուած դրութեան մէջ կարելի է
նրանից թափել զանազան իրեղէններ: Թուջը
գործ է ածւում գազային և ջրանցքի խողովակ-
ների համար, լապտերների պատուանդանների
համար, վանդակների, մեծ անխւների, մեծ և
ծանր մեքենաների պատուանդանների և ուրիշ
շատ բանների համար: Թուջը ստանում են եղ-
կաթի հանքից խառնելով այդ հանքը ածխի
եւ կրաքարի հետ և դնելով մի առանձին
կերպով շինուած, մեծ և բարձր վառարաննե-
րի մէջ: Երբ ածուխը սկսում է ալուել, առա-
ջացած տաքութիւնից երկաթը հալում է և
այդ ժամանակ միանում է ածխի բնածխի հետ
ու կազմում է թուջ:

Թուջը չէ կարելի երկաթի մնան կոնել,
որովհետեւ նա փխրուն է և մուրճի տակ ապա-
կունման վշրուում է, նա մաքուր երկաթ չէ,
ալ պարունակում է իւր մէջ բնածուխ, որը
նա վերցնում է ածխից: Մենք կարող ենք հե-

ռացնել այդ բնածուխը և այն ժամանակ կըս-
տանանք թուջից կուելի երկաթ:

Երկաթի երրորդ տեսակը կոչում է սլող-
վատ (сталь), պողվատից շինում են ածելիներ,
դանակներ և զանազան ուրիշ գործիքներ,
որովհետև նա կարծր է և ճկուն և լաւ սըր-
ում է: Պողվատի մէջ կայ քիմիապէս նրա
հետ միացած և ընսածուիս, թէև շատ քիչ քա-
նակութեամբ: Պողվատը կարելի է ստանալ թէ
երկաթից և թէ թուջից:

Եթէ երկաթը ալրենք օդի կամ թթուա-
ծով մէջ (31-ր փորձ), կստանանք երկաթական
թթուուկ: Միւնոյն նիւթը կ'ստանանք եթէ
երկաթը թողնենք խոնաւ տեղում. նա կը ժան-




Նկար 34.
զոտի և վերջապէս բոլորովին կը վերածուի
ժանգի:

44-ր փորձ: Եթէ մի փոքրիկ ապակեալ
ամանի մէջ դնենք երկաթի խարտուածք (օպոլկա)

և վրէն ածենք մի քիչ ջրախառն ծծմբական
թթուուտ, դուք կը նկատէք, որ մի գազ է
դուրս գալիս ապակեալ ամանից. այդ գազը ա-
ւելի արագ դուրս կը գայ, եթէ ամանը տա-
քացնենք (34-ր նկ.): Դա ջրածինն է. ապա-
ցուցանելու հսմար կարելի է վառել այդ գա-
զը մօտեցնելով ամանի բերանին վառած լուց-
կին:

Այդ երկոյթը բացատրում է հետեւեալ
կերպով. երկաթը լուծում է ծծմբական թթու-
ուտի մէջ և տալիս է երկաթական ծծբատ
կամ կանաչքար կոչուած աղը, իսկ ծծմբական
թթուուտի ջրածինն ազատում է: Եթէ ջրա-
ծինը դուրս գալուց յետոյ՝ ապակեալ ամանը,
որի մէջ դրուած էր երկաթի խարտուածքը,
լցնենք մաքուր ջրով և խառնելուց յետոյ քա-
մէնք, այն ժամանակ կ'ստանանք մի համարեա



Նկար 35.
անգոյն լուծուածք. Եթէ այդ լուծուածքը տա-
քացնենք և գոլորշիցնենք, կը տեսնենք որ
ամանի յատակին կամ պատերի վերալ նստում

են լիշած երկաթական ծծմբատի կանաչ բիւրեղները (35-դ նկ.):

Թէ այս լուծուածքի մէջ երկաթ կալ, կարելի է իմանալ հետևեալ կերպով. վերցրէք մի քիչ այդ լուծուածքից և ածէք մի ուրիշ շեշտ մէջ՝ խառնելով հետը բորակական թթւուտի մի քանի կաթիլ: Եթէ ալժմ այդ հեղուկի վերայ ածէք մի երկու կաթիլ կալիոնի երկաթախաժուկ (железо-синеродистый камай) կոչուած աղից (այս աղը շատ փանգաւոր թոյն է), այն ըոպէին հեղուկը կ'ստանալ մուժ կապոյտ գոյն (կառաջանալ Պրուսսիայի կապոյտ—берлинская лазурь—կոչուած նիւթը):

54. Ալիւմինիոն (ալիոմանի): Մենք երկաթից յետոյ վերցնում ենք այս մետաղը, որովհետև դա ստացւում է կալից. և ուրեմն՝ մեծքանակութեամբ է գտնուում բազմաթիւ լեռնալին տեսակների մէջ: Ոչ ոք չէր կարող ենթադրել, որ հասարակ կաւից կարելի կը լինէր պատրաստել մի ալդպիսի արծաթի պէս փալուն մետաղ, սակայն քիմիկոսները այդ անում են: Բնութեան մէջ ալիւմինիոնը միշտ միացած է լինում թթուածնի հետ և շատ ցաւալի է, որ դժուար է բաժանել այդ մետաղը թթուածնից, որովհետև այն ժամանակ կարելի կը լինէր գործածել բազմաթիւ նպատակների հա-

մար: Թէև կաւը շատ էժան է և տարածուած է ամենալին տեղ, բայց նրանից ալիւմինիոն ըստանալը շատ թանկ է նստում: Եթէ այս մետաղը տաքացնենք օդի մէջ, նա ալրում է, միանում է թթուածնի հետ և կազմում է ալիւմինիոկան թթուուկ կամ արգնահող (глиноzemъ): Ալիւմինիոնը կալ շիպի մէջ:

55. Կրածինը (կալիցի) մի ալսպիսի մետաղ է, որը գժուարութեամբ են ստանում մաքուր ձեռվ, թէև գտնուում է ամենասպիրական մարմինների մէջ. օրինակ, չը հանդցրած կիրը նրա թթւուկն է. կատիճը, մարմարիոնը, կրաքարը և բուստերը (кораллы) նրա բնածխատներն են. գաճը նրա ծծմբատն է. իսկ ալրուած ոսկը նրա լուսատն (լուսածնատ) է, և այն: Ուրեմն՝ ինչպէս տեսնում էք, այդ մետաղը բնութեան մէջ բաւականին տարածուած է:

45-դ փորձ. Եթէ մենք 29-դ փորձում կաւմից քորչըածնական թթւուտի միջոցով ստացանք բնածխական թթւուտ գազը, այն հեղուկը, որ մնաց շեշտ մէջ կրածնի քլորուուկն էր (хлористый камальций): Եթէ այդ հեղուկը քամելուց յետոյ գոլորշիացնենք մինչեւ վերջը, կ'ստանանք մի սպիտակ աղ. 20-դ փորձում մենք վերցրինք այդ նիւթը ջրածինը չորացնելու հա-

մար: Նա ագահութեամբ ծծում է օդից ջուրը, այնպէս որ եթէ մի քանի ժամ մնայ օդի մէջ, նա կը հալուի և հեղուկ կը դառնայ—այնքան ջուր կը վերցնի օդից:

Եթէ վերցնենք երկու լուծուածք՝ մէկը նատրոնական բնածխատ (սոดา), միւսը վերև լիշտածնի քլորուկը և այդ երկու լուծուածքը խառնենք երար հետ, այն ժամանակ կը տեսնենք, որ նրանք յանկարծ պղտորւում են. սրա պատճառն այն է, որ այստեղ գոյանում է մի նոր աղ՝ կը բնածխատ կամ կաւիճ, որը, ինչպէս գիտէք, անլուծելի լինելով ջրի մէջ նստում է բաժակի տակին: Այստեղ կատարում է հետևեալը՝

Մենք վերցրինք

Կրածնական քլորուկ (ջրի մէջ լուծ.) և նատրոնական բնած-	։	խառնելուց յետոյ ըս- տացանք խատ (ջրի մէջ լուծ.)
--	---	---

Կրածնական բնածխատ կամ կաւիճ (անլուծելի) և նատրոնական քլորուկ կամ հասարակ աղ. (ջրի մէջ լուծ.):

Սամածս ցոյց է տալիս, որ միեւնոյն մետաղի աղերից մի քանիսը ընդունակ են լուծուելու ջրի մէջ, մինչդեռ միւսները անլուծելի են (կաւիճ): Բայց դուք չը պիտի երեակալէք,

որ այստեղ գոյանում է մի նոր նիւթ, որը առաջ չը կար. ոչ, այստեղ միեւնոյն նիւթերն են, միայն նրանք ուրիշ ծեւով են դասաւորում: Այստեղ միայն մի առանձին փոխանակութիւն է կատարւում, որի հետեւանքն է կաւճի առաջանալը, բայց կաւճի մէջ եղած նիւթերը կամ նրա բաղադրիչ մասերը առաջ էլ կային և պարունակւում էին սկզբում վերցրած նիւթերի մէջ:

56. Մազնիոնը (մարհի) կակուղ, սպիտակ (արծաթի նման) մի մետաղ է, որին կարելի է տալ թելի կամ ժապաւէնի ձեւ:

46-դ փորձ: Եթէ վերցնէք այդ մետաղից 6 կամ 8 մատնաչափ երկայնութեամբ մի ժապաւէն և այդ ժապաւէնի ծայրը ուտհէք կրակի վերալ, մետաղը իսկոյն կը վառուի և կ'այրուի շլացուցիչ սպիտակ բոցով և կը թափուի գետնի վերալ սիպտակ փոշու ծեւով: Այդ սպիտակ փոշին կոչւում է մազնէզիա և մետաղի թթվուուկն է: Մազնիոնը ալրուելու ժամանակ երկրու տեսակ ծուխն է նկատուում. սպիտակ և սև. սպիտակ ծուխը նրա թթվուուկն է, ինչպէս ասացի, մագնէզիան է, որը ցնդւում է մանր փոշու պէս և յետոյ թափուում է գետինը, իսկ սև ծուխը մուր չէ, որովհետև այստեղ բնածուխ չը կալ, այլ կազմուած է մե-

տաղի այն մասնիկներից, որոնք չեն այրուել և
ծխի նման ցըռւել են:

47-դ փորձ: Եթէ այդ սպիտակ փոշին
հաւաքենք և խառնելով մի քանի կաթիլ ծր-
ծմբական թթւուտի հետ մի բաժակի մէջ տա-
քացնենք, այն ժամանակ փոշին կը լուծուի.
Երբ այդ լուծուածքը ածէք ճենապակեալ թա-
սի մէջ և գոլրշիացնէք, հովանալուց յետոյ
կ'ստանաք ասեղաձև բիւրեղների ձեռվ մի նիւթ,
որը կոչում է մազնիւնական ծծմբատ կամ
անզիւական (զառն) առ (գործ է ածուամ բը-
ժշկականութեան մէջ, ինչպէս լուծողական):

Մագնիոնը ունի և մի քանի ուրիշ միա-
ւորութիւններ, որոնք գտնւում են հանքերի
և լեռնալին տեսակների մէջ. բայց ինքը մե-
տաղը ազատ վիճակով չը կայ բնութեան մէջ
և մագնէզիալից ստանալը շատ թանկ է նըս-
տում: Նա գործ է ածուամ հրախաղութեան
համար (փեյերվերք) և նշաններ (սարհալք)
պատրաստելու համար այն դէպքերում, երբ
հարկաւոր է լինում ունենալ փալլուն լոյս: Խո-
նաւ օդի մէջ մագնիոնը չէ սեաննում, մնում
է փալլուն և եթէ էժան լինէր, կարելի կը
լինէր գործածել շատ բաների համար:

§ XXI. ՄԵՑԱՂՆԵՐ

57. Նատրիոնը այն մետաղն է, որ մենք
արդէն ճանաչում ենք և որը գործածեցինք
ջրից ջրածին ստանալու համար (13-դ փորձ):
Նատրիոնը նման չէ այն մետաղներին, որոնք
սովորաբար գործ են ածուամ արհեստներում.
Նրան չէ կարելի պահել ոչ օդի մէջ, որովհե-
տեւ խկոյն թթուանում է, միանում է թթվա-
ծնի հետ և կազմում է սպիտակ փոշի և
ոչ էլ ջրի մէջ, որովհետեւ միանում է ջրի թթ-
ուածնի հետ ազատելով այդ ջրի ջրածինը. այդ
պատճառով նատրիոնը պահում են քարիւղի
(նաևթի) տակ, որովհետեւ այդ նիւթի մէջ
թթուածին չը կայ: Մենք տեսանք (13-դ փորձ),
որ նատրիոնը ջրից թեթև է և լողում է նրա
երեսին գուրս մգելով ջրածինը. այդ ժամանակ
եթէ ջուրը կարմիր լուադեղով ներկուած լինէր,
նրա գոյնը խկոյն կը փոխուէր կապոյտի, որով-
հետեւ այստեղ գոյանում է՝ նատրիոնի և թթ-
ուածնի իրար հետ քիմիապէս միանալուց՝ կա-
լաքար (կծու նատրիոն):

48-դ փորձ: Նատրիոնը քիմիկոսի համար
շատ օգտաւէտ մետաղ է, որովհետեւ այդ մե-
տաղի միջոցով կարելի է ստանալ երկու նախ-
ընթաց մետաղները՝ մագնիոնը և ալիւմինիոնը:

Նատրիոնը, ինչպէս գուք ինքներդ կարող էք հասկանալ, բնութեան մէջ չէ գտնւում ազատ վիճակով, այլ պիտի ստանանք արուեստական միջոցներով. առհասարակ նատրիոնը ստանում են կծու նատրիոնից (Ֆճուար և մարտ), որը նրա թթւուկն է և որից ի հարկէ պիտի հեռացնել թթուածինը:

Եթե նատրիոնի մի կտոր գնէք գդալի մէջ և տաքացնէք, նա առաջ կը հալուի, յետոյ կը փառուի և կ'սկսի ալրուել վառ և դեղին բացով. այդ ժամանակ բարձրանում է նրա թթւուկի սպիտակ ծուխը:

Նատրիոնը կազմում է մի քանի շատ օգտաւէտ և տարածուած աղեր. ահա նրանցից մի քանիսը.

Սովորական անուն-ները.	Քիմիական անուն-ները.	Ի՞նչ են պարունակում.
1. ծովի կամ՝ հասարակ կամ՝ քարի աղ.	Նատրիոնական քլորուակ.	Նատրիոն և քլորուակ.
2. Գլաուբերի աղ.	Նատրիոնական ծըծմբատ.	Նատրիոն և ծըծմբական թթվածուած.
3. Սուդա (սոดา).	Նատրիոնական բընածխատ.	Նատրիոն և բընածխական թթվածուած.
4. Չիլիական բորակ (Սելիտրա)	Նատրիոնական բորակատ.	Նատրիոն և բորակական թթվածուած.

Արանցից ամենատարածուածը քարաղն է.

Նա գտնւում է Անգլիայում, Ոռուսաստանում, (Օրէնքրուրգի նահանգում), Կավկասում (Կողպի, Նախիջևանի և Կաղզզվանի մօտ) Հասարակ աղը կարելի է ստանալ նմանապէս և ծովի ջրից, եթէ գոլորշիացնենք այդ ջուրը: Հասարակ աղից կարելի է ստանալ նատրիոնի բոլոր ուրիշ աղերը: Օրինակ՝ եթէ կամենում ենք ունենալ Գլաուբերի աղը կամ ինչպէս ասում են նատրիոնական ծծմբատ, պէտք է հասարակ աղի լուծուածքի վերայ ածել մի քիչ ծծմբական թթվածուած. այն ժամանակ քլորջրածնական թթվուածը կը հեռանայ թանձր ծխի ձեռվ և կը մնայ նատրոնական ծծմբատը: Այսոեղ կտարում է հետևեալը՝

Մենք վերցրինք

Նատրիոնական քլորուակ (հասարակ աղ) և ծծմբական թթվածուած.

Իսկ ստացանք

Նատրոնական ծծմբատ (գլաուբերի աղ) և քլորջրածնական թթվածուած (գաղ):

Նատ հեշտ է ապացուցանել, որ այդ թանձր ծուխը թթվածուած է. դրա համար բաւական է եթէ կապոյտ լուսաղեղով թրջուած թուղթը պահէք այդ ծխի դէմ. թուղթը իսկոյն կը կարմըի:

58. Կալիոնը մի մետաղ է, որը պարու-

նակում է նրա թթուուկի և բազմաթիւ աղերի մէջ։ Այդ մետաղի մի փոքրիկ կտորը եթէ գտնենք ջրի մէջ այնքան մեծ ուժով կը միանալ ջրի թթուածնի հետ, որ այդ ջրի ջրածնը լանկարծ կը վառուի և կալրուի մանիշակագոյն բոցով առաջացած կծու կալիից։

Կալիոնի աղերը գտնուում են շատ երկրներում, նմանապէս և բուերի մոխրի մէջ։ Եթէ բոյսերի մոխրը ածենք ջրի մէջ և եռացնենք, կստանանք կալիոնի աղերից ամենասովորականը՝ կալիոնական բնածխատը կամ պօտաս (ՊՈՏԱՓԵ) կոչուած աղը, որը լուծուած դրութեամբ կը մնայ ջրի մէջ։ այդ այն աղն է, որը սովորական լեզուով կալաքար են ասում, թէև ի հարկէ այդ անունը սխալ է։

Կալիոնը տալիս է մի քանի շատ օգտակար աղեր. ահա մի քանիսի անունները՝

Սովորական անուններ.	Քիմիական անուններ.	Ի՞նչ են պարունակում.
1. Պոտաս.	Կալիոնական բնածխատ.	Կալի եւ բնածխատիան թթուատ.
2. Բորակ.	Կալիոնական բորական կատ.	Կալի եւ բորակական թթուատ.
3. Յէրտուլէ- տի աղ.	Կալիոնական քլորատ	Կալիոն, քլոր եւ թթուածին.

49-րդ վիորձ: Օճառը կամ սապոնը պատրաստում են կենդանալին կամ բուսալին իւղե-

րից և ճարպերից եռացնելով այդ իւղերը կամ ճարպերը կալաքարերի հետ։ Նատրիոն պարունակող սապոնները կոչում են կոշտ, իսկ կալիոն պարունակող—կալուղ։ Սապոն պատրաստելը շատ հեշտ է. վերցրէք մի ամանի մէջ կէս ունց (3½ մսխալ) գէրչակի ձէթ (касторовое масло), խոռնեցէք տաք ջրի մէջ և վերան ածէք մի քիչ կծու նատրոն. յետոյ եթէ այդ հեղուկը եռացնէք, կստանաք սապոն, որը լուծուած դրութեամբ կը մնայ ջրի մէջ։ Բայց երբ մի քանի ժամանակից յետոյ այդ հեղուկի վերայ ածէք մի բուռ հասարակ աղ, այն ժամանակ աղը կը լուծուի ջրի մէջ և սապոնը կը բարձրանայ ու կը լոզայ հեղուկի երեսին. սառչելուց յետոյ սապոնը կը պնդանայ և կը սպիտականալ և արդէն կարող է գործածուել ձեռքեր լուանալու համար։ Սովորաբար սապոն պատրաստելու համար վերցնում են ուրիշ ճարպեր և իւղեր. մենք վերցրինք գէրչակի ձէթը, որովհետեւ նա աւելի հեշտ է սապոն տալիս, քան ուրիշ ճարպերը։

Այժմ մենք պիմի խօսենք այնպիսի մետաղների մասին, որոնք շատ օգտաւէտ են և միւսոյն ժամանակ թանկագին և գործ են ածում զանազան բաների համար։

§ XXI. ՄԵՑԱՂՆԵՐ

59. Պղինձը կարմրագոյն մետաղ է և գործ է ածւում կաթսաներ, թասեր, մաֆտիլներ, ինքնաեռներ և ուրիշ բազմաթիւ իրեղեններ շինելու համար: Մաքուր, ինքնածին պղինձը թէւ երբեմն պատում է բնութեան մէջ, բայց առհասարակ պղինձը ստանում են հանքերից: Պղինձի ամենակարեւոր հանքը պղինձի ծծմբուկն է, որը բաղկացած է պղինձից և ծծմբից և որը մենք ստացանք 5-ր փորձում: Եթէ այս հանքից հեռացնենք ծծումբը, կը տանանք մետաղեալ պղինձ:

Պղինձը ուրիշ մետաղների հետ միանալով կազմում է շատ օգտակար խառնուրդներ (ըլլաբԵ), օրինակ՝ ցինկի հետ միանալով նա կազմում է ղեղին պղինձ (լատին), կլալեկի հետ ըրոնց: Եթէ մաքուր և փայտուն պղինձը օդի մէջ տաքացնենք նորա գոյնը կը մթնանայ, կը պղտորուի և ինքը մետաղը կը ծածկուի իւր թթւուկի սև խաւով, եթէ շարունակենք տաքացնել աւելի երկար ժամանակ, պղինձը ամբողջապէս կը միանալ օդի թթուածնի հետ և և կստանանք պղինձի սև թթւուկը, որը մենք դործածեցինք 20-ր փորձում:

50-ր փորձ: Եթէ վերցնենք պղինձի մէկ

կամ երկու բարակ կտոր և դնելով փոքրիկ ապակեալ անօթի մէջ՝ ածենք վերան մի քիչ բորական թթւուտ, այն ժամանակ կը տեսնենք, որ թթւուտից դուրս է գալիս մի շիկակարմրագոյն թանձր գոլորշի, իսկ անօթի մէջ գոյանում է պղինձական բորակատ (ազօթօ-
կուայ մԵմ) կոչուած աղը, որը լուծուած գրութեամբ մնում է հեղուկի մէջ: Այստեղ պղինձը միանում է թթուածնի և բորակական թթւուտի հետ: Այս լուծուածքի մի կաթիլ եթէ զցենք մի ջրով լիքը բաժակի մէջ և վերան աւելացնենք մի քիչ աւշակ (ամմիակ), այն ժամանակ ամբողջ ջուրը կապոյտ գոյն կստանայ, այնպէս որ աւշակը պղինձի աղերի համար ամենահեշտ փորձիչն է: Արջասալը (32-ր փորձ) կամ պղինձական ծծմբատը նոյնպէս պըղինձի աղ է, որովհետեւ եթէ նրա լուծուածքի վերան ածենք մի քիչ աւշակ, հեղուկը կստանայ կապոյտ գոյն: Այդ աղը բաղկացած է պըղինձից և ծծմբական թթւուտից:

60. Ցինկը շատ օգտաւէտ մետաղ է: Նա գործ է ածւում երկաթի թիթեղների երեսը ծածկելու համար, որովհետեւ այդպիսով նա պահպանում է երկաթը ժանգոտելուց խոնաւ օդի մէջ: Ցինկի գլխաւոր հանքը նրա ծծմբուկըն է, այսինքն ցինկը միացած է ծծմբի հետ:

(ինքը՝ մաքուր մետաղը՝ բնութեան մէջ չէ գըտնուում): Ցինկը միանում է նմանապէս և ուրիշ մետաղների հետ և տակիս է օգտագուշ խառնուրդներ. օրինակ՝ դեղին պղինձը (որից շինում են ինքնաեռներ) կազմուած է ցինկից և պղնձից:

51-րդ փորձ: Եթէ ցինկը լուծենք ջրախառն ծծմբական թթվուուտի մէջ (15-րդ փորձ), այն ժամանակ ցինկը կը միանալ ծծմբական թթվուուտի հետ և կը կազմի ցինկի ծծմբատ, որը կը մնայ լուծուած դրութեամբ ջրի մէջ, իսկ ջրածինը կազմատուի: Եթէ այս լուծուածքից մի քիչ վերցնենք, քամենք և յետոյ գոլորշիացնենք և թողնենք, որ Հովհաննա, այն ժամանակ կստանանք ցինկի ծծմբատի սպիտակ բիւրեղներ: Եթէ ցինկի խարտուածքը ենթարկենք բարձր աստիճանի տաքութեան, այդ խարտուածքը կսկսի ալրուել. նա կը միանալ օդի թթվուածնի հետ և կը կազմի թթվուուկ. ուրեմն՝ այդ լատկութիւնով ցինկը նման է մաղսինի:

61. Կլայեկը փալուն, սպիտակ մետաղ է և գործ է ածուում երկաթը ծածկելու համար. սպիտակ թիթեղը (жесть) ոչ այլ այլ ինչ է, եթէ ոչ կլայեկով ծածկուած երկաթ. այսպիսով երկաթը պահպանում են ժանդուելուց:

Կլայեկը գործ են ածում նմանապէս և խառնուրդներ (յարազօդ) ստանալու համար (բրոնզ, բրիտանական մետաղ, և այլն):

Կլայեկի ամենակարեւոր հանքը նրա թըթուկն է, որը կոչւում է կլայեկի քար և գըտնուում է մեծ քանակութեամբ Անգլիայում (Կորնվալսում): Եթէ այդ հանքը ածխի հետ միասին սաստիկ տաքացնենք, այն ժամանակ ածուխը կը խիթ նրանից թթվուածինը (այսինքն կը միանալ թթվուածնի հետ) և կը մնայ միայն մաքուր մետաղը հալուած դրութան մէջ:

52-րդ փորձ: Մաքուր մետաղը կարելի է



Նկար 36.

ստանալ և այսպէս. վերցրէք ծեծուած կլայեկի թթվուուկը և նոյն քանակութեամբ էլ նատրոնական բնածխատ (սօճա), խառնեցէք և յետոյ

վերցրէք մի կտոր ածուխ, մէջը մի փոքրիկ փոս շինեցէք ու վերոյիշեալ խառնուրդը ածէք այդ փոսի մէջ. ապա տաքացրէք խառնուրդը փողակի (ոայլիհայ Երգու) միջոցով (ՅԵՒՆԻԿԱՐ):

Խառնուրդը շուտով կը հալուի. մի քսնի ժամանակից յետոյ գանակով կտրէք ածխի այն մասը, որտեղ դրուած էր և խառնուրդը սանդի մէջ գնելով լաւ ծեծեցէք. յետոյ ածխի թեթև փոքրիկ մասնիկները ջրով հեռացրէք և դուք կը նկատէք սանդի տակին մի քանի ծանր, փայլուն, կոլոր մաքուր կլայեկի կտորներ:

Այս փորձում կլայեկի թթւուկի թթուածինը միանում է ածխի բնածխի հետ և կազմում է բնածխական թթւուտ գազը, որը հեռանում է, իսկ մետաղեայ կլայեկը մնում է տակին և հալում է:

62. Արծիծը ծանր կալտագոյն մետաղ է. նա հալում է հեշտութեամբ, կակուլ է և ճկուն ու գժուարութեամբ է ենթարկում թթւուտների ազդեցութեան. այդ պատճառով գործ է ածում բազմաթիւ իրեղէնների համար. նրանից շինում են ջրանցքի խողովակներ, գնդակներ (Հրացանների համար), կոտորակ (սէչմա), և ալին: Արճճի հանքը գտնուում է

Սնգիլիայում, Ոռոսաստանում, Սիբիրում և ուրիշ տեղերում:

Արճճի ամենակարևոր հանքը նրա ծծլմբուկն է:

Այն գործողութիւնը, որի միջոցով առհասարակ հանքերից ստանում են մաքուր մետաղ, կոչում է հալում (Երգու). իսկ գիտութեան այն ճիւղը, որը պարապում է այդ առարկայով, կոչում է մետալուրգիա:

Ահաւասիկ արճճի աղերի մի քանիսի անունները:

Սովորական անուն-ներ.	Թիմրական անուն-ներ.	Խշից են բաղկացած.
1. Մարտակագեղ (евинцовия Եվլու)	Արօրծական բնած-	Արծիծ եւ բնած-
2. Կարմիրագեղ (ըս-րուկъ)	Արծրծական թթթ-	խական թթթուուտ.
3. Քարմարցանի (գլետъ)	Արծրծական թթթ-	Արծիծ եւ թթթուու-
4. Արծրծաշաքար (евинцовия сахаръ)	Արծրծական քացա-	ծին.
5. (Արծրծական քը-րումատատ.)	Արծրծական քրո-	Արծիծ եւ քացա-
	մատ.	խական թթթուուտ.
		Արծիծ եւ քրոմա-
		կան թթթուուտ.

Ապիտակագեղը, կարմրագեղը և արճճական քրոմատը գործ են ածում ինչպէս ներկեր: 53-դ փորձ: Մի բաժակ ջրի մէջ ածէք մի քիչ կալիոնական քրոմատ (ХРОМОВОКИСЛО-ԿԱԼԻ) և մի քիչ էլ արճճաշաքար, այն ժամանակ կտտանանք գեղեցիկ գեղնագոյն տա-

կանք. այդ տականքը արձրմական քրումատ
է: Ալստեղ կատարւում է հետևեալը:

Մինչև խառնելը

Կալիոնական քրումատ և արձրճական քա-
ցախատ (երկուսն էլ լուծւում են ջրի մէջ).

Խառնելուց յետոյ

Դեղին արձրճական քրումատ (չէ լուծւում)
և կալիոնական քացախատ (լուծւում է):

63. Սնդիկը (բրուտ) միակ մետաղն է,
որ սովորական բարեխառնութեան ժամանակ
հեղուկ վիճակի մէջ. այդ պատճառով նա գործ
է ածւում ջերմաշափներ (термометր) և
ծանրաշափներ (барометр) — օդի ճնշումը
չափող գործիք) պատրաստելու համար, հայե-
լիներ ամազդամացնելու և այլն: Սնդիկը օդի
մէջ չէ կորցնում իւր փայլը, բայց տաքացնե-
լիս թթուանում է և կազմում է կարմիր թղթ-
ուլկ, որից կարելի է ստանալ թթուածին, եթէ
ենթարկենք բարձր աստիճանի տաքութեան
(Յո-դ նկ.):

Սնդիկը կարող է ջրի նման եռալ և գո-
լորշի դառնալ: Ուրիշ շատ մետաղների նման
սնդիկը և նրա միաւորութիւնները թունաւոր
են, բայց մի քանի միաւորութիւնները փոքր

քանակութեամբ գործ են ածւում իրեւ դեղ
բժկականութեան մէջ:

64. Ալյօաթը շատ թանկագին և կարեւոր
մետաղ է: Նա գտնուում է Մեքսիկայում, Պէ-
րում, Ռուսաստանում և ուրիշ երկրներում:
Այն յատկութիւնը, որի հիման վերայ արձա-
թը (և առհասարակ բոլոր մետաղները) օգտաւէտ
է համարւում, կայանում է նրանում որ նա օդի
մէջ չէ փոխւում, չէ կորցնում փայլը, չէ թղթ-
ուանում: Բայց ծծմբի հետ նա միանում է և
կազմում է սև ծծմբուկ: Արծաթը ամենահին
դարերից սկսած գործ է սծւում թանկագին
և գեղեցիկ բաներ շինելու համար և մանա-
ւանդ դրամ՝ (փող) կտրելու համար: Ալժմեան
արծաթի փողը պարունակում է և մի քիչ պը-
ղինձ, որը աւելացնում են արծաթին կարծրու-
թիւն տալու համար:

54-դ փողը: Տեսնենք թէ ինչպէս կարելի
է իմանալ, որ արծաթի փողի մէջ պղինձ կալ:
Արծաթի փողից կտրեցէք մի փոքրիկ կտոր, գրե-
ցէք մի բաժակի մէջ և ածեցէք վերան մի քիչ
բորակական թթուուտ: Բորակական թթուուտից
իսկոյն գուրս կը գայ կարմիր գոլորշի: մի քիչ
տաքացնելուց յետոյ գուրք կը տեսնէք, որ ար-
ծաթը հեշտութեամբ լուծւում է: Ալժմ աշ-
խատենք հեռացնել այդ հեղուկից բոլոր ար-

ծալթը. գրա համար մենք պիտի դիմենք հետևեալ միջոցին: Դուք գիտեք արդէն (22-րդ փորձ), որ արծաթը գործ են ածում ինչպէս փորձիչ այն ժամանակ, երբ կամենում են իմանալ թէ մի որևէ մեզ տուած նիւթի մէջ աղկայ թէ ոչ: Ուստի, եթէ մէր ստացած արծաթի լուծուածքին մի քիչ հասարակ աղի լուծուածք աւելացնենք, այն ժամանակ կստանանք մի անլուծելի, թանձը և սպիտակ նիւթ, որը կուռում է արծաթի ըլլորուկ: Եթէ այդ քլորուկը քամելով հեռացնենք, բաժակի մէջ կը մնալ կանաչ-կապուտ գոյնի մի հեղուկ, որը պարունակում է իւր մէջ պղինձ, որովհետեւ եթէ ալդ հեղուկի մէջ դնենք փայլուն և մաքուր երկաթի մի կտոր, երկաթը խկոն կը ծածկուի կարմիր պղնձի խաւով:

Ս.յատեղ կատարուեց հետևեալ՝
Վ.երցրինք՝

Արծաթական բորակատ և նատրիոնական քլորուկ (հասարակ աղ) — երկումն էլ լուծում են
Ստացանք՝

Արծաթական քլորուկ (անլուծելի սպիտակ տականք) և նատրոնական բորակատ (լուծ.):

65. Ուկին աւելի ևս թանկագին մետաղ է, քան արծաթը: Նա ունի գեղեցիկ դեղին

գոյն և բնութեան մէջ գտնուում է, ինչպէս ինքնածին մետաղ և ոչ թէ ուրիշ պարզ մարմինների հետ միացած: Վերջին ժամանակները նա շատ է ստացուում մանաւանդ Աւտորալիալում և Կալիֆօրնիայում: Ուկին ամենածանր մետաղներից մէկն է. նրանից կարելի է պատրաստել ամենաբարակ թելեր և թերթեր, որոնք գործ են ածում զանազան առարկաներ ոսկեզօծելու համար: Ինչպէս մաքուր արծաթից, նոյնպէս և մաքուր ոսկուց փող (գրամ) չեն շինում, որովհետեւ մաքուր ոսկին կակուղ է. այդ պատճառաւ նորա հետ խառնում են և պղինձ:

55-դ փորձ: Ուկին ոչ մի թթւուտի մէջ չէ լուծում: Վերցրէք ոսկու մի փոքրիկ կտոր, բաժանեցիք երկու մասի, մէկը դրեցէք բորակական թթւուտի մէջ, միւսը քլորջրածնական (սոլյառայ ԷԽԸ.): Ոսկին այդ երկու թթւուտներումն էլ չի լուծուի. բայց եթէ երկու թթւուտն էլ թափէք մի բաժակի մէջ, այն ժամանակ ոսկին խսկոյն կը լուծուի: Դա ցոյց է տալիս մեզ, որ թէւ ոսկին ոչ մի թթւուտի մէջ չէ լուծում, բայց նրանց խառնուրդի մէջ կարող է լուծուել:

Ուկին չէ փոխուում օղի մէջ, ծծմբի աղեցութիւնից չէ սկանում արծաթի պէս. այն-

պէս որ ամենահին ժամանակներից սկսած նա գործ է ածւում և փողի համար և ինչպէս զարդարանք:

XXII. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

66. Քիմիական որոշ միատրութիւններ։
Այժմ շատ կարեսը է քննել և տեսնել թէ
ինչ եզրակացութիւնների եկանք մենք կրակը,
օդը, ջուրը և հողը ուսումնասիրելուց լետոյ։
Դուք արդէն որոշ գաղափար ունեք այն զա-
նազան նիւթերի մասին, որոնցից բաղկացած է
մեր երկրագունդը. դուք գիտէք, որ բոլոր
մարմինները՝ թէ պինդ, հեղուկ կամ գազանման
և թէ կենդանալին, բուսալին կամ հանքալին՝
բաղկացած են մէկ կամ մի քանի տարրերից.
այս վերջիններից մինչև այժմ մարդիկ ոչ մէկը
չը կարողացան վերածել կամ վերլուծել ուրիշ
մարմինների։

Դուք նմանապէս իմացաք, որ այս տար-
րերը միանալով իրար հետ՝ կազմում են բարդ
մարմիններ, որոնք իրանց յատկութիւններով
բոլորովին տարբերում են իրանց բաղադրիչ
մասերից և որոնցից կարելի է այլ և այլ մի-
ջոցներով նորից ստանալ նոյն պարզ մարմին-
ները։ Յատնի է ձեզ նոյնպէս և այն մեծ օրէն-

քը, որ բարդ մարմնի կշռութ միշտ և ճշտորէն
հաւասար է նրան կազմող պարզ մարմինների
կշռի գումարին և բոլոր քիմիական փոփոխում-
ների կամ գործողութիւնների ժամանակ նիւ-
թի մի մսխալ անգամ չէ կորչում։ Մենք ան-
կարող ենք ստեղծել կամ ոչնչացնել նիւթի մի
ամենաաննշան մասնիկը։

Կշռի մեծնշանակութիւնը քիմիկոսի հա-
մար ձեզ նոյնպէս հասկանալի է. քիմիկոսը
ամեն բան ինչ որ հետազօտում է, պիտի կը-
ռի, ինչպէս մենք արինք 20-ր փորձում ջրի
վերաբերմամբ։ Մենք իմացանք որ

թթուածնի տասն և մեց մասը (իւր կշռով). . . 16
միանալով ջրածնի երկու մասի հետ (իւր կշռով). 2
կազմում են տասն և ութ մաս ջրի (իւր կշռով). 18

և ես ձեզ տսացի, որ ջուրը միշտ բաղկացած
է այդ երկու տարրերից, որոնք միշտ որոշ քա-
նակութեամբ են միանում իրար հետ։ Նոյնը
ճիշտ է և բոլոր ուրիշ քիմիական միաւորու-
թիւնների վերաբերմամբ։ Նրանք բոլորն էլ բաղ-
կացած են այնախոն տարրերից, որոնց քանա-
կութիւնը յայտնի է, որոշ և անփոփոխ։ Այս-
պէս օրինակ՝ քիմիկոսները գտել են, որ սնդիկի
կարմիր թթւուկը (30-ր փորձ) միշտ պարու-
նակում է՝

Թթուածին	.	.	.	16	մաս (կշռով)
և սնդիկ	.	.	.	200	մաս (կշռով)
Թթուակ սնդկի	.	.	.	216	մաս (կշռով)

Այսպէս որ՝ եթէ կամենում եմ ստանալ 16 ֆնտ. թթուածին, ես պիտի սնդիկի կարմիր թթուակից վերցնեմ 216 ֆնտ. և եթէ անզգուշութիւնից ոչինչ չը կորցնեմ, ես ճիշտ և անպատճառ կստանամ ապահանջած քանակութեամբ թթուածին. հասկանալի է, որ հասարակ համեմատութեան միջոցով ես կարող եմ իմանալ թէ որքան սնդիկի կարմիր թթուակ պիտի վերցնեմ, որ ստանամ յախնի քանակութեամբ թթուածին:

Այս կարևոր օրէնքը՝ այսինքն քիմիական միաւորութիւնների մշտականութիւնը՝ վերաբերում է բոլոր քիմիական փոփոխութիւններին: Եթէ մենք բորակից և ծծմբական թթուատից կամենում ենք ստանալ բորակական թթուուտ (38-դ փորձ), մենք պիտի ունենանք անպատճառ 98 մաս ծծմբական թթուուտ և 101 մաս բորակ, որ ստանանք 63 մաս բորական թթուուտ: Եթէ ալրելու լինիմ 24 մաս մագնիոնի (46-դ փորձ), միշտ կստանամ ճիշտ 40 մաս մագնէզիալի, եթէ միայն ոչինչ չը կորցնեմ: Այդ 40 մասից 16 մասը կը լինի թթուածին:

Ուրեմն՝ բոլոր տարրերը միանում են իրար հետ որոշ քանակութեամբ և այդ քանակութեանց թուերը կոչում են—

67. Համեմատական թուեր: Ահա նրանցից ամենակարևորները՝

Ոչ-մետաղներ

Թթուածին	.	.	0=16
Զրածին	.	.	H=1
Բորակածին	.	.	N=14
Բնածուխ կամ ածխածին	.	.	C=12
Քլոր	.	.	Cl=35
Մծումբ	.	.	S=32
Լուսածին	.	.	P=31
Գայլիսապածին (սիլիկիոն)	.	.	Si=28

Մետաղներ

Երկաթ	.	.	Fe=56
Ալիւմինիոն	.	.	Al=27
Կրածին կամ կալցիոն	.	.	Ca=40
Մագնիոն	.	.	Mg=24
Նատրիոն	.	.	Na=23
Կալիոն	.	.	K=39
Պղինձ	.	.	Cu=63
Ցինկ	.	.	Fn=65
Կայուկ	.	.	Sn=118
Արծիճ	.	.	Pb=207
Սնդիկ	.	.	Hg=200
Արծաթ	.	.	Ag=108
Աոկի	.	.	Au=197

Այս աղիւսակում նշանակուած են համեմատական թուերը և իւրաքանչիւր տարրի նշանը: Այս տառը, որ դրուած է տարրի անուան դիմաց՝ նրա համառօտ նշանն է: այսպէս որ փոխանակ գրելու ամբողջ խօսքը լուսածին, գրում են միայն Պ տառը: Այդ նշանների համար տառերը վերցրած են լատիներէնից. օրինակ՝ երկաթը լատիներէն ferrum է և նորաքիմիական նշանը երկու առաջին տառն է Fe. արծաթի նշանը Ag է, որովհետեւ լատիներէն արծաթը կոչւում է Argentum: Նշանների մօտ դրուած թուերը համեմատական թուերն են. նրանք ցոյց են տալիս թէ այս կամ այն տարրը միանում է ուրիշ տարրերի հետ նշանակած քանակութեամբ: Իւրաքանչիւր թիւը մարդիկ գտել են փորձով, այսինքն՝ վերլուծելով այն միաւրութիւնները, որոնց մէջ պարունակում է մեզ տուած տարրը: (Այդպիսի փորձերը կազմում են գիտութեան մէջ հետազոտութեան մի ընդհանուր միջոց, մի մեթոդ, որը կոչում է անալիզ կամ տարրաբաշխութիւն):

Այսպէս օրինակ, վերլուծելով սնդիկի կարմիր թթւուկը, նկատել են, որ նա պարունակում է 16 մաս (կշռով) թթուածին և 200 մաս (կշռով) սնդիկ. կամ տարրացնելով պղինձը

և ծծումբը միասին (հ-դ փորձ) մէնք կը նկատենք, որ 63 մաս (կշռով) պղնձի միանում է ծծմբի 32 մասի հետ (կշռով) և կազմում է 95 մաս (կշռով) պղնձական ծծմբատ, և եթէ այս տարրերից մէկը վերցրուած լինէր աւելի շատ կամ աւելի քիչ՝ նա կը մնար առանց միանալու: Թթուածնի 16 մասը (կշռով) դարձեալ կարող է միանալ և միանում է ուրիշ մետաղների հետ՝ կազմելով այլ և այլ թթուուկներ և մետաղի այն քանակութիւնը, որի հետ միանում է թթուածինը կը լինի նորա (մետաղի) համեմատական թիւը կամ այդ թուից մէկ, երկու, երեք, և այլն անգամ աւելի: Այսպէս օրինակ՝ թթուածնի 16 մասը միանում է երկաթի 56 մասի հետ և կազմում է երկաթական թթուուկ, կրածնի 40 մասի հետ միանալով կազմում է թթուուկ կրածնի կամ կիր, ցինկի 65 մասի հետ, կլալեկի 118 մասի հետ, արճըճի 207 մասի հետ, և այլն կազմելով այդ մետաղների թթուուկները:

Բայց մեր քիմիական նշաններն ունին և մի ուրիշ նշանակութիւն: Եթէ ես գրում եմ Օ կամ Hg, այդ տառերով ես նշանակում եմ ոչ թէ մի որ և է անորոշ քանակութիւն, այլ լայտնի: և որոշ, ոյնքան, որքան ցոյց են տալիս նրանց համեմատական թուերը: Օ

նշանը ցոլց է տալիս, որ վերցրուած է թթվուածնի 16 մաս (կշռով) և ոչ թէ մի ուրիշ քանակութիւն. Hg-նշանակում է 200 մաս սնդիկի և ոչ թէ մի ուրիշ քանակութիւն. դրա համար է աղիւսակում գրուած $0=16$ և $Hg=200$:

Այժմ ենթադրենք, որ ես ցանկանում եմ նշանակել տառերով մի որ և է բարդ մարմին, դրա համար ես պիտի գրեմ նրա մէջ պարունակող տարրերի նշանները. օրինակ Hg O նշանակում է թթվուկ սնդիկի. դա ինձ ցոլց է տալիս, որ սնդիկի թթվուկը ոչ թէ միայն բաղկացած է սնդիկից և թթուածնից, այլ և այն թէ ինչ քանակութեամբ է նա պարունակում թթուածին և ինչ քանակութեամբ սնդիկ, որովհետև ես գիտեմ, որ O նշանակում է 16, իսկ Hg—200: Ուրեմն՝ քիմիական նշանները կամ Փօրմուլները շատ կարևոր են և միենոյն ժամանակ շատ օգտակար, որովհետև նոքա արտայատում են ոչ թէ միայն մարմինների որակական (որպիսական-կառեանայ) բաղադրութիւնը, թէ ինչ տարրերից են նոքա բաղկացած, այլ և նոցա քանակական (կոլի-քառականայ) բաղադրութիւնը: Օրինակ, CaO նշանակում է կրածնական թթվուկ, կամ կիր, ալիքնքն 40 մաս կրածնի և 16 մաս թթվուա-

ծնի՝ կազմում են 56 մաս կիր. ZnO-նշանակում է թթվուկ ցինկի, ալիքնքն 65 մաս ցինկ և 16 մաս թթվուածին կազմում են 81 մաս թթվուկ. մինչդեռ H₂O նշանակում է ջուր, ալիքնքն ջրածնի 2 մասը և թթվուածնի 16 մասը կազմում են 18 մաս ջրի:

68. Պարզ մարմինների մէջ կան այնպիսինները, որոնք միանալով մի ուրիշ տարրի հետ՝ կազմում են ոչ թէ մէկ քիմիական միաւորութիւն, այլ մի քանի. բայց այս գէպքումն էլ նրանց քանակութիւններն այնուամենայնիւ միշտ որոշ են և անփոփոխ: Օրինակ, բորակածինը և թթվուածինը միանալով իրար հետ՝ կազմում են հետևեալ հինգ մարմինները՝

Առաջին մարմինը բաղկացած է 28 մաս բորակածնից և 16 մաս թթվուածնից և կոչւում է բորակային թթվուկ կամ բորակածնի միաթթվուուկ (закись азота).

Երկրորդ մարմինը պարունակում է 28 մաս բորակածին և 32 մաս թթվուածին և կոչւում է բորակական թթվուկ կամ բորակածնի երկթթվուկ (окись азота).

Երրորդ մարմինը պարունակում է 28 մաս բորակածին և 48 մաս թթվուածին և կոչւում է բորակային թթվուտ կամ բորակածնի եռաթթվուկ (азотистая кислота).

Չորրորդմարմինը պարունակում է 28 մաս բորակածին և 64 մաս թթուածին և կոչում է ենթառուակական թթուուտ կամ բորակածի քառաթթւուկ (азотновотая кислота) և վերջապէս հինգերորդ մարմինը պարունակում է 28 մաս բորակածին և 80 մաս թթուածին, և կոչում է բորակական թթուուտ կամ բորակածնի հնգաթթւուկ (բորակական անջուր, այսինքն անջուր բորակական թթւուտ, անհիդրիդ—азотный ангидридъ, или безводная азотная кислота):

Այժմ հեշտ է գրել այդ մարմինների նըշանները կամ Փօրմուլները, որովհետև մենք արդէն դիտենք, որ N նշանակում է 14, իսկ 0—16 մաս (կշռով):

Առաջի մարմինը բաղկացած է բորակածնի 28 մասից, այսինքն նորա համեմատական թիւը (14) վերցրած է 2 անգամ և թթուածնի 16 մասից, այսինքն նորա համեմատական թիւը (16) վերցրած է 1 անգամ. Նորա նշանը կըլինի N₂O *).

Երկրորդ միաւորութեան նշանը կը լինի N₂O₂.

Երրորդ 2 > > N₂O₃.

Չորրորդ > » > N₂O₄.

Հինգերորդ > » » N₂O₅.

*.) Նշանի ներքեին դրուած փոքրիկ թուանշանը ցոյց է տալիս, որ համեմատական թիւը պէտք է վերց-

համեմատելով այս նշանները՝ մենք կը տեսնենք որ թթուածի քանակութիւնը երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ մարմինների մէջ երկու, երեք, չորս և հինգ անգամ աւելի շատ է, քան առաջին մարմնի մէջ։ Բացի դրանից, մենք տեսնում ենք որ անկարելի է բորակածնից և թթուածնից ստանալ մի այնպիսի միաւորութիւն, որը պարունակէր թթուածնի մի ուրիշ միջանկեալ քանակութիւն։ Օրինակ, եթէ կամենալինք բորակածնի 28 մասը միացնել թթուածնի միայն 20 մասի հետ, կը տեսնենք որ բոլոր մեր բորակածնը միանում է թթուածնի միայն 16 մասի հետ և մնացած 4 մասը մնում է չը միացած։ Ուրեմն՝ մենք իմացանք երկու հետեւեալ կարևոր քիմիական օրէնքները՝

1. Որ պարզ մարմինները միանում են իրար հետ յախտնի և որոշ քանակութեամբ և այդ որոշ քանակութիւնները արտայալուում են համեմատական թուերով։

2. Որ երբ երկու պարզ մարմիններ միանում են իրար հետ մի քանի անգամ, նրանց քանակութիւնները համեմատական թուերի հետ համեմատած՝ լինում են 2, 3, 4, և այլն անգամ շատ։


Ներկայութեան անգամ, O₃ նշանակում է թթուածին (16) վերցրուած 3 անգամ կամ $3 \times 16 = 48$:

69. Հիմնական հաւասարութիւնների
նշանակութիւնը:

Արդ՝ գուք հասկանում էք, որ բոլոր քի-
միական փոփոխութիւնները և գործողութիւն-
ները կարելի է գրել նշաններով։ Իւրաքան-
չւրն այդ գործողութիւններից բոլորովին
որոշ է և ամեն մի գեղքում մենք կարող ենք
իմանալ ոչ թէ միայն այն ինչ որ գոյացաւ,
այլ և այն թէ որչափ գոյացաւ։ Վերցնենք մի
քանի օրինակ. գիցուք ես կամենում եմ պատ-
րաստել բորակական թթւուտ (38-դ փորձ)։
Ես բորակ (բորակատ կալիի) և ծծմբական թթւ-
ուտ և մէկը միւսի հետ խառնելուց յետով
կստանամ բորակական թթւուտ և կալինական
ծծմբատ, որը կը մնայ անօթի յատակին, որո-
շելու համար թէ ինչ ալստեղ գոյացաւ և որ-
քան մենք պիտի գրենք բորակի և ծծմբական
թթւուտի Փօրմուլը։ Բորակը գրւում է ալսպէս
 KNO_3 *), ալսինքն նա պարունակում է կալիոն
 $K = 39$, բորակածին $N = 14$ և թթուա-
ծին $O_3 = \text{երեք}$ անգամ 16 կամ 48։ Ծծմբական
թթւուտ գրւում է ալսպէս H_2SO_4 , ալսինքն
նա պարունակում է ջրածին $H = \text{երկու}$ ան-
գամ 1. կամ 2, ծծումբ $S = 32$ և թթուածին

*) Տառի ներքեկի դրած թուանշանը վերաբե-
րում է միայն այդ տառին։

Օ—4 անգամ 16 կամ 64։ Երբ այս երկու
մարմինները խառնում ենք, այն ժամանակ
ծծմբական թթւուտի ջրածնի (H_2) կէսը (H)
փոխում է բորակի կալիոնի K հետ, այնպէս՝
որ մէկը միւսի տեղն է բռնում և առաջա-
նում են երկու ուրիշ հետևեալ մարմիններ՝
բորակական թթւուտ HNO_3 , որը մի գեղին և
ցնդական հեղուկ է և կալիոնական ծծմբատ
 KHSO_4 , որը պինդ և սպիտակ նիւթ է. բորա-
կական թթւուտը ցնդում է, իսկ ծծմբատը
մնում է ըէտօրտի մէջ։ Այս փոփոխութիւնը
կարելի է ուրեմն նշանակել հետևեալ հաւա-
սարութիւնով։




Այս հաւասարութիւնը հեշտ կերպով ցոլց է
տալիս մեզ, թէ այստեղ ինչ գոյացաւ և որքան.
և արդարեւ, եթէ գրենք այդ նշաններին հա-
մապատասխանող թուերը, մենք կը տեսնենք որ
 $39+14+48$ և $2+32+64=1+14+48$ եւ $39+1+32+64$

$$101 + 98 = 63 + 136$$


ալսինքն վերցրած 101 մաս բորակից և 98
մաս ծծմբական թթւուտից՝ մենք ստացանք
63 մաս բորակական թթւուտ և 136 մաս կա-
լիոնական ծծմբատ ոչ աւել և ոչ պակաս. և

անշուշտ ալդ թուելը թողլ են տալիս մեզ
հաշուել թէ որքան պիտի վերցնենք այս կամ
այն նիւթից, որ ստանանք յատնի քանակու-
թեամբ թթւուտ: Ենթադրենք, որ դուք կա-
մենում էք սլատրաստել 10 ֆունտ բորակական
թթւուտ, արդեօք ո՞րքան բորակ և ո՞րքան
ծծմբական թթւուտ պիտի վերցնէք: Եթէ դուք
կամենալիք սլատրաստել 63 ֆունտ բորակական
թթւուտ, այն ժամանակ պիտի վերցնէիք, ինչ-
պէս ցոյց է տալիս նախընթաց Փօրմուլը, 98
ֆունտ ծծմբական թթւուտ և 101 ֆունտ բո-
րակ. ուրեմն 10 ֆունտ թթւուտ ստանալու
համար պիտի վերցնէք $\frac{10 \cdot 98}{63}$ ֆունտ ծծմբական
թթւուտ և $\frac{10 \cdot 101}{63}$ ֆ. բորակ:

Վերցնենք մի ուրիշ օրինակ: Զրածին
սլատրաստելու համար (15-դ փորձ) մենք ջրա-
խառն ծծմբական թթւուտի վերայ ներգործե-
ցինք ցինկով. այս փոփոխութիւնները կարելի
է նշանակել հետևեալ հաւասարութիւնով՝



Կամ




Դա նշանակում է, որ եթէ ես վերցնեմ


65 ֆ. ցինկ և 98 ֆ. ծծմբական թթւուտ,
ես անպատճառ և միշտ պիտի ստանամ 2 ֆ.
ջրածին և 161 ֆ. ցինկի ծծմբատ: Եթէ ես
ձեզ հարցնեմ, թէ որքան ցինկ և ծծմբական
թթւուտ պիտի վերցնէք 40 ֆ. ջրածին պատ-
րաստելու համար, հաւատացած եմ, որ դուք
հեշտութեամբ կը պատասխանէք հարցիս *):

*) Այժմ աշխատանք արտայայտել Փօրմուլնե-
րով և հաւասարութիւններով այն փոփոխութիւն-
ները, որոնք կատարուեցին մեր նախընթաց փոր-
ձերից մի քանիսում:

1. Առաջի փորձում, երբ մենք ազդեցինք բնած-
խական թթւուտի վերայ կրային ջրով, մենք ստացանք
կաւիճ. այդ փոփոխութիւնը կարելի է նշանակել
հետևեալ կերպով. բնածխական թթւուտը գրւում է
այսպէս CO_2 . այսինքն նա բաղկացած է բնածխից
 $\text{C}-12$ մաս և թթւուածնից O_2-16 երկու անգամ
 $2 \times 16 = 32$: Կիրը նշանակում է այսպէս՝ CaO ,
այսինքն բաղկացած է կրածնից $\text{Ca}-40$ և թթւու-
ածնից $\text{O}=16$: Եթէ խառնենք այդ երկուսը կըստա-
նանք կաւիճ.



2. Ցանկեւերեք քերորդ (13) փորձում երբ մենք
ներգործեցինք ջրի վերայ նատրիոնով, մանք ստա-
ցանք ջրածին և նատրոն (կծու կալաքար). այս դոր-
ծողութիւնը պիտի գրուի այսպէս:




նատրիոն և ջուր = նատրոն և ջրածին

Նոյնպէս և բոլոր քիմիական գործողութիւնները կարելի է արտայալտել Փօրմուլներով կամ նշաններով, որոնք հեշտ կերպով մեզ ցոյց կը տան թէ ի՞նչ նիւթեր են գոյանում կամ որչափ պիտի վերցնեմ իւրաքանչիւր նիւ-

Այստեղ նատրիոնը (մետաղ) և ջրի ջրածինը փոխում են իրանց տեղը մէկը միւսի տեղը բռնելով:


3. Քսաններկուերորդ փորձում (22-դ) մենք աղի գոյութիւնը գտնելու համար ներգործեցինք նրա լուծուածքի վերայ մի ուրիշ նիւթով, որը կոչւում է արծաթական բորակատ (լապիս) և ստացանք մի թեթև և սպիտակ դոյնի պղտորութիւն, որը դուք արդէն հշառութեամբ կարող էք որոշել: Այդ փոփոխութիւնը կարելի է նշանակել այսպէս. հասարակ աղը դրում է NaCl, այսինքն նա բաղկացած է նատրիոնից Na=23 և քլորից Cl=35. իսկ արծաթական բորակատը դրում է Ag NO₃, այսինքն նա բաղկացած է արծաթից Ag=108, բորակածնից N=14 և թթուածնից O₃=երեք անդամ $3 \times 16 = 48$: Ուրեմն կունենանք հետեւեալ հաւասարութիւնը.




Այստեղ ստացանք, ինչպէս դուք արդէն գիտէք 54-դ փորձից, քլորուկ արծաթի (AgCl), որը անլուծելի է ջրի մէջ և վերև յիշած պղտորութեան պատճառն է և սատրուական բորակատ NaNO₃, որը լուծում է ջրի մէջ. ուրեմն այդ երկու մետաղները, արծաթը և նատրիոնը, փոխուցին իրանց տեղերը:

թից, կամ վերջապէս որչափ կը ստանանք: Քիմիկոսը ուրեմն միշտ կարող է իմանալ իւրաքանչիւր նոր գոյացած նիւթի բնաւորութիւնը, որովհետեւ նա համոզուած է որ՝ եթէ

4. Քսաններիներորդ (29-դ) փորձում մենք կավիճ վերլուծելով, ներգործելով նրա վերայ քլոր-ջրածնական թթուուտով, ստացանք բնածխական թթուածինը և մի ուրիշ նիւթ, որը գործ էինք ածել ջուրը ծծելու համար 20-դ փորձում և որը կոչւում է կրածնային քլորուկ. ահա այդ գործողութեան հաւասարութիւնը.




5. 30-դ փորձում մենք վերլուծելով սնդիկի կարմիր թթուուկը (տաքացնելով նրան) ստացանք թթուածին և սնդիկ. այս փոփոխութիւնը կարելի է նշանակել հետեւեալ Փօրմուլով.




սնդկային թթուուկ=սնդիկ և թթուածին:

6. Երեսունեւերկուերորդ (32-դ) փորձում երբ մենք ներգործեցինք կապոյտ քարի կամ պղնձական ծծմբատի վերայ մաքուր երկաթով, ստացանք մաքուր պղինձ և մի ուրիշ նիւթ, որը կոչւում է կանաչքար կամ երկաթական ծծմբատ, ահա այս փոփոխութեան Փօրմուլը:




այդ նկատի էութիւնը նա մի անգամ ուշադրութեամբ որոշեց և իմացաւ թէ ինչ քանակութեամբ են միացել իրար հետ նորաբաղադրիչ մասերը, ուրեմն նա այդ հարցը վճռեց ընդ միշտ, որովհետեւ քիմիական միաւորութիւնը միշտ կատարւում է միենոյն և անփոփոխ օրէնքների համաձայն:

7. Քառասունեւչորսերորդ (44-դ) փորձում մենք ներգործելով երկաթի խարսուածքի վերայ ջրախառն ծծմբական թթւուառո՞ւ ստացանք ջրածին և երկաթական ծծմբատ: Ահա այս փոփոխութեան ֆորմուլը




երկաթ և ծծմբ. թթւուառ = երկաթ. ծծմբատ և ջրած.

8. Քառասունեւհնգերորդ փորձի (45-դ) երկրորդ մասը կարելի է նշանակել հետեւեալ կերպո՞ւ



8. Քառասունեւվեցերորդ փորձում (47-դ) մենք մագնէզիան տաքացնելով ծծմբական թթւուառի հետ՝ ստացանք մագնիոնական ծծմբատ կամ անդիական աղ (դառն համ ունի) և ջուր. ուրեմն կարող ենք այսպէս նշանակել այդ փոփոխութիւնը՝



Մի քանի նկատուի թիւններ գործիքների գործառնութեամբ են պարզաբեր անելու ՄԱՍԻՆ

1. Խւրաքանչիւր փորձ մինչև դասատան մէջ ցոյց տալը պէտք է վաղօրօք անել և նույտութեամբ կատարել այն ամենը, ինչ որ գրուած է նորա մասին:

2. Խնչպէս դասախոսելու ժամանակ անհրաժեշտ է աւանդել պարզ կերպով, նոյնպէս և փորձը կատարելու ժամանակ անհրաժեշտ է մաքրութիւն, խնամք, ճշտութիւն:

3. Փորձի համար հարկաւոր իրեղէնները պիտի դասաւորել սեղանի վերայ այնպէս, որ փորձի միջոցին ոչ շփոթուէք և ոչ էլ ուշանաք *):

4. Դասից յետով պէտք է սրբել և մաք-

*) Քարիդէյ, անգլիացւոց երևելի քիմիկոս և փիզիկոսը, փորձական դասախոսութիւնների մեծ ուսուցիչը, միշտ դասի համար հարկաւոր փորձերին մի քանի ժամ էր նույիրում նրանց պատրաստելու համար. ոչ մի մանրամասնութիւն նա զանց չէր առնում, եթէ այդ մանրամասնութիւնը կարող էր աղդել փորձի յաջողութեան վերայ. նա մինչև անգամ փորձում էր բոլոր անօթների խցանները և նայում էր թէ արդեօք նրանք չուտ են բացւում, որպէս զի փորձի ժամանակ չուշանար:

ըել գործիքները և կարգով դնել պահարանում։
Թթւուտներից շատերը, մանաւանդ բորբակա-
կան և ծծմբական թթւուտները, վտանգաւոր
կերպով կծու են։ Լուսածինը վտանգաւոր է
իւր այրեցողականութեան պատճառով։ բացի
դրանից այդ նիւթերը և դրանց նման ուրիշ
քիմիական ազդիչները թունաւոր են, այդ պատ-
ճառով բոլոր այդպիսի նիւթերը պէտք է պահուին
առանձին սենեակում՝ աշակերտներից հեռու։

5. Մեծահաստկ և աւելի յառաջադէմ
աշակերտներին կարելի է թուլ տալ, որ իրանք
անեն մի քանի փորձեր, միայն ուսուցչի հսկո-
ղութեան տակ և նրա ներկայութեամբ։

ՓՈՐՉԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Փորձ. Եթէ անօթի բերանը շատ լախ
է, պէտք է փակել ստուարաթղթի (կարգօն)
կտորով, որպէս զի արտաքին օդը մուտք չու-
նենալ. այլապէս ճրագի այրուելը կը շարու-
նակուի։

3. Փորձ. Կարծում եմ, որ աւելի լաւ կը լի-
նի, եթէ կծու նատրոնը փոխանակ անօթի վերին
մասում դնելու, զետեղենք մի առանձին Ս-աձե-
լսողովակի մէջ և միացնենք այս վերջինն այն
լախ խողովակի հետ, որտեղ այրում է մոմը

և կշռել երկու խողովակները միասին։ Իսկ եթէ
փորձը կազմել այնպէս, ինչպէս նկարուած է,
այն ժամանակ կծու նատրոնը կարող է հալ-
ուել և թափուել ներքե, եթէ խողովակը
նեղ է։

5. Փորձ. Միևնոյնը կարելի է կատարել
և փոքրիկ ապակեալ գլանաձեւ խողովակի մէջ
էլ (պրօբիրհայ). միայն պիտի աշխատել, որ
պղնձի կտորները լաւ տաքանան, եթէ ոչ
նրանց կարմրաշէկ լինելը աննկատելի կը լինի։

6. Փորձ. Լուսածինը կտրելիս շատ զգոյշ
պիտի լինել և անպատճառ ջրի տակ. ինտոյ
չորացնելու ժամանակ նոյնպէս պիտի խնամ-
քով վարուել և չոր դանակով կամ փոքրիկ
ունելիքով։

8. Փորձ. Զմեռը երբ լրացը քիչ է՝ այդ
գժուարութեամբ է յաջողւում։

12. Փորձ. Ի՞նչպէս պիտի լցնել Գրովէի
մարտկոցը (բատտարեյ): Վերցըք կէս շիշ ջուր
և ածէք վերան փոքր առ փոքր երեք ունց
թունդ (երնուկոյ) ծծմբական թթւուտ ու
խառնելուց ինտոյ թողէք, որ այդ հեղուկը
սառչի։

Յետոյ ուշադրութիւն դարձրէք գործիքի
մետաղեալ մասերի վերայ։

Որպէս զի այդ մասերը փայլուն լինին,

պէտք է նրանց մաքրել մի այնպիսի թղթով,
որի վերայ կպցրած է աւագ:
Ծակոտ բաժակները սպիտակ ոսկու հետ
միասին (ոլատինա) դրեցէք կաւէ բաժակների
մէջ և լաւ ամրացրէք:

Զրախառն ծծմբական թթւուտը, որը
արդէն պատրաստել էք, ածէք կաւէ բաժակ-
ների մէջ և լցրէք (ոչ բոլորովին). իսկ ծա-
կոտ բաժակների մէջ զգուշութեամբ և ձա-
գարի միջոցով ածէք թունդ բորակական թըժ-
ւուտ և լցրէք:

Ալժմ մարտկոցը պատրաստ կարելի է հա-
մարել: Փորձերից յետոյ, Եթէ միայն մարտկոցը
քիչ ժամանակ է գործածութեան մէջ եղել,
ծծմբական թթւուտը կարելի է ածել մի ա-
ռանձին ամանի մէջ և բորակական թթւուտը
մի ուրիշ նոյնպէս առանձին շիշի մէջ. հակա-
ռակ դէպքում, Եթէ մարտկոցը շատ ժամա-
նակ է եղել գործածութեան մէջ, պէտք է երկու
թթւուտն էլ բոլորովին դէն ձգել:

Ծակոտ բաժակները և ցինկը պէտք է
թողնել ամբողջ գէշերը ջրի մէջ և յետոյ ար-
դէն իւր տեղը դնել: Եթէ ցինկը թշոց է պատ-
ճառում (թթւուտի մէջ ընկղմուած ժամանակ)
մինչեւ մարտկոցի լարերը միացնելը, այն ժա-
մանակ ցինկը նորից պէտք է ամալգամացնել:

Այս վերջին գործողութիւնը կատարում են հե-
տեւեալ կերպով.—ցինկի մակերեսով թը լուանում
են քլորջրածնական թթւուտով և յետոյ ա-
ծում են նրա վերայ մի քիչ սնդիկ թթւուտի
հետ միասին. մի քանի անգամ կը կնելուց յե-
տոյ՝ ցինկը կը դառնայ փայլուն և չի ներ-
գործի ջրախառն ծծմբական թթւուտի վերայ,
քանի որ մարտկոցի թելերը չեն միացրած:

14. Փորձ: Նատրիոնի և սնդիկի միանալու
ժամանակ միշտ առաջանում է մի թեթև,
բայց բոլորովին անվտանգ ճայթումն. սնդիկի
քանակութիւնը միշտ պէտք է 5 անգամ աւելի
լինի նատրիոնից:

15. Փորձ: Ամենից լաւն է վաղօրօք խառնել
ծծմբական թթւուտը ջրի հետ (1 ծաւալը
6-ի հետ). Թթւուտը պիտի ածել ջրի վերայ
բարակ հոսանքով և խառնել:

20-րդ Փորձ: Ա խողովակի և նորա գըն-
դակի փոխարէն կարելի է վերցնել և մի ու-
րիշ, միայն լայն խողովակ դժուարահալ ապա-
կուց առանց գնդակի և միացնել նրան Է խո-
ղովակի հետ: Եթէ պլնձական թթւուկը վեր-
ցնենք կէտ ունցից պակաս, այն ժամանակ առա-
ջացած ջրի կշիռը շատ փոքր կը լինի: Եթէ փորձը
վերջացաւ՝ վերականգնած մաքուր պղինձը նո-
րից կարելի է թթւուացնել, Եթէ թողնենք որ

նրա վրայով անցնի արտաքին օդը այն թիթեղի կժի միջոցով, որը մենք գործածեցինք Յ-դ փորձի հաֆար. բայց միևնուն ժամանակ մենք պիտի շարունակենք տաքացնել պղինձը: Առաջացած թթւուկը կըստանալ իւր նախկին կշիռ և նորից կարելի է գործածել, եթէ փորձը կրկնելու լինենք:

34-ր Փորձ: Որպէս զի ակներև լինի այն հանգամանքը, որ թթւուանալուց մի մարմին ծանրանում է, պէտք է մագնիսը շատ լաւ լինի, երկաթէ փոշին շատ մանր և կշիռքը շատ զգալուն: Միևնունցոյց տալու համար գործածած մի ուրիշ միջոցը լիշուած է վերև, երբ վերականգնած պղինձը տաքացնում են օդի մէջ:

36-ր Փորձ: Որպէս զի գազը շարունակ կերպով ալրուի խողովակի ծալրին՝ պէտք է մի քիչ վարժուել:

40-ր Փորձ: Պէտք է զդուշանալ, որ քլորական գազը ըլ տաքածուի սենեակի մէջ:

52-ր Փորձ: Փողակ (պայլինայ տրյուճա) գործածելիս օդը պիտի փշել թշերի միջոցով և ոչ թոքերով և այնպէս պիտի ուռցնել թշերը, որ հարկաւոր ժամանակը կարելի լիներ շունչ առնել քթով:

ՇԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

1) Կառչուկ (խէժ կամ եղջերախէժ—Հնդկացւոց խօսք է և նշանակում է ծառի հիւթ) — կաթնային հիւթ է և ստացւում է Բրազիլիայում, Գիլիանում (Հարաւային Ամերիկա), Ճաւայում, Սինդապուրում (Հարաւային Ասիա) և մի քանի ուրիշ տեղերում շատ ծառերից, մանաւանդ Jatropha elastica և Hevea guianensis կոչուած բոյսերից, այդ հիւթը սկզբում ստացած ժամանակ՝ թանձր հեղուկի պէս է, բայց յետոյ երբ որ չըրացնում են և ենթարկում են զանազան գործողութիւնների, անդանում է և գառնում է սովորաբար թխագոյն: Կառչուկը օդի մէջ չէ փոխւում, կակուզ է և ճկուն, անթափանցելի է (ջրի համար) և չափազանց տուածքական, նա մօտաւորապէս 150 տարի է, որ յայտնի է Եւրոպայում: Գործ է ածւում բազմաթիւ իրեղէնների համար:

2) Լոռագեղը մի կապոյտ ներկ է, որը ստանում են բոյսերից (Lecanora tartarea, Rocella Tinctoria և մի քանի ուրիշ բոյսերից, որոնք ընդհանրապէս պատկանում են Քերաքների տեսակին (լիտայ): Այդ կապոյտ ներկը թթւուտի աղդեցութիւնից կարմում է. այդ յատկութեան հիման վերայ կապոյտ լոռագեղով ներկուած ծծող թուղթը միշտ գործ է ածւում, երբ կամենում են իմանալ թէ մի որ և է նիւթ թթւուտ է, թէ ոչ:

3) Ջրածինը՝ (նոյնպէս և թթուածինը և բորակածինը) գիտնականները (Այլշտէ և Պիկտէ) արդէն խտացրել են, այսինքն գազային վիճակից՝ հեղուկ և մինչև անգամ պինդ վիճակի են փոխել ահազին մնջողութեան (650 մթնոլորտ) և շատ ստոր բարեխառնութեան (-140°) միջոցով։ Այն ժամանակ տեսան որ ջրածինը՝ հեղուկ և պինդ դրութեան մէջ՝ իւր յատկութիւններով բոլորովին նման է մետաղի՝ այնպէս որ իսկապէս մետաղների թւումը պիտի համարուի, իսկ թթուածինը և բորակածինը մետաղի յատկութիւններ չունին։

4) Մի ժամանակ կարծում էին որ ամենայն մի թթուուտի համար անհրաժեշտ է, որ թթուածին լինի, բայց այժմ յայտնի են բազմաթիւ այնպիսի թթուուտներ, որոնք չեն պարունակում թթուածին, օրինակ՝ քլոր ջրածնական թթուուտը (соляная), և լի չոլորիստովодородная кислота) դա բաղկացած է ինչպէս ցոյց է տալիս ինքը խօսքը՝ քլորից և ջրածնից։ Ուրեմն քլորջրածնական թթուուտի մէջ թթուածինը կայ, բայց այնուամենայնիւ նա ունի թթուուտների բոլոր յատկութիւնները, նմանապէս և ծծմբաջրածնական (сърнистый водород), եօդ ջրածնական կամ մանիչաջրածնական (iodистоводородная кислота) և այլն։

Բայց այժմ, ընդհակառակ, կարծում են որ ամենայն մի թթուուտի անհրաժեշտ մասը ջրածնն է, և թթուուտի այդ ջրածինը այն յատկութիւնը ունի որ տեղապիտուումէ՝ մասամբ կամ ամբողջապէս ուրիշ մետաղի հետ, այսինքն մի ուրիշ մետաղ կարող է նրա տեղ ըրունել, դուրս հանելով նրան թթ-

ուտից։ Այն ժամանակ, ուրեմն, կը ստանանք մի այնպիսի թթուուտ, որի ջրածնի տեղը բունուած է ուրիշ մետաղով. այսպիսի միաւորութիւնը կոչւում է աղ, օրինակ՝ եթէ քլորջրածնական թթուուտը խառնենք նատրոնական բնածխատի հետ (օճա), այն ժամանակ քլորջրածնական թթուուտի ջրածնի տեղը կը բունի բնածխատի նատրիոնը և մենք կը ստանանք հասարակ աղ և բնածխական թթուուտ։ (Ասած կարելի է նշանակել և նշանակում է հետևեալ կերպով։

2HCl (քլորջրածն. թթ.) + Na_2CO_3 (նատր. բնածխատ) = 2NaCl (հասարակ աղ) և H_2CO_3 (բնածխական թթուուտ). այսուեղ, ինչպէս տեսնում էք, ջրածինը և նատրիոնը փոխեցին իրանց տեղերը։

Բայց որովհետև թթուածին պարունակող թթթուուտները բաղմաթիւ են և թթուածնի քանակութիւնը նրանց մէջ տարբերում է՝ մէկի մէջ աւելի շատ է, միւսի մէջ աւելի քիչ՝ այդ պատճառով մենք, ինչպէս արդէն ընդունուած է հայր Միխարեանների նախաձեռնութեամբ (2. Քաջունի) և մեր կարծիքով բաւականին յաջող եղանակով—մէկ թթուուտը միւսից որոշելու, զանազանելու համար գործ ենք ածում՝ միքանի մասնիկներ՝ ալպն, ային, ենթա եւ վերա։ Ական մասնիկով վերջանում են այն թթուուտները, որոնք բովանդակում են աւելի շատ թթուածին (ուռւ. ուռ, Քրանս.—իզու). օրինակ՝ քլորական, ծծմբական (սърнистый кис.), բորակական (азотная кис.), և այն թթուուտներ, իսկ եթէ միւսոյն նիւթը կադմում է և մի երկրորդ թթուուտ և այդ թթուուտի թթուածին քանակութիւնը աւելի քիչ է, քան առա-

զին տեսակ թթւուտների, այն ժամանակ այդ երկորդ տեսակ թթւուտը վերջանում է այն մասնիկով. օրինակ, ծծմբային թթ. (ոռւսերէն իտայ մասնիկը, ֆրանս.—eux մասնիկը)—շնչրիտայ կու., քլորային, բորակային և այլն:

Կան և այնպիսի թթւուտներ (սրանց թիւը սակաւ է), որոնց մէջ թթուածինը աւելի շատ է քան ական վերջաւորութիւն ունեցող թթւուտների մէջ, այդ պատճառով այս վերջինների սկզբն աւելացնում են վերա մասնիկը. օրինակ՝ վերաբրուական թթւուտ (ֆրանս. per մասնիկը—acide perchlorique): Իսկ երբ թթուածին քանակութիւնը աւելի քիչ է, քան այն վերջաւորութիւն ունեցող թթւուտներինը, այն ժամանակ աւելացնում են սկզբից ենթա մասնիկը. օրինակ, ենթաբրուային թթ. (ֆրանս. hypo մասնիկը—hypochloreux):

Ոռւսաց լեզուի մէջ, ինչպէս արդէն նկատեցինք, ընդունուած է հայ՝ ուայ, ուու ուու մասնիկով վերջացնել այն թթւուտը, որը բովանդակում է ամենամեծ աստիճան թթուածին (մեր ական և մասմբ վերա մասնիկները). օրինակ, շնչրայ, ազուայ, խլորհայ (մեր վերաբրուական), և այլն թթւուտներ: Աւելի քիչ թթուածին պարունակող թթւուտը, բայց աւելի շատ, քան այն վերջաւորութիւն ունեցող թթւուտը, ոռւսերէն վերջանում է օսատայ (օյ, օյ) մասնիկով, մեզանում ենթա մասնիկով սկզբից և ական մասնիկով վերջից. օրինակ, ազուատայ եւ. ենթաբրուական թթւուտ, ես աւելի քիչ թթուածին պարունակող թթւուտը մեզանում ուզեմն լը վերջանայ այն մասնիկով, իսկ ոռւսաց լեզում

իտայ (օյ, օյ) մասնիկով. օրին. բորակային թթւուտն ոռւսերէն ազուատայ եւ. և այն. և վերջանէիս բուրից քիչ թթուածին պարունակող թթւուտը մեզանում վերջանում է սկզբում ենթա, իսկ վերջից այն մասնիկներով, ոռւսերէն այդպիսի թթւուտները վերջանում են օսատայ (օյ, օյ) մասնիկով. օրինակ, ենթաքլորային թթւուտ, ոռւսերէն չլորիօսատայ կուլոտա:

Յամննայն գէպս բոլոր այս թթւուտներից ամենագլխաւորները նրանք են, որոնք ական և այն վերջաւորութիւն ունին, որովհետեւ աւելի տարածուած են, իսկ այս գրքում անելի ունին զրեթէ բացառապէս ական վերջաւորութիւն ունեցող թթւուտները՝ ծծմբական, բորակական, բնածխական, և այլն, իսկ ջրածնական թթւուտներից (այսինքն այնպիսի թթւուտներ, որոնք թթուածին չեն բովանդակում) քլորջրածնական և ծծմբաջրածնական թթւուտները:

Եթէ թթւուտներից կամ մի որ և է այլ քիմիական միաւորութիւններց հետացնենք այն ջուրը, որը նրանց հետ քիմիապէս միացած է, այն ժամանակ կստանանք այնպիսի մարմններ, որոնք կոչւում են անջրուտ կամ անհիդրիտ (անցրիդ): Օրինակ, եթէ ծծմբական թթւուտից, որի նշանն է H_2SO_4 կամ բորակական թթւուտից (HNO_3) հետացնենք ջուրը՝ (H_2SO_4 (ծծմբական թթւուտ) $- H_2O$ (ջուր) $\equiv SO_3$ (ծծմբական անջրուտ)), կըստունանք ծծմբական անջրուտ (SO_3) կամ բորակական սնջրուտ (N_2O_3): Եւ ընդհակառակը, եթէ այս վերջինութիւնը պատճենական է:

ներին աւելացնենք ջրի մի մասնիկ, նրանք նորից թթւուտ կը դառնան:

5. Կալաքարները (պելօն) կամ աղկազմերը (основанія) գտանագոյն, կծու և միզահամ միաւորութիւններ են, հեշտութեամբ միանում են թթւուտների հետ և կազմում են աղեր: Նրանք ընդանրապէս բաղկացած են մետաղից եւ թթուածնից, ուրեմն մետաղական թթւուկ (основные окислы). օրինակ, նատրիոնական թթւուկ (Na_2O), կալիոնական (K_2O), կրածնական (CaO), և այլն. սրանք բոլորն էլ աղկազմեր կամ կալաքարներ են: Այս միաւորութիւնների ընդհանուր անունը իսկապէս աղկազմ է: Կալաքար կոչւում են այն աղկազմերը, որոնք լուծում են ջրի մէջ, որոնք քիմիապէս արդէն միացած են ջրի հետ և որոնք զօրեղ աղկազմական յատկութիւններ ունին, օրինակ՝ կարմիր լոռաղեղը իսկոյն կապոյտի են փոխում: Դրանցից գլխաւորներն են՝ նատրոնական կալաքար, կալիոնական, կրածնական (հանգցրած կիր) և աւշակ: Ուրեմն եթէ համեմատենք աղկազմերը անջրուտների կամ անջուր թթւուտների հետ, այն ժամանակ կալաքարները կարելի են նմանեցնել թթւուտներին: Ինչպէս անջրուտից թթւուտ կստանանք, եթէ միացնենք անջրուտը ջրի հետ, նոյնպէս և աղկազմից կալաքար կստանանք, եթէ աղկազմը ջրի հետ միացնենք (օրինակ՝ չը հանգցրած և հանգցրած կիրը): Այդ պատճառով կալաքարները և թթւուտները կարելի են կոչւում են ջրատ մարմիններ կամ հիդրատներ (гидраты), այսինքն ջուր բովանդակող մարմիններ:

6) Աղերը առաջանում են, ինչպէս արդէն առաջինք, թթւուտների և աղկազմերի կամ կալաքարների իրար հետ բիմիապէս միանալուց, իրը աղը առաջացել է ական վերջաւորութիւն ունեցող թթւուտից, այնժամանակ՝ այդ աղը ինքը վերջանում է առ մասնիկով. օրինակ, երբ ծծմբական կամ բնածխական կամ բորակական թթւուտները միանում են նատրոնական թթւուկի հետ, ստացւում են հետեւալ աղերը՝ նատրոնական ծծմբատ (соль), նատրոնական բնածխատ (сода) և նատրոնական բորակատ (բորակ—азотно-натриевая соль или селитра), ինչպէս ցոյց են տալիս հետեւալ նշանները՝
 H_2SO_4 (ծծմբ. թթւ.) + Na_2O (նատրոնական թթւուկ) = Na_2SO_4 (նատր. ծծմբատ) + H_2O (ջուր):

2) H_2CO_3 (բնած. թթւու.) + Na_2O (նատրոնական թթւ.) = Na_2CO_3 (նատր. բնածկատ) + H_2O (ջուր):

3) HNO_3 (բորակատն թթւու.) + Na_2O (նատր. թթւուկ) = NaNO_3 (նատր. բորակատ) + H_2O (ջուր):

Այս նշանները թող չը շփոթեն ընթերցողին, ևթէ նա դժուարութեամբ է ըմբռնում դրանց միտքը, որպէս հետեւ մը անդամ էլ դրբի վերջերքում կը բացատրուին:

Այն աղերը, որոնք առաջացել են ային վերջաւորութիւն ունեցող թթւուտներից, վերջանում են այդ մասնիկով. օրինակ, նատրոնական ծծմբական կոչուած աղը (соль) առաջացել է ծծմբատից թթւուտից և նատրոնական թթւուցից:

կից, ինչպէս երևում է հետևեալ քիմիական ֆօրմուլից՝ H_2SO_3 (ծծմբային թթւուտ) + Na_2O (նատր. թթւուլվ = Na_2SO_3 (նատրոն. ծծմբայի) + H_2O (ջուր) և այլն:

Իսկ երբ աղը առաջացել է ջրածնակն թթւուտից, այն ժամանակ նա վերջանում է ուկ մասնիկով. օրինակ, կրածնական քլորուկ (хлористый кальций), նատրոնական քլորուկ (натриевая соль хлористого натрия), պղնձական ծծմբուկ (сърнистая медь). Կթէ վերցնենք մի որ եէ ջրածնական թթւուտ, օրինակ քլորջրածնական թթւուտ (хлористо-водородная кислота), որի նշանը կը լինի HCl (քրած. քլոր) և միացնենք նատրոնական քլորուկ (NaCl) կամ նատրակ աղ, և այլն: Այս աղերը բաղկացած են ուրեմն մի որ և է մետաղից (արծաթ, պղինձ, նատրիոն, և այլն) և ոչ-մետաղից՝ (մետաղակերպ տարրից) քլոր, ծծումբ, և այլն: Օրինակ, արծաթի քլորուկը բաղկացած է արծաթից և քլորից. պղնձի ծծմբուկը բաղկացած է պղնձից և ծծմբից, և այլն:

7) Փլինառազ գործ է ածւում օպտիկական դուծիքների համար և զօրեալ բեկանող և ցրող յատկութիւններ ունի:



ՑԱՆԿ

Կրակ — Օդ — Գուր — Քող

Երես

1. Յառաջաբան	•	3
Կ Ր Ա Կ		
2. $\text{H}^{\circ}\text{N}_2$ է կատարում ծրագը այրուելու ժամանակ	•	4
3. Ջրագը այրուելիս գոյանում է քացի ընածխական թթւուտից եւ մի ուրիշ նիւթ-ջուր	•	7
4. § II. Ծրագը այրուելիս ոչնչ չէ կորչում	•	10
5. „ $\text{H}^{\circ}\text{N}_2$ իմացանք	•	14
6. Քիմիական միատրութիւնների ժամանակ տաքութիւն է առաջանում.	•	15
7. $\text{H}^{\circ}\text{N}_2$ իմացանք	•	17

Օ Դ

8. § III Օդի մասին	•	18
9. $\text{H}^{\circ}\text{N}_2$ է պարունակում օդի մէջ	•	18
10. $\text{H}^{\circ}\text{N}_2$ է կատարում միք շնչառութեան ժամանակ	•	21
11. $\text{H}^{\circ}\text{N}_2$ ազդեցութիւն ունին բոյսերը օդի վրայ	•	25
12. Բոյսերի ածումբ	•	27
13. Կննդանիների եւ բոյսերի ազդեցութիւնը օդի վրայ	•	29

Զ Ո Ւ Ր

14. § VI Ի՞նչից է բաղկացած ջուրը.	31
15. „Մենք կարող ենք ջրից ջրածին ստանալ եւ ուրիշ միջոցներով	34
16. „Ի՞նչպէս կարելի է հաւաքել ջրածինը	35
17. § VII Ուրիշ միջոցներով ստացած ջրածին	37
18. „Ջրածինը այսեղողական է եւ աւելի թեթև է քան օդը	40
19. Ջրածնի այրուելու ժամանակ է ջուր գոյանում	42
20. § VIII Ջրի բաղադրութիւնը	44
21. § IX Ի՞նչ զանազանութիւն կայ ծփ ջրի եւ քաղցր առթիրի ջրի մէջ	50
22. Աղի գոյութիւնը իմանալու միջոցը	52
23. Լուծումն եւ բիւրեղացումն	53
24. § X Անձրեւը վերաթուրած ջուր է	56
25. Կախուած եւ լուծուած մնանիկներ.	57
26. Կոշտ եւ կակուլ ջուր	58
27. Ի՞նչն է ջրի կոշտութեան պատճառը	59
28. § XI Կոշտ կամային ջուրը եռանալուց դառնում է կակուլ.	60
29. Ջրի կոշտութիւնը զանազան պատճառներ ունի.	62
30. Բաղադրների մօտ հոսող ջուրը.	63
31. Ջուրը կարող է լուծել եւ զագեր	64
	Հ Ո Ղ
32. § XII Հողի մասին.	65

33. „Կամից պնածիսական թթուուտ ստանալը.	67
34. § XIII Թթուածնի ստանալը	70
35. „Թթուանալուց մետաղները ծանրանում են.	72
36. Հողային նիւթերի մէջ մետաղներ կան.	74
37. § XIV Ի՞նչ է բնածուխը	75
38. Քարածիսային զազի պատրաստելը	77
39. Քարածիսի զործածումը	80
40. § XV Քարածիսային զազը եւ բոցը	81
41. Քարածիսահանքերի մէջ պատահած ծայթումները, նրանց պատճառը եւ առաջն առնելու միջոցը	83
42. § XVI Պարզ մարմիններ եւ բարդ մարմիններ	86
43. Բարդ մարմիններ	87
44. Պարզ մարմիններ	88
	Ո Չ-ՄԵՏԱՂՆԵՐ
45. § XVII Թթուածին.	92
46. „Ջրածին.	94
47. „Բորակածին.	95
48. „Բնածուխ կամ ածխածին	98
49. § XVIII Քսր.	101
50. „Ժժումն	104
51. „Լուսածին (Փօսֆօր)	105
52. „Գայլխազածին (Սիլիկոն) (Կրեմնայ)	108
	ՄԵՏԱՂՆԵՐ
53. § XIX Երկաթ.	109

54.	"	Ալիւմինիոն (Ալյոմինի)	114
55.	"	Կրածին կամ կաւցիոն.	
	(կալցիй)	.	115
56.	"	Մագնիոն (Մագնի.)	117
57.	§ XX	Նատրիոն (Նատրիյ)	119
58.	"	Կալիոն (Կալիյ)	121
59.	§ XXI	Պղինձ.	124
60.	"	Ցինկ (Ցինկъ)	125
61.	"	Կլայթկ.	126
62.	"	Արծիճ.	128
63.	"	Մնդիկ.	130
64.	"	Արծաթ.	131
65.	"	Ռուկի	132
66.	§ XXXII	Քիմիական որոշ միաւորութիւններ.	134
67.	§	Պարզ մարմինների համեմատական թուերը.	137
68.	§ XXXIII	Զանազան բայց որոշ քիմիական միաւորութիւններ.	141
69.	"	Քիմիական հաւասարութիւնների նշանակութիւնը.	144
		Մի քանի նկատողութիւններ գործիքների եւ փորձեր անելու մասին.	151
		Մի քանի նկատողութիւններ նաև լուսնթաց փորձերի մասին.	152
70.	Ժանօթութիւններ	Թարգմանչեց	157



4358

187

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0068953

